ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍԱՄՍՈՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԹԵՄԱ՝ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1965-1990 թթ.)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ժ.01.09. - «Գրադարանագիտություն, մատենագիտություն և արխիվագիտություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱՐԱՄԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

Ներածություն.....3
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ–ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1965-1980ԹԹ., ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....13
1.1. Գրադարանային-մատենագիտական գործունեության էությունը և զարգացման գործոնները (տեսական հարցերի քննական վերլուծություն) 13
1.2 Գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հարցերը գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման մեջ.....45
ԳԼՈՒԽ 2. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1965 – 1990 ԹԹ.....68
2.1. Գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացումը Հայաստանում 1965-1980 թվականներին.....68
2.2. Գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման ուղղությունները և հեռանկարները Հայաստանում 1981-1990 թվականներին.....87
Եզրակացություն.....117
Գրականության ցանկ.....120

Ներածություն

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Ատենախոսական աշխատանքը նվիրված է գրադարանագիտական և մատենագիտական կարևորագույն թեմաներից մեկին՝ Հայաստանում 1965-1990 թթ. գրադարանային-մատենագիտական գործի զարգացման ուսումնասիրությանը: Այն մի կողմից կապվում է խորհրդային ընդհանուր գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական մտքի, մյուս կողմից՝ նշված գիտական ուղղությունների ձևավորվման ու զարգացման առանձնահատկությունների դրսևորումների հետ Հայաստանում: Տեսական և գիտակազմակերպչական նշանակության հիմնարար այդ հարցերի քննական վերլուծությունն էլ դարձել է մեր ուսումնասիրության առանցքը:

Ակնհայտ է, որ Խորհրդային Միության կազմում եղած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել էր պետական կառավարման որոշակի համակարգ, որն օժտված էր տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության զարգացման համապատասխան բազայով և ենթարկվում էր միասնական չափորոշիչների: Երկրում լայնորեն իրականացվում էր գաղափարախոսական, գիտակրթական և տեղեկատվական աշխատանքի քաղաքականությունը, որը կողմնորոշում էր նաև գրադարանային գործի և մատենագիտական ոլորտի մասնագետներին դեպի նոր արժեքների ստեղծում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ստեղծվել էին բազմալեզու և բազմաբնույթ աշխատություններ, որոնք կարևոր հիմք էին գրադարանային-մատենագիտական գործի հետագա զարգացման ու շարունակության բնույթ:

Թեմայի արդիականությունը և գործնական կիրառությունը:

Ատենախոսությունն արդիական է նրանով, որ ցույց է տրվում խորհրդային ընդհանուր գրադարանագիտության և մատենագիտության, հետևապես նաև՝ Հայաստանում գրադարանային գործի և մատենագիտության ձևավորման ու համակարգային զարգացման կախվածությունը սոցիալ-տնտեսական, գաղափարաքաղաքական և մշակութային փոխզարգացումներից: Սակայն կրելով խոր ազդեցություն՝ Հայաստանում ձևավորվում ու նոր հիմքերի վրա են դրվում ազգային մատենագիտության տեսական հարցերի մշակումն ու դրանց գործնական զարգացումները, որոնք զգալի դեր ունեցան հայալեզու տպագիր գրքի (Ազգային գրադարան) և ձեռագիր գրքի (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան) մատենագիտական ցանկերի ստեղծման գործում:

Թեման արդիական է նաև նրանով, որ փորձ է արվել ատենախոսության մեջ քննարկվող բազմազան հարցերին, տալ համակարգային լուծում:

Նորագույն ժամանակներում, երբ մեծ կարևորություն է տրվում հայ ձեռագիր և տպագիր գրականության պահպանման ու օգտագործման խնդրին, ավելի է մեծանում անցյալի մատենագիտական ժառանգության ընդհանրացման հարցերը նորովի գնահատելու և ապագային փոխանցելու անհրաժեշտությունը: Այդ տեսանկյունից էլ թեմայի արդիականությունը անվիճելի է դառնում:

Ատենախոսության նյութերը կարող են կիրառվել գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական հատուկ և ընտրովի դասընթացներում, ինչպես նաև գրադարանային գործի և մատենագիտության պատմական, տեսական, մեթոդական և գործնական աշխատանքներ կատարելու նպատակներով: Դրանք կարող են օգտակար լինել նաև գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական հարցերով հետազոտողների համար և նպաստել բուհական հաստատություններում համապատասխան կրթական ծրագրերով առարկաների յուրացմանը:

Ուսումնասիրության առարկան և նպատակը:

Ուսումնասիրության առարկան Հայաստանում գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրություններն են՝ ըստ սոցիալական գործոնների ազդեցության, ըստ բովանդակության՝ գրադարանային գործի, և ըստ տեսակների՝ մատենագիտության զարգացման համատեքստում:

Աշխատանքի նպատակն է ընդհանուր գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության համատեքստում հավաստի աղբյուրների, օրենսդրական փաստաթղթերի և վիճակագրական տվյալների հիման վրա ուսումնասիրել գրադարանային-մատենագիտական գործի զարգացման ուղին Հայաստանում 1965-1990 թթ., վերլուծել գրադարանային-մատենագիտական գործունեության բազմակողմանի դերն ու նշանակությունը Հայաստանի գիտակրթական, մշակութային և հասարակական կյանքում:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման սոցիալական հիմունքները՝ պայմանավորված պատմական տվյալ ժամանակաշրջանով:

2. Բացահայտել գրադարանային-մատենագիտական գործի էությունը և զարգացման գործոնների առանձնահատկությունները:

3. Հիմնավորել գրքի (անկախ դրսևորման ձևերից), գրադարանի և ընթերցանության տեղն ու հումանիտար դերը հասարակական կյանքի զարգացման մեջ:

4. Վերլուծել գրադարանային-մատենագիտական կրթության զարգացումը, ցույց տալ դրա կատարելագործման հիմնական ուղիները:

5. Լուսաբանել խնդրո առարկա ժամանակաշրջանի գրադարանային գործի և մատենագիտության զարգացման ընթացքը Հայաստանում՝ ելնելով տպագիր (գեղարվեստական, հայագիտական, երկրագիտական, պարբերական մամուլի, քննադատական և ճյուղային այլ բնույթի) ու ձեռագիր

մատենագիտական հրատարակությունների տեղեկատվա-բովանդակային վերլուծությունից:

6. Հիմնավորել գրադարանային մատենագիտական կենտրոնների գործունեության դերը փաստաթղթային-տեղեկատվական ու սոցիալ-հաղորդակցական համակարգերի ձևավորման ու զարգացման մեջ:

7. Դիտարկել գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հարցերը և բացահայտել արդի գրադարանային-մատենագիտական գործում դրանց զարգացման նոր տեսանկյունները:

8. Կարևորել ու գնահատել հայ և օտարազգի գիտնականների ու մասնագետների գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական տեսական հայացքների նշանակությունը տեսության և պրակտիկայի փոխազդեցություններում:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:

Ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմք է հանդիսացել համակարգված մոտեցումը՝ գրադարանագիտության և մատենագիտության մեջ ընդունված տեսական-մեթոդական սկզբունքներով: Հետազոտության ընթացքում կիրառել ենք նաև ժամանակագրական, վիճակագրական և սոցիոլոգիական (զրույցի) մեթոդները: Նյութերն ուսումնասիրել ենք գրադարանային գործի և մատենագիտության զարգացման ընթացքի մեջ՝ նկատի ունենալով անցյալի և արդիականության սերտ առնչությունները: Այստեղ մեզ օգնել է նաև համեմատական-վերլուծական գիտական մեթոդը:

Թեմայի մշակվածությունը:

Ատենախոսության թեման ուսումնասիրելիս օգտվել ենք հայերեն և ռուսերեն (ներառյալ անգլերենից ռուսերեն թարգմանված) գրականությունից, հոդվածներից, վիճակագրական բնույթի նյութերից և օրենսդրական փաստաթղթերից:

Գրադարանային գործի և մատենագիտության պատմության, տեսության և մեթոդիկայի հարցերին առնչվող հայ հեղինակների աշխատություններից

կարևորել ենք Ռ. Ա. Իշխանյանի, Հ. Կ. Կոստիկյանի, Գ. Գ. Մկրտչյանի, Հ. Մ. Դավթյանի, Բ. Գ. Մելյանի ուսումնական ձեռնարկները [13, 16, 30, 33, 31]:

Առանձնահատուկ նշանակություն են ունեցել ընդհանուր գրադարանագիտությանը և մատենագիտությանը նվիրված աշխատությունները, որոնք հիմք են դարձել հետազոտական գիտատեսական մեր մոտեցումներում: Դրանցից են Կ. Ի. Աբրամովի և Ն. Ս. Կարտաշովի, Օ. Ս. Զուբարյանի, Օ. Պ. Կորշունովի, Ա. Ն. Վանեեվի, Մ. Յա. Դվորկինի, Յու. Ս. Զուբովի, Յու. Ն. Ստոլյարովի, Վ. Ս. Կրեյդենկոյի, Ռ. Ս. Մատուլսկու, Յու. Պ. Մելենտևի, Վ. Ի. Տերյոշինի, Վ. Ա. Ֆոկեևի, Ա. Ս. Չաչկոյի և Ջ. Խ. Շիրայի ուսումնասիրությունները [53, 99, 70, 71, 55, 61, 62, 85, 86, 87, 69, 74, 76, 94, 95, 97, 101, 102]:

Առանձին խումբ են նաև գրադարանային գործի և պատմությանը նվիրված ուսումնասիրություններն ու գիտաժողովի նյութերը, այդ թվում՝ Ռ. Ա. Իշխանյանի, Գ. Ա. Սուքիասյանի, Կ. Ի. Աբրամովի, Ա. Ա. Բելովիցկայայի, Օ. Ի. Տալալակինի, Ա. Լ. Շապիրոյի գործերը, Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված գիտաժողովի ժողովածուն և այլն [2, 12, 38, 43, 48, 91, 100, 18]:

Գրադարանային-մատենագիտական և տեղեկատվական գործի զարգացման ու ղեկավարման աշխարհայացքային տեսանկյունից հասարակական կյանքի և գիտատեղեկատվական բնագավառների բաղկացուցիչ մասերի կարևոր աղբյուր են դարձել Վ. Գ. Աֆանասևի [45, 44], Բ. Ա. Վինոգրադովի [58] և Ի. Մ. Սուսլովայի [89] աշխատությունները:

Ժամանակակից գրադարանագիտության և մատենագիտության համատեքստում նոր զարգացում են ստացել ֆոնդագիտությունը և փաստաթղթագիտությունը, որոնց ակունքները 1970-80-ական թվականներին՝ գրադարանային ֆոնդերի նկատմամբ ցուցաբերված լուրջ ուշադրության, ուսումնասիրության և գիտատեսական ու մեթոդական մի շարք հրապարակումների մեջ են: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ են

զբաղեցնում Յու. Ն. Ստոլյարովի [85, 87], Օ. Պ. Կորշունովի [50] և Վ. Ի. Տերյոշինի [94] աշխատությունները: Հայ իրականության մեջ փաստաթղթագիտությանը նվիրված առաջին ձեռնարկը լույս է տեսել 2009 թ. Գ. Ա. Սուքիասյանի և Ս. Ս. Բաղդասարյանի ջանքերով [39]:

Որպես ուսումնասիրության օբյեկտ՝ սույն աշխատանքի համար սկզբնաղբյուր են եղել Հայաստանի ազգային, ՀԳԱ-ի հիմնակազմ, ԵՊՀ-ի, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանների, գրապալատի, ինչպես նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի հայ տպագիր գրքին ու ձեռագրերին նվիրված մատենագիտական հրատարակությունները [7, 10, 11, 15, 17, 20, 21, 22, 27, 29, 35, 40, 41] և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի գրադարանային-մատենագիտական գործի զարգացմանը վերաբերող հարցերի ընդհանրացումներում ոչ պակաս կարևոր նշանակություն են ունեցել օրենսդրական, կազմակերպչական, վիճակագրական և հաշվետվական բնույթի հրապարակումներն ու փաստաթղթերը [1, 3, 5, 9, 19, 23, 24, 25, 28, 34, 83, 84, 89, 90, 103, 105, 109, 112, 114, 115, 117, 119, 129, 136, 148, 167]:

Գրադարանային գործի, հատկապես ատենախոսական թեմայի վերջին շրջանի համար վիճակագրական եզակի աղբյուր է դարձել Գ. Ա. Սուքիասյանի հոդվածը [154]:

Գրադարանային-մատենագիտական գործի զարգացման և կատարելագործման կարևորագույն գործոններից են բարձրագույն կրթության զարգացումն ու տվյալ բնագավառի համար մասնագետների պատրաստումը: Հարկ է նշել, որ 70-80-ական թթ. խիստ անհրաժեշտություն է զգացվել գրադարանային-մատենագիտական մասնագիտության էության գիտական բացահայտման և որակավորման հիմնախնդիրների լուծումը: Հետազոտողների աշխատություններում հիմնավորվել է մարդկային գործոնի դերի մեծացումը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում՝ ներառյալ գրադարանային-մատենագիտական ոլորտը:

Հարկ է նշել, որ մասնագետների կողմից առաջադրված խնդիրները բոլոր երկրների համար միանման են, քանի որ դրանք բոլոր երկրներում ունեն «միևնույն» գործառույթները: Դրա համար էլ համապատասխան կրթության պատմության ուսումնասիրումը, ինչպես նաև մասնագետների կատարելագործման ուղիների հայտնաբերումը և հիմնավորումը որոշակի ներդրում է առաջադրված գիտական խնդրի լուծման համար: Նշված հիմնախնդրի վերաբերյալ հրապարակվել են գիտահետազոտական մի շարք աշխատանքներ, որոնցում առկա տարբեր տեսակետները և մեր կողմից հետազոտվող թեմայի վերաբերյալ առաջարկությունները բերված են սույն աշխատանքի համապատասխան բաժիններում:

Հայտնի գիտնականներ Կ. Ի. Աբրամովը, Վ. Ա. Ազարովան, Ա. Ի. Բերգը, Ս. Պ. Գլեբովան, Ե. Յա. Զազերսկին, Ա. Վ. Սոկոլովը, Գ. Ա. Իվանովան, Վ. Ի. Տերյոշինը, Լ. Մ. Իսաչկովան, Օ. Պ. Կորշունովը, Մ. Ս. Սլոբոդյանիկովը, Յու. Ն. Ստոլյարովը, Վ. Վ. Սերովը, Ա. Ս. Չաչկոն [118, 120, 49, 126, 129, 132, 133, 137, 149, 85, 148, 97] և ուրիշներ իրենց ավանդն են ներդրել մասնագիտության մեթոդաբանական սկզբունքների, սոցիալական էության մշակման, նոր տնտեսական պայմաններում գրադարանային գործի և մատենագիտության ուսուցման մեջ: Իսկ գիտնականների մի խումբ՝ Հ. Կ. Կոստիկյանը, Գ. Գ. Մկրտչյանը, Գ. Ա. Սուքիասյանը, Կ. Ի. Աբրամովը, Ե. Ա. Մեդվեդևան, Ն. Ն. Սեմեյկինան, Ա. Յա. Չերնյակը [16, 32, 36, 37, 42, 53, 75, 79, 161, 162] և ուրիշներ, իրենց աշխատություններում նկարագրել են գրադարանային-մատենագիտական բարձրագույն կրթության համակարգի լավագույն ավանդույթները և առաջարկել դրանց զարգացման ու կատարելագործման ապագա ուղիները:

Արտասահմանյան երկրների առաջավոր փորձը միշտ էլ գրավել է խորհրդային և ետխորհրդային մասնագետներին: Նշված ժամանակաշրջանի մասնագետների պատրաստման, ինչպես նաև գիտության զարգացման բաղադրիչները և արտասահմանյան փորձի ընդունելի տեսակետները գիտական

վերլուծման են ենթարկել Ի. Ի. Բելովալովան, Խ. Վ. Լանգը, Ե. Ա. Նաբոտնիկովան, Ե. Ն. Տեոդորովան, Օ. Ի. Տալալակինը [47, 138, 143, 93, 91] և ուրիշներ:

Հստակ է, որ մասնագիտության ընտրության մեջ մեծ դեր ունեն գրադարանների և փաստաթղթատեղեկատվական այլ կենտրոնների հասարակական դիրքը և մասնագետի սոցիալական վիճակը: Հետևապես գրադարանային-մատենագիտական կենտրոնները մասնագետներով ապահովելու հարցերը կամ կադրերի հոսունության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները հատուկ ուսումնասիրման առարկա են նաև այսօր:

Աշխատանքի գիտական նորույթը:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ հայ գրադարանագիտության և մատենագիտության մեջ փորձ է արվում թեմայի ուսումնասիրության սահմաններում ներկայացնել խնդրո առարկա ժամանակաշրջանի գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման ամբողջական ընթացքը: Աշխատանքում ծավալուն կերպով քննական վերլուծության են ենթարկվել գրադարանային-մատենագիտական գործի էությունը և զարգացման առանձնահատկությունները:

Հիմնավորված է, որ գրադարանային-մատենագիտական գործի համակողմանի զարգացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- տեսության և պրակտիկայի փոխադարձ կապի ամրապնդում,
- բարձրագույն մասնագիտական կրթության զարգացում և մասնագետների վերապատրաստում,
- գրքի, գրադարանավարի և ընթերցանության հասարակական դերի ու նշանակության բարձրացում,
- ֆոնդագիտության և փաստաթղթագիտության հարցերի ուսումնասիրում՝ պայմանավորված գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության զարգացումներով,
- մատենագիտական ձեռնարկների համակարգային զարգացում,

- գրադարանի տեսական համակարգի մոդելի ձևավորում ու զարգացում,
- ընդհանուր և ճյուղային մասնագիտական գիտությունների զարգացում,
- գրադարանը որպես սոցիալական ինստիտուտ և տեղեկատվական-տեխնոլոգիական համակարգ,
- գրադարանային-մատենագիտական և տեղեկատվական-տեխնոլոգիական գործունեության դերը սոցիալ-հաղորդակցական համակարգերի զարգացման մեջ:

Խնդրահարույց հարցերի քննական վերլուծությամբ նոր լուծում է առաջարկվել գրականության ընթերցանության սոցիալական և ընթերցողների դասակարգման խնդիրներում: Դրանք նման բովանդակությամբ առաջին անգամ են ուսումնասիրության առարկա դառնում: Շրջանառության մեջ է դրվել հայալեզու և օտարալեզու մասնագիտական հարուստ գրականություն, որի օգտակարությունը խիստ անհրաժեշտ է:

Աշխատանքի փորձաքննությունը:

Ատենախոսության մեջ արծարծված հիմնական խնդիրները, դրույթները և եզրակացություններն արտացոլվել են հեղինակի գիտական հոդվածներում: Աշխատանքում առաջադրված հիմնախնդիրների շուրջ հեղինակը զեկուցումներով հանդես է եկել նաև տարբեր գիտաժողովներում: Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնում (դեկտեմբեր, 2015 թ.) և երաշխավորվել պաշտպանության:

Հետազոտության հավաստիությունը:

Հետազոտության հավաստիությունը ապահովվում է տեսականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ և ուսումնասիրության ժամանակ կիրառված մեթոդներով: Ստացված արդյունքները պրակտիկայում և դասախոսության ժամանակ ներդրվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Հետազոտության հիմնական աղբյուրները:

Հետազոտության հիմնական աղբյուրներ են Հայաստանի ազգային գրադարանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի և ԵՊՀ-ի գիտական գրադարանները, Հայաստանի ԳԱԱ ֆունդամենտալ գրադարանը, Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանը: Օգտվել ենք նաև գրադարանագիտության, մատենագիտության, գրքագիտության և փաստաթղթագիտության վերաբերյալ տեսական գրականությունից, ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքից»:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից (ընդհանուր՝ 167 անուն, որից 102-ը՝ տպագիր գրականություն, 65-ը՝ պարբերական մամուլ):

Առաջին գլուխը (բաղկացած երկու ենթաբաժնից) նվիրված է գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման առանձնահատկություններին 1965-1980 թթ.: Ներկայացված է ինչպես ընդհանուր բնույթի տեսական, այնպես էլ Հայաստանում գրադարանային-մատենագիտական գործի զարգացման տարբեր ոլորտներին վերաբերող գիտագործնական հարցերի քննական վերլուծությունը:

Երկրորդ գլուխը (բաղկացած երկու ենթաբաժնից) նվիրված է Հայաստանում գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման բազմակողմանի ուսումնասիրությանը 1981-1990 թթ.: Այստեղ առանձնահատուկ տեղ է հատկացվել նաև գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հարցերի վերլուծությանը:

Այնուհետև ատենախոսական աշխատանքի վերլուծությունների արդյունքում արվել են կարևոր հետևություններ ու առաջարկություններ, որոնք հանգամանորեն շարադրված են եզրակացությունների մեջ:

Աշխատանքի ծավալը 135 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1965-1980 ԹԹ., ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Գրադարանային-մատենագիտական գործունեության էությունը և զարգացման գործոնները (տեսական հարցերի քննական վերլուծություն)

Խորհրդային շրջանի վերջին տասնամյակների ընդհանուր բնույթի մասնագիտական գրականության մեջ տարբեր տեսանկյուններից անդրադարձ է եղել գրադարանային-մատենագիտական գործի զարգացմանն ընդհանրապես, իսկ մասնագետների մասնագիտական պատրաստվածությանը՝ մասնավորապես: Կան հետազոտություններ, որոնցում տվյալ հարցերը դիտվում են փոխադարձ կապի մեջ՝ մշակույթի և հասարակության զուգահեռ զարգացումների գործընթացում: Հայտնի է, որ գրադարանային-մատենագիտական գործի արդյունավետությունը գլխավորապես պայմանավոված է տեսության և պրակտիկայի փոխադարձ կապով, ինչպես նաև մասնագետների գիտելիքներով, նրանց կարողություններով և ունակություններով, որոնք պարտադիր են ոլորտի աշխատողների համար [33, էջ 172, 16, էջ 199-207, 36, էջ 15-52, 54, 56, 63, 64, 66, 79, էջ 77-79, 92]:

Տվյալ բնութագրումը էական նշանակություն ունի ինչպես գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) գործի առանձնահատ-կությունները, այնպես էլ մասնագիտության էությունն ու սոցիալական դերը պարզելու համար: Գրադարանային-մատենագիտական գործը և տվյալ մասնագիտությունը ձևավորվել են հասարակության զարգացման որոշ փուլում, երբ հասարակական աշխատանքի ու արտադրական հարաբերությունների յուրացումն ու պահանջմունքների տարբերակումը վերածվեց գիտաստեղծագործական գործունեության: Այդ կապի հայտնվելը պատահական չէր, և այն զարգանում էր հասարակական-տնտեսական կյանքի պահանջներով: Եթե հաշվի չառնենք

մասնագիտությանը վերաբերող օրենքների ստեղծումն ու զարգացումը, հնարավոր չէ նաև պատկերացնել տվյալ ժամանակաշրջանի գիտության և պրակտիկայի հետազոտումը, մասնագիտական գիտելիքների բնագավառի և ծավալի որոշումը, նրանց հիմնական ուղղությունները, գործնական ոլորտի զարգացման հեռանկարների կանխատեսումը:

Հաշվի առնելով գրադարանային-մատենագիտական գործի զարգացման առանձնահատկությունները և հետազոտման խնդիրները՝ որպես ելման կետ կարելի է ընտրել «մարդկային գործոնը»: Մարդկային գործոնն ունի բարդ կառուցվածք: Տվյալ գործոնի սահմաններում տարբերվում են մասնագիտական խմբեր, որոնք հակում ունեն ստեղծագործաբար զարգացնելու գրադարանային-մատենագիտական գործը: Եվ որպեսզի գրադարանի [74] և ընդհանուր գրադարանային-մատենագիտական համակարգերի զարգացման համար այդ գործոնն արդյունավետ լինի պետք է տիրապետի գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական գիտություններին, դրանց զարգացման արդյունքներին [13, 14, 30, 38, 48, 51, 53, 55, 70, 71, 82, 86, 95, 99, 101]:

Շարադրվածից հանգում ենք այն հետևության, որ «մարդկային գործոնն» ունի երկու ինքնուրույն և միմյանց փոխադարձ կապված ուղղություններ:

Առաջիը հնարավորություն է տալիս պատասխանել հետևյալ հարցերին: Ի՞նչ է գրադարանային-մատենագիտական մասնագիտությունը, ինչպիսի՞ գիտելիքներից և գործնական ունակություններից է կազմված նրա բովանդակությունը, ինչպիսի՞ն է գրադարանային-մատենագիտական գիտակցության զարգացման աստիճանը, մասնագիտության սոցիալական հիմքը և որոշել մասնագիտության զարգացման հեռանկարները:

Երկրորդը թույլ է տալիս հիմնավորել գրադարանավար-մատենագետների անցած գործնական ուղին, մասնագիտության և որակավորման կատարելագործումը: Հաշվի առնելով «մարդկային գործոնի» ծավալը և բազմատեսականությունը՝ ժամանակին ուսումնասիրողները նշել են, որ նպատակին հասնելու համար հարկավոր է լուծել երկու փոխադարձ կապված

խնդիրներ. «պարզել գրադարանային-մատենագիտական գործի էությունը և մշակել ըստ գրադարանների մասնագետների տեսակավորումը» [159]: Հարկ է ընդգծել, որ խնդրո առարկա հարցերի քննությանն են անդրադարձել խորհրդային շրջանի բազմաթիվ գրադարանավարներ, մատենագետներ և գրքագետներ՝ Կ. Հ. Աբրամովը, Օ. Պ. Կորշունովը, Ն.Ս. Կարտաշովը, Ե. Ա. Մեդվեդևան, Ա. Ս. Չաչկոն, Ս. Պ. Գլեբովան, Ա. Վ. Սոկոլովը, Վ. Ի. Տերյոշինը, Գ. Ա. Իվանովնան, Ի. Ա. Մեյժիսը, Ի. Գ. Մորգեյնշտերնը, Ա. Յ. Չերնյակ, Վ.Վ. Սերովը, Է. Լ. Շապիրոն, Մ.Մ. Կլեպնիկովը և ուրիշներ [57, 136, էջ 17-31, 137, էջ 74-81, 75, 97, 159, 126, 155, 132, 141. էջ 34-37, 142, 148, 162, էջ 3-14, 165, 67, 129, էջ 18-30]:

Մեր կարծիքով խնդրի այդպիսի դրվածքն ունի որոշակի գիտամեթոդաբանական նշանակություն և մասնագիտության էությունը որոշելու շնորհիվ կարելի է հեշտորեն ու բազմակողմանիորեն հետազոտել այդ բնագավառը:

Հայտնի ամերիկացի սոցիոլոգներ Թ. Փարսոնսը և Ն. Սթորերը գիտության ճյուղերի տարբերությունների ուսումնասիրության ժամանակ, որպես ելման կետ, ընտրել են «գիտական մասնագիտությունը»: Օգտվելով նշված հասկացությունից տվյալ «մասնագետներին նշանակելու համար>>, - նշում են Թ. Փարսոնսը և Ն. Սթորերը, հիմնական գործունեությունը կապված է գիտելիքների պահպանման, փոխանցման և բազմապատկման հետ, (այսինքն՝ արձանագրված կոդաֆիկացված գիտելիքներ)..., հանգեցրին նրա հաստատումը որպես ժամանակակից հասարակության ինքնուրույն բաղադրամասի» [144, էջ 27]:

Թ. Փարսոնսի և Ն. Սթորերի կարծիքով ամեն մի մասնագիտություն որոշվում է չորս գլխավոր հատկություններով.

1. Մասնագիտական պատասխանատվության պահպանում, փոխանցում և մասնագիտացված գիտելիքների գումարի օգտագործում և հաճախ այդ գիտելիքների լայնացում ինչպես փորձնական, այնպես էլ տեսական ուղղություններում:

2. Նոր անդամների մասնագիտական բարձր պատասխանատվություն և ներգրավման ասպարեզում նրանց նախապատրաստում և մասնագիտական վարքի հսկողություն:

3. Մասնագիտության և նրա հասարակական շրջապատի միջև այնպիսի հարաբերությունների հաստատում, որոնք նրա համար կապահովեն աջակցում և հսկողություն հիմնական մասնագիտական հետաքրքրությունների մեջ:

4. Այնպիսի հատուցման պահանջը, որը դրդապատճառ կդառնա շատ մասնագետների ներգրավման համար:

Մասնագիտական գործունեությունը, ձևավորվելով հնադարում հասարակական պահանջի առկայությամբ ապահովել է իր, հետագա զարգացումը: Պատմական զարգացման ընթացքում հայտնվել են անհրաժեշտ գիտելիքների պաշար, կոնկրետացել վարպետությունը, կատարելագործվել գրադարանային աշխատողի գործնական ունակությունները: Հատկապես մասնագիտական գիտելիքները տարբերության բնորոշ չափանիշ են պրոֆեսիոնալ գրադարանային աշխատողի և ոչ պրոֆեսիոնալի կամ իր գործն իմացողի և պատահականի միջև:

Հարկ է ընդգծել, որ գրադարանային-մատենագիտական գիտելիքների գումարը, օգտակարությունը, օբյեկտիվությունը, գրադարանային-տեղեկատվական սպասարկման իրական կազմակերպումը կապված չեն առանձին աշխատակիցների կարողությունների ու հմտությունների հետ: Մասնագետների սոցիալական արժեքը որոշվում է յուրացված գիտելիքների աստիճանով, դրանց օգտագործման կարողությունով և մասնագիտական գիտելիքների ծավալի հետագա զարգացման մեջ անձնական ներդրումով:

Այդ չափանիշներով աշխատողի մասնագիտական գործունեությանը օբյեկտիվ գնահատական կարող է տալ միայն մասնագետը: Հետևաբար, հարաբերական անկախության տիրապետումը հանդես է գալիս որպես կարևորագույն պայման տվյալ բնագավառի գործունեության գիտական և

մասնագիտական զարգացման մեջ: Ինքնահաստատումը սոցիալական ճանաչման բարձրացման և ավելի բարձր հասարակական դիրքի նվաճումների երաշխիքն է: Ուստի մասնագիտության ինքնուրույնության մեջ կասկած չկա, քանի որ նրա տվյալ հատկությունը հաստատում են հատուկ գործող սոցիալական ինստիտուտներ:

Մասնագիտական գործունեության դրությունը որոշող մյուս առանձնահատկությունը գրադարանային–մատենագիտական մասնագիտության նշանակության մեջ է: Գրադարանային-մատենագիտական գործի կապը շրջապատող սոցիալական միջավայրի հետ իրագործվում է նրա բոլոր կառուցվածքային մասնիկների շնորհիվ: Գիրքն ու գրադարանը, լինելով արտադրական և գիտական հարաբերությունների արդյունք, կենտրոնացվում են «փաստաթղթերի» (գրքերի) հիմնավորված «ֆոնդերում» [85; 87; 94]՝ պահպանման, զարգացման և օգտագործման նպատակներով: Ուստի ժամանակակից մասնագիտության հիմնական ուղղությունների և հասարակական պահանջմունքներին համապատասխան վիճակի հետազոտումը և մասնագիտության հեռանկարների որոշումը պահանջում են մասնագիտական հիմնական ուղսղությունների և հասարակական պահանջմունքներին համապատասխան գիտական հետազոտությունների անցկացում: Կարելի է եզրակացնել, որ մասնագիտության ճանաչման ամենաբարձր չափանիշը գիտությունների ինքնուրույն բնագավառի հաջող գործունեությունն է, տվյալ դեպքում՝ գրադարանագիտությունը, մատենագիտությունը և փաստաթղթագիտությունը [39, 53, 70, 61]:

Գրադարանային-մատենագիտական գործը, որպես գործունեության ինքնուրույն բնագավառ, չի ձևավորվել այն տեսքով, ինչպիսին է այսօր: Սկզբից հստակ չէին առանձնանում կառուցվածքը կազմող տարրերը: Գրադարանային-մատենագիտական մասնագիտության և հասարակության զարգացման մեջ նրա դերի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Միշտ չէ, որ հասարակության անդամները, նույնիսկ գիտաստեղծագործական գործունեության

ներկայացուցիչները գրադարանային-մատենագիտական գործին վերաբերվում էին որպես մարդկային գործունեության ինքնուրույն բնագավառի: Դեռ XVIII դարից և հատկապես XIX դարից սկսած՝ մի շարք եվրոպական երկրներում հասարակության վերաբերմունքը էապես փոխվում է գրադարանային գործի նկատմամբ, և այն ճանաչվում է որպես մասնագիտություն: Ձեռնարկվում են կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված նրա հետագա զարգացմանը: Գրադարանների քանակի սիստեմատիկ ավելացումը, նրանց սոցիալական գործունեության ընդլայնումը, հատուկ ուսումնական հաստատությունների ստեղծումն ու զարգացումը նպաստում են մի շարք գիտնականների հայտնվելուն, որոնք, որպես գրադարանավարներ, մտան համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Գիտնականների, գրականության ու մշակույթի գործիչների առանձին արտահայտությունները հաստատում են գրադարանային–մատենագիտական մասնագիտության ինքնուրույնությունն ու սոցիալական կարևոր դերը:

Ռուս գրադարանագետ Լ. Բ. Խավկինան ռուսական գրադարանագիտական դպրոցի հիմնադիրն է, որը չափածո է ներկայացնում գրադարանային գործի տարբեր կողմերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով գրադարանավարի դերին: «Գրքերը, - նրա կարծիքով, - գրադարանի օրգանիզմն են և պետք է հոգալ, որ օրգանիզմը լինի առողջ, ամուր և ոչ թե նվազ, որպեսզի նա ճիշտ աճի և չընդհատվի նրա զարգացումը» [96, էջ 22]:

Ամերիկացի հայտնի գրադարանագետ Ջ. Խ. Շիրան հետևյալ կարծիքն է արտահայտել գրադարանային-մատենագիտական գործում գրադարանային մասնագիտության պատմության և կրթության խնդիրների մասին: «Գրադարանավարի մասնագիտական հեռանկարները պարզ չեն, քանի որ նա ավելի շատ կատարում է տեխնիկական գործունեություն, և դրա համար էլ վախենում է, որ տեխնիկական նվաճումների զարգացումը կփոխարինի գրադարանավարին մեքենայով: Սակայն գրադարանավարները չպետք է թույլ տան իրենց նմանեցնեն XIX դարի անգլիական մուդիտներին, որոնք հանդես են գալիս արդյունաբերական հեղափոխության դեմ: Քանի որ գրադարանային գործը

ավելի մեծ է, քան գրապահոցների ամբողջությունը, որոշակի գիրք փնտրելու համար, որոշ դարակի, որոշ հայտով, որոշ անձի կողմից, գրադարանային կրթությունը չպետք է սահմանափակվի փաստերի գումարի հաղորդումով, հատուկ մեթոդների ուսուցումով, կամ այն բացատրելով, թե ինչպես պետք է վարվել մեքենայի հետ: Գրադարանային կրթության գլխավոր խնդիրը պետք է լինի ինտելեկտի դաստիարակությունը և ընդունակությունների զարգացումը, մարդկային գիտելիքների յուրացումը: Գրադարանային կրթության նպատակն է տալ բարձրագույն իմաստություն, որը թույլ կտա օգտագործել այդ գիտելիքները հօգուտ մարդկությանը» [102, էջ14]:

Միաժամանակ հայտնի են անընդունելի կարծիքներ գրադարանային մասնագիտության վերաբերյալ, որոնցում գիտակցաբար անտեսված են նրա դերն ու գիտագործնական նշանակությունը հասարակության համար: Այդ հեղինակներից է Հարավային Կարոլինայի համալսարանի դեկան (ԱՄՆ) Տ. Շոնեսին: Նա հաստատում էր, որ «Գրադարանային գործը լավագույն դեպքում, կիսամասնագիտություն է» [91]: Ըստ ռուս հայտնի գրադարանագետ և ֆոնդագետ Յու. Ն. Ստոլյարովի՝ նման տեսակետի փաստարկները գրադարանային գործունեության վերաբերյալ ոչ մասնագիտական կամ լավագույն դեպքում կիսամասնագիտական են և հանգում են հետևյալին.

1. Գրադարանագիտությունը ինքնուրույն գիտական ճյուղ չէ, հետևաբար գրադարանային կրթության մեջ բացակայում է տեսական գիտելիքների պարտադիր մինիմումը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր մասնագիտության համար:

2. Գրադարանային գործունեության մեջ անհնար է առանձնացնել մասնագիտական և ոչ մասնագիտական տեսակներ:

3. Գրադարանավարը չունի մասնագիտական օրենսգիրք, որն ունի բժիշկը, իրավաբանը և այլն:

4. Գրադարանավարի դերը պատմականորեն անցողիկ է: Գրադարանավար-մատենագետը հայտնվեց միայն գրադարանային գործի

զարգացման շրջանում: Բացի դրանից, նույն հիմունքներից կարելի է ենթադրել, որ զարգացման մյուս փուլին նա կվերանա, լինելով փոխարինված, օրինակ, մեքենայով [86, էջ 135]:

Գրադարանային-մատենագիտական մասնագիտական գործունեության մասին գոյություն ունեն տարբեր կարծիքներ, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Այստեղ տեղին է կանգ առնել մի քանի բացասական գնահատականների վրա: Հայտնի է, որ գիտական և արտադրական գործունեության մյուս բնագավառների մասնագետների մեծ մասը գրադարանային-տեղեկատվական աղբյուրներից կանոնավոր օգտվելու ընթացքում գրադարանային մասնագիտության մասին կազմում է որոշակի կարծիք: Բայց այս կամ այն գրքերի ինքնուրույն բացահայտումը գրադարանային ֆոնդի բազմության մեջ, կամ կոնկրետ ստեղծագործության ընտրությունը թույլ չեն տալիս մինչև վերջ գիտակցել այն բարդ մեխանիզմները, որոնց շնորհիվ սկսվում է գրադարանների գործընթացը: Նաև այն մարդիկ, ովքեր կապված չեն գրադարանային մասնագիտական գործունեության խնդիրների իրականացման հետ, մեր կարծիքով, դժվարվարությամբ են պատկերացնում գործոնների և տարրերի դերը ընթերցողների տեղեկատվական պահանջմունքների հետագա զարգացման մեջ [68, 76, 120, էջ 50-52, 122, 125, 128, 130, էջ 40-43, 158, էջ 3-8]: Հետևաբար, ստեղծվում են որոշակի դժվարություններ գրադարանավարի աշխատանքը օբյեկտիվ գնահատելու մեջ, նրա դերն ու տեղը հասարակությանը անհրաժեշտ գրականությամբ սպասարկելու գործընթացում:

Գրադարանային-մատենագիտական մասնագիտության վերաբերյալ հարկավոր է ընդգծել քննարկվող հասարակական երևույթի նաև մյուս կողմը: Հայտնի է, որ սոցիալական խմբերի տարբեր ներկայացուցիչներ մշտապես օգտվում են գրադարանային ֆոնդերից, որի հետևանքով ձեռք են բերում գրադարանային-մատենագիտական գիտելիքների նվազագույն քանակ: Փաստորեն, գրադարանային-մատենագիտական, այսպես կոչված, մշակույթի ձևավորումը կապված է գրադարանից օգտվելու, հատուկ ուսումնագիտական

միջոցառումների անցկացման հետ, որը թույլ է տալիս ընթերցողներին ինքնուրույն կազմել օգտագործված գրականության ցանկեր, արդյունավետ օգտագործել տեղեկատու-մատենագիտական ապարատը, օպերատիվ բացահայտել օգտագործման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրը, իմանալ գրադարանի կազմակերպչական կառուցվածքը, որոշ չափով գիտակցել գրադարանների սոցիալական գործունեության դերը: Այդպիսի ընթերցողները գրադարանից օգտվում են բացարձակապես ինքնուրույն: Ընդ որում, նույնիսկ այն ընթերցողը, որն ունի հարուստ գրադարանային-մատենագիտական մշակույթ, մինչև վերջ չի պատկերացնում կատարելագործման ուղիներն ու միջոցները: Գրադարանային-մատենագիտական մշակույթը նախ և առաջ ձևավորվում է գրադարանային աշխատողի համակարգված գործունեության շնորհիվ:

Ընթերցողի վրա դաստիարակչական մեծ ազդեցություն ունեն գրադարանների գրքային ֆոնդերի հարստության արդյունավետ օգտագործումը, գրացուցակների և քարտարանների համակարգը, ընթերցողների տարբերակված սպասարկումը ընթերցասրահներում, կատարելագործված գրադարանային-մատենագիտական հանձնարարականները, հատուկ գրադարանային-մատենագիտական պարապմունքների կազմակերպումն ու անցկացումը և այլ գործոններ ու միջոցառումներ [6, 9, 26, 32, 36, 42, 73, էջ 131-140, 80, 111, էջ 14-17, 116, 150, 157, 163, 166, էջ 6-16]: Այս ամենը զինում են ընթերցողին հատուկ գիտելիքներով, նպաստում են գրադարանից օգտվելու նրա գործնական ունակությունների ձևավորմանը:

Գրադարանային-մատենագիտական մշակույթի ձևավորման և զարգացման իմաստավոր գործոն է նաև տարբեր մատենագիտական ձեռնարկների համակարգը: Մեթոդական հանձնարարությունները, որոնք զետեղված են նախաբաններում, ընթերցողներին սովորեցնում են ընտրել մեթոդական ոճաձևերը և այս կամ այն հատկություններով ընտրված նյութերի համակարգումը: Յուրաքանչյուր գրադարան, որը կազմակերպված է նման մեթոդական պահանջներով, կարող է ունենալ որոշակի ազդեցություն իր ընթերցողների վրա:

Գրադարանային-մատենագիտական գործընթացները փոխում են ընթերցողների ներքին աշխարհը՝ ձևավորելով նրանցում որոշակի կարծիք գրադարանային-մատենագիտական գործի մասին: Սակայն դա հիմք չի տալիս լիովին ներկայացնելու գրադարանային-մատենագիտական մասնագիտությունը՝ որպես «հասարակ» մի մասնագիտություն:

Մի շարք աշխատանքներում հետազոտվել են գրադարանների վերաբերյալ հասարակական և գիտական կարծիքները՝ ցույց տալու համար մատենագիտության և գրադարանների պատմական դերը հասարակական կյանքի զարգացման մեջ [2, 13, 19, 33, 43, 91, 100, 139, 147, էջ 211-215, 102], գիտատեխնիկական առաջընթացի պայմաններին համապատասխան՝ կատարվել են նոր եզրակացություններ, որոնք արժանի են ուշադրության: Հետազոտությունների մեջ իր տեսական նշանակությամբ հատուկ տեղ է զբաղեցնում Յու. Ն. Ստոլյարովի «Գրադարան. կառուցվածքա-ֆունկցիոնալ մոտեցում» աշխատությունը [86]: Համաձայն հեղինակի՝ գրքերի հավաքումը և պահպանումը հատուկ տեղերում դեռ չեն կազմում գրադարանի բուն իմաստը: Ընթերցողների առկայությունը, որոնք դիմում են գրադարան տարբեր նպատակներով, չեն արտահայտում «գրադարան» հասկացության լրիվ իմաստը: Որպեսզի գրականությունը համակարգվի այս կամ այն որակներով և ստեղծվեն առավելագույն պայմաններ նրանց օգտագործման համար, բացի շենքից, պահանջվում է նաև նյութատեխնիկական բազա: Գրադարանային-մատենագիտական հետագա զարգացումները ցույց տվեցին, որ Յու. Ն. Ստոլյարովի հայացքներն ունեցան ուղենշային նշանակություն:

Նյութատեխնիկական բազային են պատկանում այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են գրադարանի հաջող գործունեության համար: Սակայն, նշված երեք տարրերը՝ գիրքը, ընթերցողը, նյութատեխնիկական բազան, դեռ չեն ձևավորվում գրադարանը՝ որպես համակարգ: Այսպիսով, գիրքը, ընթերցողը, նյութատեխնիկական բազան իրար հետ կազմում են գրադարանի ամբողջական

համակարգը: Ամեն մի միավոր համակարգի սահմաններում ունի կոնկրետ գործողություններ և ապահովում է համակարգի կապը արտաքին այլ համակարգերի հետ: Գրադարանավարը, որպես համակարգի պարտադիր տարր, նշում է Լ. Խավկինան, «գրադարանի ոգին է, այն գործուն ուժը, որը շարժման է բերում նրա օրգանապես կապված մասնիկները» [96, էջ 134]:

Գրադարանի չորս տարրային (գիրք, ընթերցող, գրադարանավար, նյութատեխնիկական բազա) տեսական համակարգը թույլ է տալիս ավելի հստակ հայտնաբերել գրադարանավարի սոցիալական դերը, որպեսզի տարրերի գործողությունը գրադարանի միասնական համակարգի սահմաններում իրականացվի գործնականում և կազմակերպված մակարդակով: Խնդիրները, որոնք առաջադրվում են գրադարաններին այլ համակարգերի կողմից, մասնավորպես՝ հասարակության կողմից, պահանջում է նպատակամետ կապի հաստատում տարրերի միջև: Այդ առումով հատուկ նշանակություն է ձեռք բերում գրադարանավարի մասնագիտական ուսուցումը: Այսպիսով, գրադարանային-մատենագիտական կրթությունը «գրադարանավար» տարրի շնորհիվ վերածվում է «գրադարան» համակարգի հատուկ մասի: Այն պետք է արտացոլի շարժման հիմնական ուղղությունները և համակարգի բոլոր տարրերի փոխադարձ կապերը: Բացի այդ, նրա վրա է դրվում ավելի պատասխանատու խնդիր՝ իրականացնել գիտելիքները գործնականում, կոնկրետ պայմաններում և որոշել դրանց զարգացման հեռանկարները: Այս եզրակացությունը բխում է գրադարանավարի խնդիրներից: Գրադարանավարի հիմնական խնդիրները համաձայն Յու. Ստոլյարովի հետազոտության, հանգում են հետևյալին.

1. որոշել և ընտրել այն փաստաթղթերը, որոնք համապատասխանում են բաժանորդի պահանջմունքներին (որը լուծվում է գրադարանային ֆոնդերի համալրման ընթացքում),

2. բաժանորդներին տեղեկացնել փաստաթղթերի մասին (լուծվում է տեղեկատու որոնողական ապարատի ստեղծման միջոցով, տեղեկատու աշխատանքի շնորհիվ),

3. հասնել բաժանորդների կողմից նյութերի օգտագործմանը (օգտագործելով գրքերի պրոպագանդայի (տարածման) տարբեր ձևերը),

4. մասնագիտական առումով գրագետ կերպով կազմակերպել և սարքավորել շենքը, պայմաններ ստեղծել փաստաթղթերի, ընթերցանության, պահպանման և օգտագործման, անձնակազմի աշխատանքի համար (իրականացվում է աշխատանքի անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով, սպասարկման կուլտուրայի շնորհիվ) [86, էջ 147-148; 152, էջ 5-24]:

Այսպիսով, հենվելով գրադարան համակարգի տեսական մոդելի վրա՝ փորձենք ձևակերպել կրթության իմաստը: Մասնագիտական կրթությունը, որպես սոցիալական ինստիտուտ, ընդգրկում է տեսական և գործնական գիտելիքներ գրադարանի համակարգի մասին՝ ապագա մասնագետներին զինելով անհրաժեշտ տեսական գիտելիքներով, փորձով և գործնական հմտություններով: Դա անհրաժեշտ է խնդիրների և գրադարանի հիմնական տարրերի սոցիալական գործունեության իրականացման համար (փաստաթուղթ, բաժանորդ, գրադարանավար, նյութատեխնիկական բազա)՝ հասարակությանն զարգացման յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջանի պահանջմունքներին համապատասխան: Մասնագիտական ուսուցումը և գրադարանավարների նախապատրաստումն ապահովում է գրադարանի համակարգի փոխադարձ կապը ուրիշ սոցիալ համակարգերի հետ, որոնք գոյություն ունեն գրադարանից անկախ, ինչպիսիք են՝ գիտությունը, մշակույթը, արտադրությունը, տեղեկատվությունը, դաստիարակությունը և հասարակությունն ընդհանրապես: Գրադարանային-մատենագիտական կրթությունը, որպես կարևորագույն սոցիալական երևույթ, սերտորեն կապված է գրադարանային համակարգի գործունեության կոնկրետ պայմանների հետ: Պատասխանատվությամբ կատարելով գործողություններ՝ այն նոր գիտական գիտելիքների և գործնական փորձի հիման վրա ապահովում է իր կանոնավոր զարգացումը: Կրթության բովանդակությունն ու խնդիրները ելնում են հասարակական զարգացման

ընդհանուր խնդիրներից և ուղղված են նրանց լուծմանը՝ բնակչությանը որակյալ սպասարկմամբ բարելավելու համար:

Գրադարանային-մատենագիտական կրթությունը, որպես գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման կարևոր գործոն, բազմազան է: Առաջին հերթին ըստ մակարդակի բաժանվում է բարձրագույն, միջին մասնագիտական կրթության և գրադարանային-մատենագիտական հաստատությունների, որոնք նպատակաուղղված են աշխատողների որակավորման բարձրացմանը ու նախապատրաստմանը: Երկրորդ, կան մասնագիտական շատ ճյուղեր, որոնք արտացոլում են հիմնականում գրադարանային-մատենագիտական գիտելիքներ և նրանց քանակը՝ համաձայն գրադարանային համակարգերի և այժմեական խնդիրների լուծման: Դրանք կանոնավոր ավելանում են [36, 37, 42, 54, 82, 88, 188, 129, 133, էջ 36-40]:

Այդ տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն նաև Ա. Ս. Չաչկոյի և Լ. Մ. Իսաչկովայի տեսակետները մասնագիտության տեղի և գրադարանավար-մատենագետի տեղեկատվական պատրաստվածության [97, 133], նաև Լ. Ի. Կազակովի և Ա. Յա. Չեռնյակի կարծիքները բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում գրականագիտության և ընդհանուր գիտական առարկաների դասավանդման մասին [134, 161]:

Գրադարանային-մատենագիտական մասնագիտության բազմազանությունն ու բարդությունը կարելի է ներկայացնել գիտության ճյուղերի և գիտական գործունեության հիմնական բնագավառների նկարագրությամբ, որոնք դասավանդվում են համապատասխան մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս ավելի համոզիչ ներկայացնել գրադարանային-մատենագիտական կրթության սոցիալական դերը: Գրադարանագիտությունը, մատենագիտությունը, գրքագիտությունը և փաստաթղթագիտությունը բնագավառի հիմնարար տեսական ուղղություններն են:

Նախքան գրադարանային-մատենագիտական կրթության զարգացման մեջ գրադարանագիտության տեղը որոշելը, հարկավոր է հակիրճ ներկայացնել գրադարանային գործունեության բովանդակությունը, նրա ներքին տարբերակումը: Գրադարանի յուրաքանչյուր կառուցվածքային մաս պահանջում է որոշ տեսական գիտելիքներ, հմտություններ և գործնական աշխատանքի փորձ: Նշվածը ավելի տեսանելի ներկայացնելու համար հարկավոր է դիմել գրադարանի կազմակերպական կառուցվածքին: Գրադարանին, որպես սոցիալական հաստատության, գիտական գրականության մեջ ժամանակին տրվել է հետևյալ ձևակերպում. «Գաղափարախոսական և գիտատեղեկատվական հաստատություն, որը կազմակերպում է մամուլի ստեղծագործությունների և ուրիշ տեղեկություն կրողների հասարակական օգտագործումը» [81, էջ 19]: Առաջին հայացքից հակիրճ և պարզունակ թվացող, բայց տարողունակ ձևակերպումն ընդգրկում է գրադարանային գործի հիմնական տեսակետները: Ժամանակակից պահանջների մակարդակով գրադարանը պետք է կատարի բազմագործառնական խնդիրներ, որոնք կապահովեն հասարակության տեղեկատվական պահանջմունքները:

Գրադարանի համակարգային զարգացման կարևոր ուղղություններից են գրադարանային-մատենագիտական գործի կազմակերպումն ու ղեկավարումը, ֆոնդերի առկայությունը, բազմալեզու և բազմաբովանդակ գրքերի դասակարգումը, հրատարակությունների տեղեկատու որոնողական ապարատի կազմումը, սոցիալական տեղեկատվության տիրապետումը, նյութատեխնիկական բազայի ձևավորումը և այլն: [46, 49, 50, 84, 83, 89, 90, 136, էջ 55-56, 138, էջ 24-30, 119, 146]: Նշվածների ներդրման համար հարկավոր է գրադարանային աշխատողներին ապահովել տեսական գիտելիքներով և գործնական փորձով: Թվարկածներն իրենց հերթին մասնագիտության ներքին տարբերացումների տրամաբանական արտացոլումն են: Դա կարելի է ավելի հստակ ցուցադրել գործնական օրինակներով: Օրինակ, այն մասնագետի համար, որը զբաղվում է գրադարանային գրացուցակներ կազմելով կամ էլ սպասարկում է ընթերցողներին տեղեկատու-որոնողական ապարատի միջոցով շատ բարդ կլինի աշխատել մի

այլ, մասնավորապես գրադարանային ֆոնդի համալրման բաժնում: Նրան անհրաժեշտ որոշ ժամանակ տվյալ աշխատանքի առանձնահատկությունների յուրացման համար: Հայտնի է որ «գրադարանավարը» այն մասնագետն է, ով հավաքում, պահում, կազմակերպում և ընթերցողների օգտագործման համար տեղեկություն է ներկայացնում: Այստեղից հետևում է, որ գրադարանավարը պետք է կողմնորոշվի տեղեկատվական հեղեղում, կարողանա կազմակերպել փաստաթղթերի օպտիմալ պահպանումը և օգտագործումը: Դրա հետ մեկտեղ՝ գրադարանավարի գործունեության բարդությունն ու բազմատեսակ լինելը նպաստում են գրադարանագիտական և մատենագիտական ճյուղերի համակարգի ձևավորմանը [53, էջ 33]:

Այդպիսով, ընդհանուր գրադարանագիտության հիմնական տեսական խնդիրն է հետազոտել գրադարանային գործի օրինաչափությունների զարգացումը՝ որպես սոցիալական երևույթի, որն օգտագործում է գրքային հարստությունը՝ ելնելով հասարակական հետաքրքրություններից: Ընդ որում, այն նաև գրադարանագիտական ճյուղերի տեսական հիմքն է:

«Գրադարանային գրացուցակները» դիտարկում է տեսությունը, պատմությունը և բազմազան ստեղծագործությունների գրացուցակավորման մեթոդիկան (մատենագիտական նկարագրություն, համակարգում, առարկայացում և կազմակերպում):

«Գրադարանային ֆոնդեր» առարկան ներկայացնում է գրադարանային ֆոնդերի տեսության, պատմության և ձևավորման մեթոդիկան (համալրում, կազմակերպում և ղեկավարում):

«Աշխատանք ընթերցողների հետ» առարկան ուսուցանում է տեսությունն ու ընթերցողի սպասարկման գործնական հիմքերը (ընթերցողի ուսուցումը, գրականության պրոպագանդայի (տարածման) մեթոդիկան, աշխատանքի զանգվածային և յուրահատուկ ձևեր) և ընթերցասրահներում ընթերցանության կազմակերպումը ընթերցողների հետ [32]:

Գրադարանում աշխատանքի տեխնոլոգիական ընթացքների տեսությունն ու մեթոդիկայի կազմակերպումը, գրադարանի ղեկավարումը, գրադարանային գործի տնտեսագիտությունը, գրադարանային համակարգումները, միասնական գրադարանային համակարգի կառուցվածքը և նրա ստեղծման ուղիները, գրադարանային գործի հեռանկարների պլանավորումն ու մեթոդական ղեկավարման կազմակերպումը վերաբերում են «Գրադարանային գործի կազմակերպում և ղեկավարում» առարկային: «Գրադարանային գործի պատմություն»-ը հատուկ տեղ է զբաղեցնում գրադարանագիտական-մատենագիտական ճյուղերի համակարգում: Այն քննարկում է գրադարանների (հայկական առումով՝ նաև մատենադարանների) ստեղծման օրինաչափությունները, ձևավորումն ու հետագա զարգացումը, տեսությունը և հայացքների էվոլյուցիան հասարակության մեջ, «գրքերի» մատենագրման և հասարակական օգտագործումը անցյալում և ներկայում [12-14, 18, 40, 41, 43, 91, 143, էջ 68-81, 153, էջ 51-52]:

«Գրադարանային աշխատանքի տեխնիկական միջոցները» ուսումնասիրում է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգտագործման ուղիները, բազմացման տեխնիկայի, ցուցադրման և այլ միջոցներ, որոնք կիրառվում են գրադարանային գործում [158]:

Նշված ճյուղերն ամբողջովին չեն արտացոլում գրադարանային գործունեության բոլոր տեսակները: Գրադարանային-մատենագիտություն գիտական հասկացությունը հայտնի է նաև «գրադարանագիտություն-մատենագիտություն» ձևով:

Ի՞նչ է մատենագիտությունը և ի՞նչ է այն ուսումնասիրում, որը երկար ժամանակ գիտնականների բանավեճի առարկա է եղել: Տարբեր երկրների մասնագետները ձգտել են որոշել մատենագիտության էությունն ու հասարակական խնդիրները: Մատենագիտությունից տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների քանակը մի քանի տասնյակ ձեռնարկներից ավել է:

Հետազոտության ընթացքում հարց ծագեց, թե գրադարանավար-մատենագետը նո՞ւյն մասնագիտությունն է, թե՞ տարբեր: Ինչպես հայտնի է, գրադարանային (կամ մշակույթի) ֆակուլտետները պատրաստում են մասնագետներ «գրադարանավար-մատենագետ» մասնագիտությամբ: Մատենագետների մասին, որոնք աշխատում են գրադարանային հաստատություններում, տվյալ մասնագիտության ներկայացուցիչներն են: Իսկ պետական գրաառևտրական կամ գիտալրացուցիչ մատենագիտության ոլորտների աշխատողների մասին չենք կարող ասել նույնը [129, էջ 20-21]:

Սույն միտքը, որ մատենագիտությունը գրադարանային-մատենագիտության օրգանական մասն է, որևէ բանավեճ չի առաջացնում: Մեր կարծիքով մատենագիտության ձևակերպումը հստակ ներկայացված է դեռ 1983 թ. հրատարակված «Պետական չափորոշիչներում», որի մեթոդաբանական հիմքը վերջին ժամանակաշրջանի բնագավառի գիտական նվաճումներից է: Համաձայն դրա՝ «Մատենագիտությունը գիտագործնական գործունեության նախապատրաստման և մատենագիտության տեղեկությունները սպառողներին հայտնելու բնագավառն է: Մատենագիտական տեղեկությունները մեծ ազդեցություն ունեն հասարակության մեջ մամուլի ստեղծագործությունների օգտագործման վրա» [84, էջ 6]: Ծանոթագրության մեջ տվյալ ձևակերպման մասին նշված է, որ «Մատենագիտության գործունեության մեջ են մտնում նաև ձեռագրերի, ատենախոսությունների, ավանդադրված ձեռագրերի և այլ նյութերի տեղեկություններ նախապատրաստելը և սպառողներին հասցնելը»:

Այսպիսով, մատենագիտությունը որպես գիտագործնական բնագավառի գործունեություն, գոյություն ունի մատենագիտական տեղեկությունների արտադրության համար: Դրանք իրենց հերթին նպաստում են առողջ մամուլի արտադրանքի, ձեռագրերի, հետազոտությունների և այլ սոցիալական տեղեկությունների օգտագործմանը հասարակության կողմից: Այդ տեղեկությունները մատենագիտության լեզվով ընդհանրացված կոչվում են «փաստաթուղթ»: Մատենագիտության այդպիսի հիմնական գործունեությունն իր

հերթին սերտորեն կապված է գրադարանի հետ՝ որպես կարևոր «սոցիալական ինստիտուտի» [74], Գրադարանը կազմակերպված կառուցվածք է: Դրա հետ միասին մատենագիտության կազմակերպված կառուցվածքի մեջ են մտնում և գրապալատները, զանգվածային տեղեկատվության միջոցների խմբագրությունները, ռադիոն, հեռուստատեսությունը, թերթերն ու ամսագրերը, գիտահետազոտական ինստիտուտները, ուսումնական հաստատությունները և այլն: Մատենագիտությունը, հոգեպես սնելով գրադարանային գործունեության կադրերին, աստիճանաբար մտնելով ուրիշ սոցիալական հաստատությունների կառուցվածք, ապահովում է իր փուլային զարգացումը: Ունենալով որոշ անկախություն՝ մատենագիտությունն իր էությամբ և հասարակական խնդիրներով գրադարանային գործի մասն է կազմում: Մատենագիտության գործունեության կարևոր օբյեկտ հանդիսացող գրքերը, թերթերը, ամսագրերը պահպանվում են գրադարաններում, իսկ մատենագիտական տեղեկությունները իրար են կապում այդ փաստաթղթերը սպառողներին: Այսպիսով, գրադարանային մասնագիտության գիտական ձևակերպումը «գրադարանագիտություն-մատենագիտություն» ձևով ճիշտ է ընտրված:

Մատենագիտության գործունեության ծավալը նպաստում է «մատենագիտություն» գիտական ճյուղի ձևավորմանն ու զարգացմանը: Այն ուսումնասիրում է մատենագիտության տեսությունը, պատմությունը, մեթոդիկան և կազմակերպումը: Ընդհանուր մատենագիտության հետ մեկտեղ հայտնվեցին և իրենց զարգացումով ստացան սոցիալական ճանաչում նաև ուրիշ կառուցվածքային ճյուղեր: Դրանցից ամենաճանաչվածն են համարվում գեղարվեստական, երկրագիտական, հայագիտական, հասարակական-քաղաքագիտական, մանկական գրականության մատենագիտությունների կազմակերպումը և այլն:

Գիտատեխնիկական գործունեությունը, տեղեկությունների ընդհանուր ծավալի ավելացումը, տնտեսագիտության զարգացումը նպաստեցին ուրիշ գիտական ճյուղերի զարգացմանը, ինչպես՝ ինֆորմատիկայի: «Ինֆորմատիկա»

առարկայի ուսուցման նպատակն է տալ գիտական տեղեկատվության կառուցվածքն ու հատկությունները, գիտատեղեկատվական գործունեության տեսությունը, պատմությունը և մեթոդիկան: Եվ եթե Ա. Ի. Միխայլովան, Ա. Ի. Չյոռնին և Ռ. Ս. Գիլյարյևսկին այն սերտորեն կապում են գիտական հաղորդակցությունների հետ [77], ապա Ե. Ն. Չենցովան և Ի. Վ. Շիրոկովան գրադարանային–մատենագիտական գործի հաջողությունները կապում են գրադարանների և բուհերի միջև սերտ համագործակցության հետ [160]: Անցյալում կար կարծիք, թե գրադարանագիտությունը ինֆորմատիկայի կառուցվածքային մասն է, քանի որ գրադարանը մտնում է պետական համակարգի գիտատեխնիկական տեղեկատվության պարտադիր մասի մեջ: Սակայն տվյալ գնահատականում բացակայում են գրադարանի դաստիարակչական և այլ գործառույթները, հաշվի չի առնվում նրա դերը անձի հոգեկան կատարելագործման մեջ: Ավելին, շրջանցվում է գրադարանագիտության և մատենագիտության մերձավորությունը բանասիրական գիտությունների հետ: Նոր ժամանակներում ապացուցված է, որ չնայած ուսուցման առարկայի որոշ ընդհանրությունների, գրադարանագիտությունն ու ինֆորմատիկան, մատենագիտությունն ու ինֆորմատիկան միանգամայն իրարից տարբերվում են խնդիրներով ու առանձնահատկություններով [123]: Գրադարանագիտությունն ու ինֆորմատիկան ուսումնասիրում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են գրադարանային-տեղեկատվական ընթացքների մեքենայացումը և ավտոմատացումը, գրադարանի տեղեկատվական գործունեության ինտենսիվացումն ու կատարելագործումը: Դրա հետ միասին ինֆորմատիկան բեղմնավոր ազդեցություն է թողել գրադարանային գործի տեսության և գործնական մասի զարգացման վրա: Գիտատեխնիկական տեղեկությունների համակարգի միջոցով գրադարանագիտությունը ապացուցել է, որ գրադարանը պետական համակարգի գիտատեխնիկական տեղեկությունների կարևոր մասն է: Բացի այդ, ինֆորմատիկայի ներկայացուցիչները խոստովանել են, որ գործունեության տվյալ բնագավառը երախտապարտ է

գրադարանագիտությանը, քանի որ գիտատեղեկատվական գործունեության տեսական ու մեթոդական խնդիրները ձևակերպվել են գրադարանագիտության նվաճումների հիման վրա: Համապատասխանաբար, հսկայական է ինֆորմատիկայի դերը գրադարանային գործի ապագա մասնագետների մասնագիտական ունակությունների և հայացքների զարգացման մեջ: Ուստի «ինֆորմատիկան» ուսուցանվել և ուսուցանվում է որպես պարտադիր ճյուղ ուսումնական հաստատությունների ծրագրերի մեջ [65; տես նաև՝ ՀՀ բուհերի ուսումնական պլանները]:

Ռ. Ս. Գիլյարևսկին, զարգացնելով գրադարանագիտության և տեղեկատվության փոխադարձ կապի մասին բանավեճը, ուշադրությունը կենտրոնացրել է գիտական տեղեկությունների օգտագործման մեջ սպառողների պատրաստականության անհրաժեշտության և տեղեկատվական պահանջմունքների հետագա կատարելագործման վրա: «Բոլորի կողմից ընդունված ձևակերպումը տեղեկություն սպառողի մասին ինչպես անձի, որն իր մասնագիտության պատճառով կամ էլ անձնական հետաքրքրությունից ելնելով՝ ցանկանում է լրացնել և պահպանել իր գիտելիքները ժամանակակից մակարդակի վրա, չի կարելի համարել բավականաչափ կատարյալ: Եթե գրադարանավարները և տեղեկատվության ծառայությունները սպասեն, թե երբ է սպառողը (ընթերցողը) դիմելու նրանց հարցումով, նրանք չեն կարողանա բավարար կատարել իրենց առջև դրված խնդիրները: Բացի այդ, անպատրաստ սպառողի հարցումը սովորաբար լիովին չի արտացոլի նրա իրական տեղեկատվական պահանջմունքները: Գրադարանները և տեղեկատվական կենտրոնները, եթե նրանք ցանկանում են, որ իրենց գործունեությունը լինի ակտիվ, պետք է նախատեսեն սպառողների հարցումներ և օգնեն նրանց ճիշտ ձևավորել տեղեկատվական պահանջմունքները» [60, էջ 125]: Տվյալ դատողությունը նույնանման է հայտնի գրադարանագետ Յու.Ն.Ստոլյարովի հայացքներին և ապացուցում է գրադարանային համակարգի տեսական մոդելի ճշտությունը: Ե՛վ գրադարանային գործում, և՛ գիտատեղեկատվական

գործունեության մեջ տեղեկության սպառողը՝ ընթերցողը, նրա պահանջմունքների նախատեսումը և տեղեկատվական պահանջարկի հետագա զարգացումը. կարևոր խնդիրներ են համարվում: Սպառողների պահանջմունքներն իրենց ընդգրկումով մեծ են: Նրանք իրենց հերթին արտացոլում են գիտության, մշակույթի և արտադրության բոլոր բնագավառները: Գրադարանային գործի և գիտատեխնիկական տեղեկությունների բնագավառների մասնագետներին, բացի մասնագիտական գիտելիքներից, գործնականում հարկավոր են լայն պատկերացումներ տեխնիկայից, բնագիտությունից, հասարակական և հումանիտար գիտություններից: Նրանք օգնում են ավելի ճշտորեն ձևակերպել սպառողների տեղեկատվական պահանջմունքները:

Հասարակական զարգացման, տնտեսագիտական, քաղաքական և սոցիալ-հաղորդակցական փոփոխությունները գրադարանավարների առջև դնում են կոնկրետ խնդիրներ: Հաստատված չափանիշների, սկզբունքների, նույնիսկ տեսամեթոդաբանական եզրակացությունների մեջ, որոնք հիմնավորվել են տարիների ընթացքում, պահանջվում են նոր գիտական և մեթոդական հանձնարարություններ: Դա գրադարանի դիալեկտիկական զարգացման օրինաչափությունն է՝ որպես կարևոր սոցիալական ինստիտուտի: Պարզ է դառնում, որ գրադարանագետներին, մատենագետներին, ինֆորմատիկներին հարկավոր է կոմպլեքսային հետազոտությունների անցկացում և գործունեության ամենակարևոր ուղղությունների հայտնաբերում՝ հաշվի առնելով հասարակական զարգացման ժամանակակից մակարդակի պահանջմունքները: Գիտության մեջ այդպիսի փոփոխությունները պետք է գտնեն իրենց օբյեկտիվ արտացոլումը նաև մասնագիտական կրթության բոլոր մակարդակների վրա: Ապագա աշխատողներին հարկավոր է ապահովել գիտական նոր գիտելիքներով: Մամուլի լայն հասարակական օգտագործման պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, նյութական և հոգևոր արժեքների հետագա զարգացման ապահովումը դնում են կոնկրետ խնդիրներ, որպեսզի գրադարանագիտության և

մատենագիտության վերջին նվաճումները լայն օգտագործում գտնեն փաստաթղթային-տեղեկատվական գործունեության մեջ: Տվյալ պահանջը ինքն իրենով չի իրականանում: Դա կապված է իրական հնարավորությունների և պայմանների ստեղծման հետ, որպեսզի գրադարանային աշխատողները ստանան անհրաժեշտ տեղեկություններ, յուրացնեն նոր գիտական գիտելիքներ, ապահովեն գրադարանային-մատենագիտական սպասարկման ընթացքները նոր տեխնոլոգիաներով և այլն:

Այստեղ շատ մեծ է գիտական և մեթոդական գրականության, ամսագրերի և ուրիշ մասնագիտական պարբերականների դերը: Այսպիսով, մասնագիտական կրթությունը, գիտական գիտելիքները և գրադարանային գործունեությունը գիտական և արտադրական գործունեության միջոցով գտնվում են անընդհատ շարժման մեջ, և նրանց զարգացման ուղին ունի գալարաձև բնույթ:

«Գրադարանագիտություն և մատենագիտություն» մասնագիտության առարկաների համակարգը չի սահմանափակվում թվարկածով: Գրադարանների առանձին տեսակների գործունեության պայմանների իրականացման պատճառով ակնհայտ է նրանց հետագա տարբերացումը: Այլ խոսքով՝ գիտական առարկաների պրագմատիկ տեսակետը սերտորեն կապված է գրադարանների տեսակների և նրանց գործունեության կարևոր գործոնների հետ: Գրադարանների համար գոյություն չունեն ունիվերսալ տեխնոլոգիա և աշխատանքի միատեսակ մեթոդներ: Նրանց տարբերումը կախված է գրադարանի գործունեության պայմաններից և սոցիալական գործառույթներից:

Գրադարանների տարբերակումն առ այսօր էլ բանավեճեր է առաջացնում: Գոյություն ունեն տարբեր հայացքներ գրադարանների տիպավորման հիմնական տարրերի մասին [136]: Տվյալ խնդիրների լուծման համար հարկավոր է ուշադրություն դարձնել ամենաէական հատկանիշների վրա, ինչպիսիք են՝ ընթերցողների կազմը, գրադարան դիմելու պատճառը, ֆոնդերի բովանդակությունն ու ծավալը, գրադարանի տեղակայման վայրը, գերատեսչական բովանդակությունը, իրավաբանական կարգավիճակը

(ստատուս) և այլն: Այժմ հարկավոր է առաջարկել ևս մեկ կարևոր հատկանիշ՝ ֆինանսավորման աղբյուրները: Գրադարանների տիպավորման ընդհանուր պահանջների բացակայությունը բարդացնում է ոչ միայն գրադարանային գործի ապագա մասնագետների ուսուցման ընթացքը, որակավորման բարձրացումը և աշխատողների վերապատրաստումը, այլև գրադարանների տեղակայումը, գրադարանային ֆոնդերի համալրումը, մասնագետների տեղեկատու-մատենագիտական սպասարկումը և այլն: Հետագա գիտական բանավեճը այդ ուղղությամբ լայն հնարավորություններ է բացում գրադարանների գիտական իմացության, նրանց տիպավորման խնդիրների լուծման գործում: Չնայած գրադարանների տիպավորման բազմազան հատկությունների առկայությանը՝ հիմնական տեղը զբաղեցնում է գրադարանի հասարակական դերն ու նշանակությունը: Դա բխում է ավելի բարդ սոցիալական համակարգից, որը պայմանավորված է տվյալ պետության քաղաքականությունից դաստիարակության, կրթության, տնտեսագիտության, մշակույթի, գիտության բնագավառներում: Դրանցում առաջնակարգ նշանակություն ունեն հասարակության նյութատեխնիկական բազայի փուլային ծավալումը, ժողովրդավարության հաստատումն ու հետագա զարգացումը, խղճի ազատությունը, մարդու կատարյալ դաստիարակությունը, քաղաքական կուրսի անփոփոխությունը, ընդհանուր մարդկային արժեքների մատչելիությունը:

Նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր գրադարանների գործունեությունը, անկախ այս կամ այն գործառույթներից, ուղղված է նշված խնդիրների իրականացմանը:

Հետևաբար, գործնականում տվյալ պահանջների իրականացումը և գիտությունների վերջին նվաճումների հիման վրա մասնագետների նախապատրաստումը պահանջում են ուսուցման և գիտական մեթոդների անընդհատ կատարելագործում:

Գիտատեխնիկական զարգացումը, գիտության նվաճումների մարմնավորումը հասարակական գործունեության բոլոր ոլորտներում ոչ միայն

բարդացրին գրադարանային-մատենագիտական աշխատանքը, այլև նպաստեցին այդ աշխատանքի դերի բարձրացմանը հասարակության, գիտատեխնիկական օրգանների ղեկավարման և տեղեկատվության զարգացման ասպարեզներում [45, 46, 49, 145]: Գրադարանների հետ միասին հայտնվեցին հատուկ գիտատեղեկատվական հաստատություններ, որոնք, ստեղծեցին տվյալների բանկ: Փաստաթղթերի գիտական մշակման մեջ ավելի մեծ ծավալով են օգտագործվում էլեկտրահաշվիչ մեքենաները: Գիտատեղեկատվական հաստատությունների առավելությունը գրադարանների նկատմամբ ակնհայտ է: Գիտատեխնիկական հաստատությունները ոչ միայն լայնորեն օգտագործում են փաստաթղթերի մշակման գրադարանային-մատենագիտական մեթոդները, այլև զգալիորեն կատարելագործում են: Նրանք սպառողներին տալիս են ոչ միայն փաստաթղթեր կամ նրանց անվան թվարկումը, այլև կոնկրետ տեխնոլոգիական որոշումները, այս կամ այն գիտական, արտադրական խնդիրների լուծման հանձնարարությունները: Տեղեկատվական գործունեության ոլորտի տվյալ նվաճումը գիտության մեջ հայտնի է որպես «երրորդ արդյունաբերական հեղափոխություն» [64] և ընդգրկում է կյանքի տարբեր ոլորտները: Գիտական տեղեկությունների սպառողները տեղեկության անհրաժեշտ աղբյուրների որոնման ընթացքում զգալիորեն կրճատում են իրենց ժամանակը, արդյունավետ աշխատում են նոր տեխնոլոգիաների ստեղծման և գիտական հանձնարարությունների մշակման համար:

Շարունակվող տեղեկատվական հեղափոխությունը բարդացրել է գրադարանների սոցիալական գործառույթների իրականացումը: Դեռ «տեղեկատվական եռուզեռի» սկզբում հայտնվեց այնպիսի կարծիք, որ գրադարանն այսուհետև չի դառնա գիտական գործունեության պարտադիր մասնիկը: Տվյալ տեսության կողմնակիցները պաշտպանում էին այն միտքը, որ գրադարանները կլինեն միայն հոգևոր, գեղագիտական պահանջմունքների կենտրոններ և կուժեղացնեն նրանց մշակութային գործառույթները: Գիտության և արտադրության հետագա զարգացման ապահովման համար հարկավոր է

գիտատեխնիկական տեղեկության հաստատությունների ցանցերի լայնացում: Ստեղծված իրադրությունը և տարբեր պետությունների անհավասար հնարավորությունները, նրանց ապահովումը մասնագետներով, նորույթների օպերատիվ օգտագործման համար, սպառողների նախապատրաստական աշխատանքները գիտատեղեկատվական ծառայությունները դարձրել են նոր գիտական հետազոտությունների օբյեկտներ (առարկաներ):

Տարբեր պետությունների ունիվերսալ և հատուկ գրադարանների գործունեության բազմակողմանի վերլուծության (անալիզի) շնորհիվ, հաստատվել է, որ նոր պայմաններում գրադարանը ոչ միայն գիտական գործունեության կարևոր մասնիկն է, այլև՝ արտադրության, մշակույթի, տեխնիկական և հումանիտար գիտությունների հետագա զարգացման անհրաժեշտ միջոցը: Գրադարանների գործունեությունը գիտատեխնիկական տեղեկություններով հասարակության անընդհատ աճող պահանջմունքների լիովին բավարարման երաշխիքն է:

Մեր համոզմամբ գրադարաններն իրենց շտեմարաններում գրքերի, պարբերական հրատարակությունների հետ, կենտրոնացնելով փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրների ուրիշ տեսակները և օգտագործելով գիտատախնիկական տեղեկատվության մարմինների նվաճումները, կարող են լիովին բավարարել հասարակության ամենաբարդ տեղեկատվական պահանջմունքները: Աշխատանքի այնպիսի տեսակները, ինչպիսիք են գիտատեխնիկական տեղեկատվությունով տեքստի թարգմանությունը, շարադրումը, շարադրողական տեղեկություն կազմելը, գիտավերլուծական զննումը և այլն, դարձել են գրադարանավարի աշխատանքի արդյունավետ մեթոդներ: Սոցոլոգիական հետազոտություններն ապացուցել են համաձայնեցման արդյունավետությունը և գրադարանային գործունեության ու գիտատեղեկատվական հետազոտությունների համագործակցությունը: Դրա հետ միասին անհերքելի եզրակացություններով հիմնավորված է, որ գիտական մեթոդները և գիտատեխնիկական մարմինների աշխատանքի բովանդակությունը

գրադարանային աշխատանքի արդիական ժամանակակից պահանջներին հարմարված ձևերից են: Այդ կարծիքը ապացուցում է գիտատեխնիկական տեղեկատվության ոլորտի և տարածաշրջանային մակարդակների ծառայության կազմակերպված կառուցվածքը:

Գրադարանների և գիտատեխնիկական տեղեկությունների մարմինների միացյալ գործունեությանը անցել է ոչ միայն նրանց գործողության կոորդինացիայի այլև կազմակերպված մակարդակով: Նշվածի գործնական ցուցադրման համար կարելի է օրինակ բերել նախկին ԽՍՀՄ-ի փորձը: Այնպիսի հսկա տեղեկատվական ծառայությունները, ինչպիսիք են ՎԻՆԻՏԻ-ն, ԻՆԻՈՆ-ը և այլն, գրադարանային և գիտատեղեկատվական աշխատանքների հաջող միացման արդյունքն են: Նրանց հետ զուգահեռ հաջող գործունեություն են ունեցել գիտատեխնիկական տեղեկատվության բնագավառային կենտրոնները, որոնց կազմակերպման հիմքն են հիմնականում գրադարանների նյութատեխնիկական և վավերագրական բազաները: Այդպիսի հաստատություններից մեկն է մշակույթի և արվեստի պրոբլեմների գիտական տեղեկությունների կենտրոնը: Այն ստեղծվել է ԽՍՀՄ նախկին Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանի հիման վրա (այժմ՝ ՌԴ Պետական գրադարան): Այդ նույն կերպով հաջող գործունեություն են ունեցել նաև այլ բնագավառների՝ բուհական և ակադեմիական կենտրոնները: Նրանց բնագավառների բազմաքանակ աշխատողների հայտնաբերած տեղեկատվական պահանջմունքների հիման վրա անցկացվում էին լայնամասշտաբ գիտատեղեկատվական աշխատանքներ, հրատարակվում էին բազմաթիվ մատենագիտական տեղեկագրեր, հայագիտական բնույթի բազմաթիվ մատենագիտական հրատարակություններ, գիտավերլուծական դիտումներ, ստեղծվում էին տվյալների ավտոմատացված բազաներ: Նոր իմաստ ու նշանակություն էր ստանում հասարակական գիտությունների և տեղեկատվության կապը [58]:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) 1970-ական թվականների սկզբներին ձեռնամուխ եղան նմանատիպ կենտրոնների ստեղծմանը: ԳԱ-ի կենտրոնական գիտական գրադարանի բազայի վրա ստեղծվեց հասարակական գիտությունների գծով գիտական տեղեկատվության կենտրոնը: Դրանց թվին են պատկանում նաև մշակույթի և արվեստի խնդիրներով զբաղվող կենտրոնը: Հայաստանի գիտատեխնիկական ինֆորմատիկայի ինստիտուտը (ԳՏԻԻ) ստեղծվել է հանրապետության գիտատեխնիկական գրադարանի հարուստ ֆոնդերի և այլ տեղեկատվական աղբյուրների հիման վրա: Գրադարանային գործի և գիտատեխնիկական տեղեկության ոլորտում տեղեկատվական սպասարկման բարելավման առումով այս բոլոր փոփոխությունները ՝ կրթության առջև նոր խնդիրներ են դրել: Ինչպես գրադարանների, այնպես էլ գիտատեխնիկական տեղեկատվության մարմինների պահանջներին համապատասխանող մասնագետների նախապատրաստումը դարձավ ժամանակակից կյանքի պահանջ:

Այսպիսով, մասնագիտական գրադարանային-մատենագիտական գիտելիքների ընդհանուր ծավալը անընդհատ լայնանում էր: Դրա արդյունքում կատարելագործվել են բուհերի ուսումնական պլանները, հիմնավորել է մասնագիտացումների ներմուծման անհրաժեշտությունը, կազմվել են հիմնարար դասագրքեր, որոնք համապատասխանում են ժամանակի պահանջներին: Տեղին է նշել, որ նոր ժամանակաշրջանում գրադարանային-մատենագիտական գիտելիքների որոշ ծավալը դարձել է ոչ միայն գիտատեխնիկական տեղեկատվության մարմինների գործունեության հուսալի հենարանը, այլև՝ գիտատեխնիկական հաստատությունների կառուցվածքային համակարգի գործունեության անհրաժեշտ հենարանը: Նրանց կառուցվածքում հայտնվեցին նոր պաշտոնական միավորներ, ինչպիսիք են տեղեկատուն, ինժիներ-տեղեկատուն, բժիշկ-տեղեկատուն և այլն: Նրանք մասնագիտական մակարդակով զբաղվել են տեղեկատվության կազմակերպմամբ, տեղեկատվական բյուլետենների նոր մուտքերի կազմումով, տեղեկատու

մատենագիտական դիտումով, ինչը նպաստում էր նոր գրականության, տեխնոլոգիական մշակումների, գիտամեթոդական հանձնարարականների արդյունավետ օգտագործմանը: Նրանց գործունեությունը, անշուշտ, այս կամ այն բնագավառների գիտական նվաճումների կատարելագործման կարևոր փուլն է:

Բացի այդ, այն շրջանավարտ-մասնագետները, ովքեր ուսման ժամանակ մեծ հետաքրքրություն են դրսևորել մատենագիտության նկատմամբ, ուսումնասիրել նրա տեսական և մեթոդական հիմունքները, առանց դժվարությունների հնարավորություն ունեն մտնել գիտական, արտադրական կոլեկտիվների կազմի մեջ և զբաղվել գիտատեղեկատվական գործունեությամբ: Ըստ Է. Ա. Շապիրոյի, այն մատենագետը, ով սպասարկում է գիտությանը, համապատասխան մասնագիտական գիտելիքների կարիք ունի: Սակայն պարզ չէ պահանջվող գիտելիքների ծավալը. ե՞րբ, ուսման ո՞ր մակարդակին պետք է տիրապետել [165, էջ 12-14]:

Համաձայն Է. Լ. Շապիրոյի կարծիքի՝ այդ հարցերին հնարավոր է պատասխանել՝ վերլուծելով գիտելիքների կառուցվածքը:

Գիտական տեղեկատվությունը բոլոր երևույթների, իրադարձությունների, քաղաքական ընթացքների, տնտեսության, սոցիալական, մշակութային կյանքի, արտադրական հարաբերությունների, բնության փոփոխությունների օբյեկտիվ մոդելն է: Տվյալ մոդելը խորհրդանիշի, կերպարի և բանաձևի տեսքով օգտագործվում է գիտական, մարդկային գործունեության մեջ: Կոնկրետ բնագավառների աշխատակիցների մասնագիտական գիտելիքները ձևավորվում են նշված մոդելների միջոցով, որոնք կատարում են կոնկրետ գործողություն՝ հաշվի առնելով աշխատողի մասնագիտական գործունեության ուղղությունը: Գիտատեխնիկական տեղեկատվության մարմնի ինֆորմացիան էականորեն տարբերվում են տվյալ բնագավառի աշխատողի մասնագիտական գիտելիքներից և իր մեջ ընդգրկում է հիմնականում համապատասխան բնագավառների տեղեկատվական մոդելները: Այդպիսի աշխատակիցների արտադրական գործունեության առարկաներն են դարձել տեղեկատվական փաստաթղթերի

իրական լինելը: Եթե բնագավառի մասնագետը անմիջականորեն զբաղվելու է կարևոր փաստաթղթերի որոնմամբ, ապա նա գիտական և արտադրական ժամանակի մեծ մասը ծախսում է ոչ թե իր բնագավառի զարգացման, նյութական ու հոգևոր արժեքների ավելացման վրա, այլ՝ սկզբնական փուլի վրա, այսինքն՝ այս կամ այն փաստաթղթերի ձեռքբերման վրա: Պետք է նաև հաշվի առնել, որ փաստաթղթերի ընդհանուր ծավալը սիստեմատիկ ավելանում է երկրաչափական զարգացումով: Ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի կարծիքով «ժամանակակից մարդը գտնվում է գրադարանների Հիմալայների առջև և ինչպես ոսկի որոնող՝ փնտրում է ոսկու հատիկները ավազների մեջ» [124, էջ 15]:

Ինչպես արդեն նշել ենք, գրադարանի ընդհանուր խնդիրների վերլուծության ժամանակ, գիտատեխնիկական գործունեությունից բացի, գրադարանն ունի նաև գաղափարական խնդիր՝ որպես իր գոյության էական իմաստներից մեկը:

Գաղտնիք չէ, որ խորհրդային ժամանակաշրջանում գրադարանային գործը, գրքերի և պարբերականների հրատարակությունը, մատենագիտական աշխատանքը ևս ղեկավարվում էին կուսակցության սկզբունքներին համապատասխան: Հետևաբար, կոմունիստական կուսակցության սկզբունքները գրադարանագիտության ու մատենագիտության որոշիչ չափանիշն էին համարվում:

Մասսայական ընթերցանության կազմակերպումը, առաջին հերթին ժողովրդի տեղեկատվական պահանջմունքների բավարարումը պետք է պատասխանեին տվյալ կուսակցության գաղափարական գործունեության պլաններին և պահանջներին: Հետևաբար, ընթերցման վավերագրական բազայի ձևակերպումը, գրքերի ընտրության եղանակները և հանձնարարությունները սերտորեն կապված էին կուսակցության սկզբունքային պահանջների հետ: Գրադարանները պրոպագանդում էին հատկապես այն ստեղծագործությունները, որոնք գովերգում էին կուսակցության քաղաքականությունը: Կրթության կարևոր խնդիրն էր երեխաների, պատանիների, բանվորների, վարչական

հաստատությունների աշխատակիցների, հասարակական կազմակերպությունների ներգրավումը մասսայական ընթերցանության մեջ,: Պետք է նշել, որ մեր ժամանակներում գրականության նախկին միակուսակցական սկզբունքը կորցրել է իր նշանակությունը:

Սակայն, շնորհիվ համամարդկային մշակութային արժեքների, պահպանվել են ոչ միայն գրադարանների հասարակական-դաստիարակչական գործառույթները, այլև ուժեղացել է նրանց դերն ու նշանակությունը գիտելիքների մասսայականացման, ազգային և համամարդկային մշակույթների նվաճումների մատչելիության, քաղաքացիների հոգևոր աշխարհայացքների կատարելագործման գործում: Այդ ուղղությամբ հատկապես գեղարվեստական, հասարակական և քաղաքագիտական գրականության մասսայական ընթերցանության կազմակերպումը ձեռք է բերում հատուկ կարևորություն, կազմում գրադարանային-մատենագիտական գործի մի մասը: Այն գրադարանային գործի և կրթության հոգեբանամանկավարժական հիմունքներին է պատկանում [140, էջ 49-57, 156, էջ 51-65]:

Հարկավոր է ընդգծել նաև, որ գրադարանավար-մատենագետը մասնագիտական աշխատանքի ընթացքում հանդես է գալիս ոչ միայն որպես կազմակերպիչ և գրադարանային գործընթացի ղեկավար, տեղեկատու-մատենագիտական ապարատի և գրադարանային ֆոնդերի ստեղծող, գիտության և տեխնիկայի նորությունների, գեղարվեստական գրականության տեղեկատու, այլև ունի որոշակի ազդող գործոններ, որոնք ուղղված են կոնկրետ օբյեկտների վրա: Ամեն մի խնդրի և գործունեության կատարման ժամանակ ներկա են անմիջականորեն և միջնորդավորված ընթերցողների կոնկրետ խմբերի հետաքրքրությունը, պահանջմունքն ու հարցումը: Ընթերցողական խմբերը տարբերվում են միմյանցից հասակով, կրթությամբ, բնավորությամբ, գիտական, գործնական, ստեղծագործական բնագավառներով: Մասնագետի գործունեության կարևոր մասը կապված է ընթերցողի սպասարկման հետ: Ընթերցողի հետ յուրաքանչյուր հանդիպումով նա հնարավորություն ունի որոշ հոգեբանա-

մանկավարժական գիտելիքների ներգործություն ցուցաբերել իր ընթերցողների վրա:

Մասնագետներին անհրաժեշտ է նաև պերճախոսություն [44], տաղանդ, փորձ, օրինակելի վարք և քաղաքավարություն [120, էջ 50-52]: Գրադարանավար-մատենագետի անձի օրինակելի հատկությունները գրադարանների սոցիալական գործառույթների իրագործման կարևորագույն պայմաններից է: Դրա համար շատ հետազոտողներ հատուկ ուշադրություն են դարձրել մասնագիտական հատկությունների ու ունակությունների ձևավորման վրա, որոնք անհրաժեշտ են ոլորտի աշխատողներին: Դիալեկտիկական մտածողություն, գիտելիքների կատարելագործում՝ ահա այն հատկությունների ոչ լրիվ թվարկումը, որոնք հարկավոր են մասնագետներին: «Գրադարանավարներին, մատենագետներին և տեղեկատու աշխատողներին, որոնց գործունեությունն անցնում է տեղեկատվական աղբյուրների և այդ տեղեկության սպառողների սահմանակետին, պարտադիր է սերը գեղարվեստական գրականության, գրքերի հետ խորացված աշխատանքի նկատմամբ և այլ հատկություններ, որոնք անհրաժեշտ են մարդկանց հետ ուղիղ և բազմաթիվ շփումների, գեղարվեստական դաստիարակության, կապերի համար՝ տակտ, հավասարակշռություն, մարդամոտություն, անձնական հմայք և այլն: Քանի որ այս բոլոր հատկությունների միացումը մի մարդու մեջ հազվադեպ երևույթ է, ապա համապատասխան մասնագետների նախապատրստման խնդիրների մեջ է մտնում այդ հատկությունների զարգացումը» [57, էջ 122, 62, 148, էջ 49-73]:

Այսպիսով, «գրադարանագիտության և մատենագիտության» մասնագետների պատրաստումը բարձրագույն կրթության դժվար ասպեկտներից է: Այդ բարդությունը պայմանավորված է նախ և առաջ անհրաժեշտ գիտելիքների զգալի ծավալով: Դրա համար պահանջվում են մասնագիտական, հումանիտար, բնագիտատեխնիկական և այլ առարկաների ծրագրերը: Որպես կարևոր գործոն՝ գրադարանային դպրոցների զարգացման ուղիով պետք է նպաստել մասնագիտության գիտական ընկալմանը: Գրադարանային-մատենագիտական

գործի մասնագետների ուսուցման յուրաքանչյուր դպրոցի հայտնվելը սոցիալական անհրաժեշտության իրական դրսևորումն է: Տարբեր երկրներում նման մասնագետների պատրաստումը [47, 93, 138, 143, 148, 151, էջ 45-48] տարբեր ձևով է իրագործվում: Գրադարանային ուսումնական հաստատությունների համակարգերի հետ ծանոթությունը ընդլայնում է կրթության զարգացման մասին գիտական պատկերացումները նաև Հայաստանում, ամրապնդում է գրադարանային-մատենագիտական հաստատությունների աշխատողների սոցիալական դերը:

Չկենտրոնանալով մասնագիտական բարձրագույն կրթության պատմության հարցերի վրա՝ նշենք, որ այդ ուղղությամբ գիտական որոնումները շարունակվեցին ետխորհրդային շրջանում:

Հայաստանում այն լայն ծավալով և նորովի սկսեց զարգանալ հատկապես XXI դարի սկզբներին, որոնք ծրագրային հարուստ բովանդակությամբ արտացոլված են Գ. Ա. Սուքիասյանի հեղինակած ձեռնարկներում [36, 37, 42]:

Խնդրո առարկա հարցերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրադարանային-մատենագիտական գիտելիքի զարգացման գործոնները սերտորեն կապված են իրար և բոլոր սոցիալական համակարգերի հետ: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան լուծելով կոնկրետ խնդիրներ (գրադարանային ցանցերի ընդլայնում և ֆոնդերի համալրում, հրատարակությունների որոշակի միջազգային համագործակցությունների [47] զարգացում ու գիտաժողովների կազմակերպում) մասնագիտական գործունեության ոլորտը հարստացնում է նոր գաղափարներով ու փաստերով: Գիտակրթական գործոնը գրադարանային-մատենագիտական գործի զարգացման գլխավոր հիմքերից մեկն է:

Այդպիսով, հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներ սերտորեն կապված են գրադարանների, գիտատեխնիկական և տեղեկատվական կենտրոնների գործունեության հետ: Մասնագիտական գիտելիքների, ունակությունների և գրադարանային աշխատողների ընդունակությունների,

գիտատեխնիկական և տեղեկատվության մարմինների շնորհիվ լուծվում ու որոշվում են բազմաթիվ խնդիրներ: Գրադարանների և ընթերցողների թվի աճը կրկին ապացուցում է գրադարանային-մատենագիտական գործի հսկայական նշանակության և գրադարանավար-մատենագետի սոցիալական դերի ու հեղինակության մասին: Գրադարանային-մատենագիտական գործի կազմակերպումը, ընթերցանության սպասարկման և կազմակերպման տեխնոլոգիական արդյունավետությունը, բարձր որակավորում ունեցող կադրերով գրադարանների ապահովումը՝ հասարակության ապագա զարգացման երաշխիքն են:

1.2 Գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հարցերը գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման մեջ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման մեջ գրականության ընթերցանության, ընթերցանության ղեկավարման և ընթերցողների դասակարգման հարցերը իրենց բազմանշանակությամբ ու առանձնահատկություններով զբաղեցրել են հիմնարար տեղ: Ներկա ենթաբաժնում դիտարկելով տվյալ հարցերի կարևորությունը հաշվի ենք առել նաև հայ և ուրիշ մասնագետների կարծիքները՝ կախված ընթերցողների հոգևոր պահանջմունքներից, հանձնարարական մատենագիտական գրականությունից, տեղեկատվական, սոցիալական և այլ գործոններից:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակին ընթերցողների շրջանում գրադարանային-մատենագիտական գիտելիքների տարածման գործում մեծ աշխատանք են տարել գիտական, մասսայական, բուհական և մանկական գրադարանները: Նրանց խնդիրն է եղել ամեն կերպ օգնել ապագա մասնագետներին՝ իրենց բնագավառում բազմակողմանի գիտելիքներ ձեռք

բերելուն և գործնականում դրանք կիրառելուն: Գրադարանային-տեղեկատվական սպասարկման, տեսության և պրակտիկայի հիմնահարցերի մշակման գործում, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առաջատար դերը պատկանել է Ալ. Միասնիկյանի անվան հանրապետական գրադարանին, որը 70-80-ական թվականներին արդեն ուներ լուրջ ձեռքբերումներ:

Մեզ հետաքրքրող հարցերին որոշակի անդրադարձ են կատարել Ա. Մ. Թիրաբյանը, Գ. Գ. Աղախանյանը, Գ. Գ. Մկրտչյանը, Հ. Կ. Կոստիկյանը, Ա. Գ. Հակոբյանը և ուրիշներ [2]՝ ընդգծելով ընթերցանության որակյալ սպասարկման գործում գրքի, գրադարանային ֆոնդերի համալրման, գրադարանի տեղեկատու ապարատի դերի բարձրացման և նյութերի մատենագիտական սպասարկման կարևորության մասին: Մեծ նշանակություն է տրվել նաև վերլուծական մասնավորապես հանձնարարական մատենագիտության զարգացմանը:

«Մատենագիտության այս տեսակը,- նշել է Հ.Կոստիկյանը,- առանձնապես մեծ նշանակություն ունի մասսայական գրադարանների համար, որոնք ընթերցողների հետ տարվող աշխատանքում, կատալոգների կազմակերպման և հատկապես ընթերցանության ղեկավարման գործում մշտապես դիմում են հանձնարարական մատենագիտական ձեռնարկներին ու ցանկերին: Մատենագիտության այս տեսակը կարևոր դեր է խաղում ինքնակրթության գործում, իրականացնում է մանկավարժական խնդիրներ, հանդիսանում է ընթերցանության ղեկավարման հուսալի աղբյուր» [2, էջ 118]:

Առաջ է քաշվել նաև «ընթերցանության մշակույթ» [157, էջ 28-38] հասկացությունը՝ միավորելով ընթերցողների դասակարգման բնագավառում ամեն ինչ: «Ընթերցանության մշակույթ» (կամ «ընթերցանության կուլտուրա») հասկացությունը խմբավորում է ընթերցողական փորձը, ակնհայտորեն բացահայտում ընթերցողի կենսագրական կողմերը, գրականության ընթերցանության ձևի յուրացումը:

Սակայն հարց է առաջանում, թե ընթերցանության մշակույթի ո՞ր տարրերն են անհրաժեշտ գրականության ընթերցանության ղեկավարման ժամանակ ընթերցողների տարբերակման և ընթերցանության արդյունավետության բարձրացման համար:

Ընթերցողների դասակարգման ըմբռնումներում, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել հոգեբանական մոտեցումը, երբ հաշվի են առնվում ընթերցանության պահանջի խորությունը, ընթերցողների ակտիվությունը և հետաքրքրությունները, ընթերցանության պահանջի դրդապատճառները, հետաքրքրությունների կառուցվածքը, գրականության ընկալման որակը և այլն: Նկատելի է նաև մանկավարժական մոտեցումը, որի դեպքում ընթերցողները դասակարգվում են ըստ ինքնակրթական ընթերցանության պատրաստվածության, գրքի հետ աշխատելու ունակության աստիճանի: Դեռ XX դարի 70-ական թվականների կեսին Օ. Ս. Չուբարյանը խորացրել և զարգացրել է այս դրույթները [98, 163, էջ 26-27, 164], որոնք արդիական են նաև այսօր:

Մի շարք հեղինակներ անհրաժեշտ են համարել ընթերցողների դասակարգման ժամանակ հաշվի առնել նաև սոցիալական (սոցիալ-ժողովրդագրական) հատկանիշները: Ելնելով ընթերցանության ժամանակ ընթերցողի և գրքի փոխհարաբերության բնույթից՝ ընթերցողի անհատական-հոգեբանական առանձնահատկությունից՝ Ն. Ս. Կարտաշովը բացահայտել է ընթերցողի մշակութային տեխնիկական մակարդակը [135]: Յու. Մ. Տուգովի դասակարգման հիմքում ընկած է անհատի հանրայնացման (սոցիալիզացիա) աստիճանից կախված ընթերցանության ուղղվածությունը [156, էջ 51-56], իսկ ըստ Ս. Մ. Սմիրնովայի դասակարգման՝ որոշակի սոցիալական կամ տարիքային խմբի պատկանելությունը [150, էջ 32-40]:

Կարելի է պնդել, որ ընթերցանության մշակույթը պետք է դիտարկել համակողմանիորեն[38, էջ 47]: Ընթերցանության հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև գրադարանային-մատենագիտական պրակտիկայի կողմնորոշման հիման վրա [149] մենք կարող ենք նշել «ընթերցանության

մշակույթ» հասկացության հիմնական բաղադրիչները՝ որպես ընթերցողական տարբերության հատկանիշ: Դրանք են՝ ընթերցանության ուղղվածությունը, գրքերի ընտրությունը, ընկալման ընթացքն ու ընթերցածի յուրացումը:

«Ընթերցանության մշակույթ» հասկացության որոշակիացման համար տեսական հիմք կարող են դառնալ անհատի սոցիալական հատկանիշները: Տվյալ դեպքում անհատի ուղղվածությունը հանդիսանում է նրա առաջնային հատկանիշը, ակտիվության նախադրյալը, և ընթերցանության ուղղվածությունը կարող է համարվել ընթերցողական մշակույթի հիմնական չափանիշը: Գրականության ընթերցանության ուղղվածության մեջ հիմնականում արտահայտվում է ընթերցանության սոցիալական գործառույթը, որի հասարակական նշանակությունն ուղղված է անհատի դաստիարակմանը և կրթությանը:

Ընթերցողական դասակարգման հոգեբանամանկավարժական հիմքը մշակելու ժամանակ շատ կևոր է հաշվի առնել այն փաստը, որ ընթերցանության մշակույթը գրադարանավարի և մատենագետի համար մասնագիտական գործունեության առարկա է: Կիրառելով ընթերցողի վրա ներազդման տարբեր միջոցներ՝ գրքի մասսայականացնողը դաստիարակում է ընթերցանության մշակույթը՝ որպես ընթերցողական գործունեության անհրաժեշտ պայման: Գրադարանավարը և մատենագետը առօրյա աշխատանքում առնչվել և առնչվում են իրական «ընթերցողական մշակույթի» հետ, որին անհատը հասել է ինքնուրույն աշխատանքի արդյունքում և պետք է կարողանա տվյալ ժամանակաշրջանում այն համապատասխանեցնել հասարակության առաջադրած խնդիրներին:

«Ընթերցանության մշակույթը», որպես նաև մանկավարժադաստիարակչական ազդեցության թիրախ, իրենից ներկայացնում է պլանավորված արդյունք, որին պետք է հասնեն գրադարանավարը և մատենագետը հանրակրթական ընթերցանության բոլոր հաստատություններում: Այն պետք է արտացոլի հանրակրթական ընթերցանության

կազմակերպություններին ներկայացվող սոցիալական ծրագրային պահանջները, «ընթերցողական գործունեության օպտիմալ բնույթը», «տեխնոլոգիական աշխատանքը»: Գրքի սպասարկողը «ընթերցանության մշակույթ» հասկացությունը ներկայացնում է իր կատարյալ տեսքով, և ընթերցողների հետ աշխատանքը ուղղում է անհատների գիտակցական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը: «Ընթերցանության մշակույթը» բաղկացած է անհատի դաստիարակության և կրթության հասարակական խնդիրներից, նրա համակողմանի զարգացման առանձնահատկություններից, գրադարանային-սոցիոլոգիական տվյալներից և, մեր կարծիքով, կարող են բնութագրվել հետևյալ կերպ.

1. Անհատի բազմակողմանի դաստիարակությանը նպաստող տպագիր ստեղծագործությունների ընթերցողական նպատակաուղղվածություն: Ընթերցողի ակտիվությունը ուղղված է նրա գիտական աշխարհայացքի ընդլայնմանը, աշխարհի բնագիտական պատկերը, գեղարվեստական և գեղագիտական արժեքները բացահայտող գրականությանը: Ընթերցանության հասարակական ուղղվածությունը արտահայտվում է ընթերցողական հետաքրքրությունների սահմաններում, որտեղ հետաքրքրությունը համադրվում է բազմակողմանի ընթերցանության հետ: Ընթերցանության ընտրված ուղղությունը արտահայտում է անհատի կարիքները, նրա ընթերցողական գործունեության պոտենցիալ և կարևոր շարժառիթները: Նպատակներն արտահայտում են ընթերցանության հանդեպ վերաբերմունքը՝ որպես անհատի հոգևոր զարգացման միջոցի, և համընկնում են ընթերցողական գործունեության շարժառիթների հետ: Անհատը կամք է դրսևորում ընթերցանության մշակված ծրագիրն իրագործելու համար: Ընթերցանությունը բնութագրվում է առաջընթացությամբ, որի արդյունքը բնության, հասարակության, մարդու մասին գիտելիքների կուռ համակարգն է:

2. Մտածված գրքերի ընտրություն (նպատակաուղղված և պատճառաբանված) անհրաժեշտ (գեղարվեստական) ստեղծագործության ընտրության ժամանակ կողմնորոշվելու ունակություն: Ստացած

տեղեկատվության հիման վրա ընթերցողը կազմում է ստեղծագործության ամբողջական կերպար, որը ընթերցողական գործունեության մեջ երկակի դեր է կատարում: Առաջին՝ ընթերցողը բացահայտում է ստեղծագործությունն իր համար այն դեռևս չկարդացած, տպավորություն է ստանում դրա առավելությունների և թերությունների մասին, երկրորդ՝ ձևավորում է այն ընթերցելու և ընկալելու հրահանգը: Ստեղծագործությունը մինչև ընթերցելը ձևավորված կերպարներն, անհատը համեմատում է արդեն հայտնի, ընթերցողական փորձի արդյունքները ամբողջացնող չափանիշների հետ: Կարդալ ստեղծագործությունը թե ոչ, նա որոշում է մի քանի մտավոր գործողություններ կատարելուց հետո (վերլուծություն, սինթեզ, ընդհանրացում և այլն): Ինչպես գիտենք, գրքերի ընտրությունը կատարվում է նաև լիակատար լրատվության հիման վրա, ինչը տեղեկատվական նշանակություն ունի:

3. Ընթերցանություն: Գեղարվեստական ստեղծագործության ընկալումը ամբողջական է: Ընթերցողը յուրացնում է ոչ միայն դրա որոշակի (փաստերի շերտը), այլև կոնցեպտուալ (գրողի ընդհանուր մտածելակերպը, տեսությունը, կերպարների համակարգը, գեղարվեստական արտահայտության միջոցները) բովանդակությունը, կարողանում է կիրառել ստացած տեղեկատվությունը (գիտելիքը):

Ընթերցանության բարձր մշակույթի հասնելը բարդ գործընթաց է, որը հաղթահարելու համար անհրաժեշտ է նախ լուծել մի շարք հերթական առաջադրված խնդիրներ, տարբերակել ընթերցողներին, հաշվի առնել գրադարանավարին և մատենագետին առաջադրված, փոփոխվող նպատակները՝ ընթերցողի կողմից ընթերցանության մշակույթի մեկ մակարդակից մյուսին անցնելիս: Օբյեկտիվ հնարավորությունները ընթերցողական գործունեության կատարելագործման սոցիալական և հոգեբանական պայմաններն են, որոնց մակարդակը պետք է պլանավորել՝ ելնելով ընթերցողի ընթերցողական մշակույթի զարգացման իրական մակարդակից: Նպատակները, որոնք ենթադրում են ընթերցողական գործունեության հետագա կազմակերպումը, արտացոլում են

գոյություն ունեցող (իրական) մշակույթի մակարդակը: Եթե գրադարանավարն իր գործունեության համար պլանավորել է այն, ինչը իրական չէ, և չի բխում ընթերցողների հնարավորությունից, ապա այդ գործունեությունը հաջողություն չի ունենա և դրական արդյունք չի տա: Մշակույթի իրական և կատարյալ մակարդակների համադրման անհրաժեշտությունը հաստատվում է զարգացնող ուսումնառության տեսությամբ, որի սկզբունքները դրված են գրադարանավարի և մատենագետի գործունեության հիմքում: Հայտնի է, որ Լ. Ս. Վիգոտսկին փորձնական ճանապարհով հաստատել է, որ զարգացման առջևում միշտ ընթանում է ուսուցումը: Նա առաջ է քաշել մարդու մտավոր զարգացման երկու աստիճանների մասին դրույթը՝ ակտուալ և մոտակա զարգացման փուլեր [59]:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հանձնարարական (թեմատիկ) մատենագիտական հրատարակությունները պարունակում են նաև ելակետային ու մատչելի տեղեկատվություններ տպագիր մամուլի վերաբերյալ, առանց որոնց հնարավոր չէ լուծել ընթերցանության ղեկավարման խնդիրները: Դրանք նախատեսված են ընթերցողի իրական ընթերցողական մշակույթի մակարդակի բարձրացման համար: Միաժամանակ այն բովանդակում է ընթերցողի համար համեմատաբար բարդ տեղեկություններ, բայց գրադարանավարի և մատենագետի օժանդակությամբ ընկալվելուց հետո կարող են խթան հանդիսանալ ընթերցողական հետագա գործունեության համար: Այս տեղեկատվությունը, որը նախատեսված է ընթերցողների որոշակի շրջանակի համար, արտացոլում է իր մեջ հանձնարարական մատենագիտության գլխավոր դերը՝ ընթերցողական մշակույթի զարգացումը:

Ընդհանրացնելով ասվածը՝ ընդգծենք, որ անհատների ընթերցողական մշակույթի զարգացման համար, մեր կարծիքով, պետք է կազմել ընթերցողների դասակարգիչ՝ ելնելով ընթերցողների մակարդակի երկու համեմատելի չափանիշներից՝ իրական և կատարյալ (կանխատեսվող): Այս մակարդակների համեմատության ժամանակ դուրս բերված հատկանիշների համադրումը կազմում

է ընթերցողական մշակույթի այս կամ այն տիպը, բնականաբար նաև՝ «ընթերցողների տիպը»:

Կարող է թվալ, որ ընթերցողների այդպիսի դասակարգումը պետք է լինի բազմաստիճան: Բայց դա պայմանավորված է նրանով, որ ընթերցողական մշակույթը բարդ գոյացություն է՝ կազմված ներքին, իրար ստորադաս տարրերից:

Գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ ընդունված է եղել ընթերցողներին տարբերակել «ըստ տարիքի»: Մեզ թվում է, որ ճիշտ է տարիքային տարբերակումը դնել կախման մեջ ոչ այնքան կենսաբանական, որքան սոցիալական հատկանիշներից, դիտարկել այն՝ ելնելով անհատի հանրայնացման աստիճանից: Իսկ վերջինը մեկնաբանել որպես անհատի՝ հասարակության մեջ ընդգրկվելու, նրա անձնական հատկանիշները ձևավորելու՝ որպես սոցիալական դերերի ընտրության պրոցես (ընթացակարգ): Այս դեպքում գրքի մասսայականացումը մարդու հանրայնացման, նրան որպես ընթերցող դաստիարակող ինստիտուտներից մեկն է:

Գրադարանավարի և մատենագետի առջև մշտապես խնդիր է դրվել նաև կազմակերպել յուրաքանչյուր մարդու ընթերցանությունն այնպես, որպեսզի այն օգնի նրան անցնել հանրայնացման հերթական աստիճանը՝ լուծելով որոշակի խնդիրներ, ձևավորել ընթերցողական մշակույթի որոշակի տիպ: Հանրայնացման աստիճաններում առաջին հերթին պարզվում են ընթերցանության բովանդակային կողմերը և դրա ուղղվածությունը: Առանձին ընթերցողական խմբերի համար դա բնութագրական է. այն եղել է հանձնարարական մատենագիտական տեղեկատվության հիմնական բովանդակային կառուցվածքի հիմքը: Ղեկավարվելով շարադրված սկզբունքներով՝ կարելի է առաջարկել ընթերցողների հետևյալ աստիճանական դասակարգումը:

Դրա առաջին աստիճանը կազմվում է ընթերցողների երեք խմբերից, ովքեր ներկայացնում են ընթերցողական մշակույթի երեք տարբեր աստիճանները՝ ըստ անհատի կայացման առանձին փուլերի, հանրայնացման շրջանակների.

I. Ընթերցողներ, որոնց ընթերցողական մշակույթը պետք է համապատասխանի անհատի հասարակական ուղղվածության ձևավորմանը, բարոյական կայացմանը: Այդ խմբին են պատկանում կրտսեր և միջին տարիքի դպրոցականները: Ինչպես վկայում են սոցիոլոգիական հետազոտությունները, նրանց ընթերցանությունը լիովին չի համապատասխանում այդ փուլում ընթերցողական զարգացման առումով անհատին ներկայացվող օբյեկտիվ պահանջներին:

Ելնելով մանուկների և պատանիների իրական ընթերցանության դիտարկումներից [26, 32, 68]՝ որոշվում է նրանց հետ աշխատանքի նպատակը, ընթերցանության այն մակարդակի դաստիարակումը, որի առկայությամբ ընթերցանությունը ուղղված է այնպիսի ստեղծագործություններին, որոնք օգնում են դնել կրթվածության և գիտելիքի հիմքը, հավասարակշռություն ստեղծել գեղարվեստական և գիտա-հանրամատչելի գրականության միջև: Նրանց համար գրքերի ընտրությունը հիմնվում է գրադարանային-մատենագիտական գիտելիքների վրա և «կախված չէ» հրատարակության արտաքին տեսքից (ձևավորման առկայություն կամ բացակայություն, գեղեցիկ կազմ, հին կամ նոր գիրք, ծավալ և այլն): Ընկալումը բնութագրվում է կարծրատիպերի հաղթահարմամբ՝ ֆաբուլա, հերոս, սյուժե, ընթերցածի ընկալման կարողություն, առանձնացվում են ստեղծագործության մեջ ոչ միայն գործողությունները, այլև գաղափարական բովանդակությունը:

II. Ընտրած կենսական ուղու խնդիրներին համապատասխանող դա կնպաստի (ինչպիսի՞ն լինել և ո՞վ դառնալ» հարցերի պատասխանները ստանալուն՝ ընթերցանության կազմակերպման կարիք ունեցող ընթերցողներ: Այս խումբը կազմում են երիտասարդները: Սոցիալական տեսանկյունից նրանց բնութագրական գիծն է սոցիալական դերերի ինտենսիվ կազմավորումը (աշխատողի, քաղաքացու, ընտանիքի անդամի և այլն): Ընթերցանության օբյեկտիվ հետաքրքրությունները գիտակցված են և պատճառաբանված, նախադրյալները և նպատակները համընկնում և ծառայում են կենսական

դիրքորոշման և մասնագիտական կողմնորոշման ընտրության համար անհրաժեշտ գիտելիք և հուզական տրամադրություն ձևավորելում: Գրքերի ընտրությունը պատճառաբանված և նպատակաուղղված է, ընթերցողը կարողանում է օգտվել գրադարանային-մատենագիտական (տեղեկատվական) աղբյուրներից: Ընթերցածի կշռադատումը նպաստում է գիտելիքների համակարգի, բարոյական և գեղագիտական արժեքների ստեղծմանը, որը երիտասարդների հոգեկան աշխարհի հիմքն է, ակտիվորեն կիրառվում է «ո՞վ և ինչպիսի՞ն լինել» խնդիրների լուծման ժամանակ:

III. Ընթերցողներ, որոնց ընթերցողական մշակույթի (կուլտուրայի) աստիճանը պետք է համապատասխանի համակողմանիորեն զարգացած անհատի հոգեկան զարգացմանը: Այս ընթերցողները սոցիալապես հասունացած անհատներ են, ովքեր ընտրել են իրենց կենսական ուղին: Նրանք ունեն զարգացած և համեմատաբար հաստատուն սոցիալական դերակատարություն: Աշխատանքի բնույթը վճռական նշանակություն է ստանում նրանց հոգեկան հարստացման ընթացքում, ամբողջովին ազդում է ինչպես ընթերցանության բովանդակության, այնպես էլ նրա ուղղվածության և ընթերցողական մշակույթի վրա: Դրանում մենք համոզվել ենք նաև մասնագիտական աշխատանքի մեր փորձով:

Սոցիալապես հասուն անձանց խմբին պետք է ղեկավարել, ուղղորդել նրանց ընթերցողական հետաքրքրությունները դեպի այն ստեղծագործությունները, որոնք կնպաստեն նրանց ամբողջական աշխարհայացքին, հասարակագիտական և բնագիտական նվաճումներին, գրականության և արվեստի ստեղծագործությունների գեղարվեստական արժեքներին ծանոթանալուն: Նրանց պետք է սովորեցնել ընտրել գրքեր, որոնք հիմնված են լրատվական պատրաստվածության և հասարակական նշանակալի ընթերցողական հետաքրքրություններին համապատասխան: Շատ կարևոր է հիմնարար գիտելիքների ավելի խորը ընկալումը, որը կնպաստի անհատի

հետագա համակողմանի զարգացմանը գրականությունից ստացած գիտելիքները գործնական կյանքում կիրառելուն:

Նշված ընթերցողական խմբերը, որոնք առանձնացված են ըստ անհատի կայացման և զարգացման աստիճանների (սոցիալիզացիայի աստիճանների), կազմված են ընթերցանության նպատակի սեփական օբյեկտիվ սոցիալական ընկալմամբ, գրքերի ընտրության ուղղվածությամբ, ընկալման բնույթով, ստացած գրական տեղեկատվությունը կիրառելու ունակությամբ: Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ խմբերի ներսում հետագա տարբերակումը կարելի է կատարել ըստ ստացված ընթերցողական մշակույթի:

Որպես օրինակ՝ դիտարկենք երիտասարդ ընթերցողների խմբի հաջորդ տարբերակումը՝ բաժանելով այն երկու ենթախմբի:

1. Երիտասարդներ, որոնց ընթերցողական մշակույթի մակարդակը բնութագրվում է հետաքրքրությունների, նախասիրությունների, ճաշակների անորոշությամբ, ընթերցանության նպատակների և դրդապատճառների ոչ զարգացվածությամբ, որի պատճառով գրքերի ընտրությունը քաոսային է, ուշադրությունը բևեռված է տպագիր ստեղծագործությունների կոնկրետ բովանդակության վրա: Նպատակը ընթերցողական մշակույթի այնպիսի մակարդակի դաստիարակումն է, որի առկայությամբ ձևավորվում է հետաքրքրություն այն գրականության նկատմամբ, որը նպաստում է կենսական կողմնորոշիչներ ընտրելուն և կայունացմանը: Գրքերի ընտրությունը կատարվում է գրադարանի տեղեկատու գրականության օգնությամբ, իսկ գրքի ընկալումը ներառում է ոչ միայն փաստացի նյութերը, այլև՝ հասարակության, բնության, մարդու զարգացման օրենքները:

2. Ընթերցողներ, ովքեր ունեն ընթերցանության կազմակերպման նախնական կարողություններ՝ տեղեկատվական հասարակության մեջ անհատի արժեքային կողմնորոշումների ընտրության հիմնախնդիրների լուծման համար: Ընթերցանության համար գրքերն ընտրվում են ըստ լուրջ տեղեկատվական հիմքի՝ կիրառելով գրադարանային-մատենագիտական աղբյուրները, որտեղ

ընկալումը համակողմանի է և խորը: Այս ենթախմբի ընթերցողական մշակույթի մակարդակը կրտսեր և միջին դպրոցական տարիքում նախօրոք նրանց վրա իրականացված դաստիարակչական ազդեցության, առաջին ենթախմբի երիտասարդների հետ կատարված աշխատանքի ժամանակ առաջադրված նպատակի արդյունքն է:

Երկրորդ ենթախմբի ընթերցողների մոտ, մեր կարծիքով, մեծ մասամբ պետք է զարգացնել հետաքրքրություն կենսական ուղու ընտրությանը նպաստող գրականության նկատմամբ, գրադարանային-մատենագիտական և գրքագիտական գրականությունը, որոնց հիման վրա կատարվում է մտածված ընտրություն, ընկալածը կիրառելու ունակություն: Ընդ որում նրանք առանձնացնում են ստեղծագործության բովանդակային կողմերը, կշռադատում են ընթերցածը և ընդգրկում են ստացած գիտելիքները կենսական ուղու ընտրության հետ կապված գործնական խնդիրներում:

Ընթերցողական մշակույթի կատարյալ մակարդակի հասնելու համար պարտադիր պայման է երկրորդ ենթախմբի ընթերցողների ինքնակրթական տեխնոլոգիական մեխանիզմների կատարելագործումը, ինչին պետք է հասնեն գրադարանավարը և մատենագետը:

Ընթերցողների հետագա տարբերակումը պայմանավորված է գիտելիքի տարբեր բնագավառների վերաբերյալ գրականության ընկալման յուրահատկությամբ, հասարակագիտական և պոլիտեխնիկական ինքնակրթությամբ, ինչպես նաև կախված է քաղաքական հասունության, գեղագիտական ճաշակի աստիճանից, բնագիտական և տեխնիկական գրականությանը տեղյակության, կրթական մակարդակից, գեղարվեստական գրականությունը ընկալելու կարողությունից:

Դիտարկենք տարբերակման երրորդ աստիճանը երիտասարդների ընթերցողական խմբում. սկզբում առաջին, ապա երկրորդ ենթախմբերում:

Առաջին ենթախումբ.

ա) Երիտասարդներ, որոնց ընթերցողական մշակույթի աստիճանը չի համապատասխանում ակտիվ սոցիալական դիրքորոշում ձևավորելու համար գաղափարաքաղաքական ինքնակրթության խնդիրներին:

Նրանք չեն ընթերցել հասարակական-քաղաքական կյանքը և բարոյական հարցերը լուսաբանող գեղարվեստական գրքեր. յուրացումը մնացել է կոնկրետ փաստերը ընկալելու մակարդակին (իրավաբական պրակտիկայից սենսացիոն փաստերի, պարբերական մամուլից, հեռուստատեսության և ռադիոյի հաղորդումներից ներքին և միջազգային կյանքի վերաբերյալ հետաքրքիր իրադարձությունների առանձնացում): Նրանք չունեն գիտելիքների խմբավորման ունակություններ: Գրադարանավարի և մատենագետի խնդիրն է ձևավորել կայուն և հիմնավորված հետաքրքրություն դեպի հումանիտար գրականությունը (հուշագրական /մեմուարային/, պատմագրական, երկրագիտական, հայագիտական, կենսագրական, հրապարակախոսական):

Հատկապես երկրագիտական և հայագիտական մատենագիտությունները, որոնք ըստ տեսակի բաժանվում են ընդհանուրի, ճյուղայինի, թեմատիկի և կենսամատենագիտականի արտացոլում են Հայաստանի և հայ ժողովրդի մասին հայալեզու և օտարալեզու գրականությունը և նրանց խնդիրն է օգնել ընթերցողներին և գիտաշխատողներին օգտվելու համապատասխան գրականությունից: Այդ գործում կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն ժամանակի մատենագիտական ցանկերն ու ուղեցույցները, այլև գրադարանային ֆոնդերի հիման վրա ստեղծված տեղեկատու մատենագիտական քարտարանները:

բ) Ընթերցողներ, որոնց ընթերցողական մշակույթի աստիճանը չի համապատասխանում անհատի արժեքային ձևավորմանն ուղղված ինքնակրթության խնդիրներին: Այս ենթախմբի ընթերցողների գիտահիմացական հետաքրքրությունները սահմանափակվում են պատահականորեն, պարբերական մամուլում հրապարակված փաստերի ընթերցման մակարդակում: Չեն ընկալվում անգամ տեսական բնագիտական և տեխնիկական թեմատիկայի

հիմնախնդիրները: Այս ենթախմբի ընթերցողներին պետք է կողմնորոշել դեպի այն գրականությունը, որտեղ շարադրված են աշխարհընկալման բնագիտական հիմունքները՝ դաստիարակելով նրանց մեջ կայուն հետաքրքրություն այդ թեմատիկայով գրականության նկատմամբ:

գ) Ընթերցողներ, ում ընթերցողական մշակույթի աստիճանը չի համապատասխանում անհատի բարոյական և բարոյագիտական հարցերի գեղագիտական ընկալմանը, ինչը բնորոշ է կենսական ուղու ընտրության ժամանակաշրջանին: Գրքի գեղարվեստական արժանիքները կարևոր չեն, միայն թե դա լինի իրենց հետաքրքրող թեմայով: Ընթերցանության նպատակներն ու նախադրյալները զարգացած չեն, իմաստագոյացման համար դեր չեն խաղում: Ընթերցողները չգիտեն՝ որտեղից գտնել անհրաժեշտ գիրքը: Գրադարաններում երիտասարդների այս խմբի հետ աշխատանքի նպատակն է հիմնախնդիրների գեղագիտական յուրացմանը կողմնորոշելը, ընթերցանության մտահորիզոնի (բոլոր կարևորագույն թեմատիկ և ժանրային համալիրները) լայնացումը, ընթերցանության նպատակի (գեղարվեստական գիրքը ոչ միայն կյանքի դասագիրք է, այլև աշխարհի գեղագիտական ընկալման միջոց) փոփոխումը, գեղարվեստական գրականության գաղափարական բովանդակության յուրացումը:

Երկրորդ ենթախումբ

Երկրորդ ենթախմբում, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել՝

ա) այն ընթերցողներին, ովքեր հետաքրքրվում են հասարակական-քաղաքական թեմատիկայով գրականությամբ: Նրանց բնորոշ է ստեղծագործությունների ընկալումը փիլիսոփայական, սոցիալ-տնտեսական քաղաքական, բարոյական պրոբլեմների առանձնացումով: Այս խմբի հետ աշխատանքի նպատակն է ձևավորել ուղղվածություն դեպի գիտական աշխարհընկալման հասարակական-պատմական հիմքը բացահայտող գրականությունը, պատմական փորձը՝ որպես բոլոր ժամանակների հասարակական կյանքի վերլուծության նախադրյալ: Նաև դաստիարակել

ընթերցանության նախընտրած ուղղվածությանը համապատասխան գրքերի ընտրության ունակություններ:

բ) Ընթերցողներ, ովքեր օժտված են բնագիտական, տեխնիկական գրականության ընթերցանության, մասնագիտական կողնորոշմանը կամ ընտրած մասնագիտությանը նպաստող նախնական կարողություններով: Ընթերցանության մշակույթի զարգացումը այս ենթախմբում ենթադրում է բացառապես աշխարհընկալման բնագիտական հիմքերը հասկանալուն նպաստող գրականության ուղղվածությունը, անհատի ձևավորման համար անհրաժեշտ «մարդ-բնություն» հիմնական խնդիրների շրջանակը:

գ) Ընթերցողներ, ովքեր օժտված են ինքնակատարելագործման խնդրի գեղագիտական ընկալմանն ուղղված ընթերցանության կազմակերպման որոշակի ունակություններով: Այս ընթերցողներն իրենց նախասիրություններին համապատասխան օգտվում են գեղարվեստական գրականության ամբողջ ֆոնդից: Գրադարանավարի և մատենագետի նպատակն է զարգացնել առկա ունակությունները, հետաքրքրությունը դեպի ստեղծագործության գաղափարական և գեղարվեստական բովանդակությունը, նպաստել գեղագիտական արժեքների համակարգի յուրացմանը:

Համաձայն Գ. Գ. Մկրտչյանի ուսումնասիրության՝ «Ընթերցողի երևակայությունը և միտքը գեղարվեստական երկերի ընթերցանության ժամանակ անհրաժեշտ են:

Երկի ընկալման խորությունը կախված է ոչ միայն նրա բարդության աստիճանից, այլև ընթերցողի կուլտուրայի մակարդակից, կամ այն բանից, թե որքանով է նա տիրապետում «ընթերցանության արվեստին»: Ընթերցողների որոշ մասը գեղարվեստական երկի մեջ չի կարողանում տեսնել կյանքի արտացոլումը, ընթերցանությանը մոտենում է որպես ժամանցի միջոցի: Կան ընթերցողներ, որոնք սահմանափակվում են միայն արկածային գրականության ընթերցմամբ, փնտրում են գրքեր, որոնք շեղում են իրականությունից» [32, էջ 57]:

Ի դեպ՝ շատ ընթերցողներ այսօր համակարգչային ընթերցանությունը համարում են «ժամանցի միջոց» և դժգոհում, որ էլեկտրոնային միջավայրն ավելի «շեղման» հնարավորություններ է ստեղծում, քան՝ գրքի համեմատ բուն թեմայով այնտեղից օգտվելը: Եվ պատահական չէ, որ այդ հակադիր տեսանկյուններից ընթերցանության խնդիրը դարձել է բանավեճի առարկա:

Ընթերցողական դասակարգման որոշակիացումը և խորությունը բնորոշվում է նաև նրանով, թե որքան է նկատելի ընթերցողական մշակույթի զարգացման ընթացքը, ինչպես են ներկայացված նրա առանձին տարրերը գրադարանավարի և մատենագետի գործնական-դաստիարակչական աշխատանքի դիալեկտիկայում: Մենք մեր առջև խնդիր չենք դրել տվյալ հատվածում կատարել ընթերցողական դասակարգման լիակատար վերլուծություն, այլ փորձել ենք ներկայացնել դրա հիմնական կառույցը: Սակայն, ելնելով ասվածից, կարելի է պատկերացնել նաև դասակարգման հետագա զարգացման ուղիները: Այսպիսով, ընթերցողների հանրությունը տարբերակվում է ըստ սոցիալական պատկանելության (ընթերցող-բանվոր, ընթերցող-գիտնական, ուսանող-ընթերցող, գյուղական-ընթերցող)՝ սոցիալապես հասուն ընթերցողներից մինչ ամենափոքր ընթերցողական խումբը: Ընթերցողական մշակույթի մակարդակը, ըստ գրականության տարբեր տեսակների (օրինակ, գեղարվեստական), ստեղծման դարաշրջանների և ազգային պատկանելության նույնպես կարելի է ներկայացնել ավելի մանրամասն, քան տվյալ բաժնում:

Գաղտնիք չէ նաև, որ միևնույն ընթերցողը միանգամայն տարբեր կերպ է ընկալում տարբեր տեքստերը, օրինակ, մասնագիտական (բարձր պատրաստվածություն), գիտահանրամատչելին (շատ փոքր զարգացում), գեղարվեստական (բնական զգայունություն և այլն): Չնայած այս ամենին՝ մենք համարում ենք, որ ընթերցողների ընդհանուր դասակարգումը հնարավոր է և անհրաժեշտ:

Այդպիսով, ընթերցանության առանձնահատկությունների գրադարանային-մատենագիտական հետազոտումը և ընթերցողների ընդհանուր դասակարգումը

արտացոլում են ընթերցողների տարբեր տիպերի միջև եղած կապերը՝ կախված ընթերցանության մշակույթի և անձի կայացման մակարդակից, գրականության և գրադարանների տեսակներից, որոշակի տարիքի սահմաններից և այլ առանձնահատկություններից:

Դա են հաստատում նաև նորագույն շրջանի գրադարանագիտական զարգացումները: Ասվածի լավագույն օինակ է ընթերցանության, ընթերցողի և գրադարանի փոխադարձ կապերին նվիրված Յու. Դ. Մելենտևի աշխատությունը [76]:

Ընթերցողների դասակարգման բոլոր առանձնացված աստիճանները պետք են գրադարանավարին և մատենագետին իրենց գործնական աշխատանքի ժամանակ, քանի որ գրքի մասսայականացնողը (սպասարկողը) չպետք է սահմանափակվի իրերի գոյություն ունեցող վիճակով: Նա, որպես ընթերցանության ղեկավար, պարտավոր է իմանա, թե որ ուղղությամբ է պետք կազմակերպել ընթերցողական գործունեությունը, դրա որ գործողություններն են պետք կատարելագործել և ինչպես կողմնորոշվել առաջացած խնդիրները լուծելիս: Ընթերցողների ընդհանուր դասակարգման ստեղծման անհրաժեշտության բացառման պատճառն ընկած է ընդհանուր ձևական տրամաբանական ընկալման (որը բնորոշ է ընթերցողներին) հիմքում: Ընդհանուր ձևական տրամաբանական ընկալման մոտեցման դեպքում համընդհանուրը մեկնաբանվում է որպես ընթերցողի մեջ շեղում եզակիից, յուրահատուկից՝ որպես նրանում եզակի բնութագրական գծի առանձնացում (օրինակ, գրականության որևէ ժանրի ընթերցանության առանձնահատկություներից վերացման դեպքում), ընդհանուր դասակարգումը դառնում է ոչ պիտանի և գործնականորեն անօգտագործելի: Ընթերցողական դասակարգման ստեղծման ժամանակ մենք պետք է ելնենք նրանից, որ համընդհանուրը եզակիի գոյության ձև է և ընթերցանության արտահայտումը որոշակի, բազմաձև արտահայտումներից է՝ պայմանավորված իրարով:

Այսպիսի ընդհանարցումը պետք է դիտարկել նաև տարբեր տեքստերի (մասնագիտական, գիտահանրամատչելի, հայագիտական, գեղարվեստական) ընթերցողների բնութագրերում, և վերլուծվի առանձին դեպքերում՝ գիտական աշխատողի, արտադրությունում աշխատող ընթերցողի, հանրակրթական նպատակներով ընթերցանություն կազմակերպող ընթերցողի և այլն: Նման դասակարգման գործնական անհրաժեշտությունը, մեր կարծիքով, ակնհայտ է. այն գրադարանային-մատենագիտական և տեխնոլոգիական սպասարկման համակարգի ստեղծման հիմքն է, մատենագիտական համակարգի մի տեսակ: Ընդ որում, միևնույն ընթերցողը կարող է պատկանել տարբեր «դասերի» և ստանալ մատենագիտական տեղեկատվություն՝ ըստ իր պահանջմունքների, իր պատրաստվածության աստիճանի:

Ս. Ա. Տրուբնիկովը դիտարկել է ընթերցանության մշակույթը իբրևհամակարգային հասկացություն [157, էջ 28-38], որը կիրառվել է որպես ընթերցողների դասակարգման ընդհանուր չափանիշ, ինչը, մեր կարծիքով, օրինաչափ է: Սակայն, մասնագիտական ընթերցանության մշակույթը, որը կազմված է նույնպիսի կառուցվածքային միավորներից, ինչ-որ հանրակրթական ընթերցանության մշակույթը, տարբերվում է դրանից ընթերցանության ուղղվածությամբ: Մի կողմից ընթերցանության մշակույթը դիտարկվում է որպես ընդհանուր բնութագրական ցուցանիշ բոլոր ընթերցողների համար, իսկ մյուս կողմից՝ տարբեր մասնագիտական, գիտահանրամատչելի, գեղարվեստական տեքստերի ընթերցողների համար՝ որպես որակական որոշակիություն:

Անհրաժեշտ է և' հայտնաբերել հանրակրթական նպատակներով ընթերցողների ընդհանրությունները, և' առանձնացնել կարևորագույն ընթերցողական դրսևորումները եզակի դեպքերում: Ընթերցողների ընդհանուր դասակարգումը պետք է միասնական լինի գրադարանավարի, մատենագետի և գրքի ցանկացած տարածողի համար: Դա թույլ կտա հարաբերակցել նրանց աշխատանքի բովանդակությունը բոլոր փուլերում վերջնական պլանավորվող արդյունքի հետ: Նպատակահարմար չէ ստեղծել տարբեր դասակարգիչներ

երաշխավորական մատենագիտության համար առանձին, գրադարանային համակարգային սպասարկման համար առանձին: Օգտվելով ընդհանուր դասակարգումից՝ գրադարանավարը և մատենագետը կկիրառեն դրա բաղադրիչները յուրովի՝ ելնելով իրենց գործունեության առանձնահատկությունից:

Ընթերցողական միասնական դասակարգման հարցն ունեցել է ևս մեկ տեսանկյուն, որը դիտարկվում է որոշակի անհամապատասխանություն սոցիոլոգների և ընթերցանության իրականացնողների կողմից կազմված դասակարգումների միջև: Սոցիոլոգներն ու հոգեբանները շեշտը դնում են հիմնականում ընթերցողական մշակույթի իրական մակարդակի վրա: Ընթերցանության իրականացնողների ուշադրությունը բևեռում են նպատակային դիրքորոշումների վրա և միշտ չեն հարաբերակցում ընթերցողների իրական մակարդակի հետ, սինթեզում են ընթերցանության բոլոր հետազոտողների աշխատանքների արդյունքները:

Ընթերցողների դասակարգման հիմնական չափանիշը նախ և առաջ պետք է արտացոլի ընթերցանության ղեկավարման գործընթացը: Այդ պատճառով, մեզ թվում է, որ պետք չէ համաձայնվել Լ. Մ. Իսաչկովայի հետ, ով ընթերցողների դասակարգման համար հիմնականը համարում էր կրթական չափանիշը [133]: Չբացառելով կրթության նշանակալիությունը, որպես ընթերցանության մշակույթի զարգացման կարևորագույն պայման, նկատենք, որ նույն կրթական մակարդակի տարբեր ընթերցողների ընթերցանության բովանդակությունը և բնույթը տարբեր են: Մենք լիովին համաձայն ենք Ս. Ա. Տրուբնիկովի հետ [157], ով նկատել է իրական և ձևական կրթական մակարդակի առկայությունը: Յու. Ս. Զուբովը մեթոդաբանական տեսանկյունից որպես կարևոր դրույթ առանձնացրել է այն, որ անհրաժեշտ է գտնել բազային հատկանիշ ընթերցողների դասակարգումը կառուցելու համար: Սակայն այդ միտքը մնում է չզարգացած: «...Գործնականում կրթության չափանիշը, - գրում է Յու. Ս. Զուբովը,-համարյա երբեք հանդես չի գալիս մեկուսացված, ինչը սակայն չի նվազեցնում նրա բազիսային նշանակությունը: Նրա հետ մեկտեղ հանդես են գալիս երեք այլ հատկանիշներ՝

տարիքային, մասնագիտական, ընդհանուր մշակութային» [130, էջ 40-43]: Մեր կարծիքով, հարցն այն չէ, թե ինչն է ինչին ուղեկցել, այլ՝ թե ի՞նչ հարաբերակցությամբ են հանդես գալիս դասակարգող հատկանիշները, ինչպիսի՞ն է նրանց կապը և ենթակայությունը, և թե ինչպե՞ս է մի հատկանիշը կոնկրետացնում մյուսին: Չի կարելի կառուցել ընթերցողների դասակարգիչ՝ առանց մանրամասն վերլուծելու դրանց ներքին հարաբերակցությունը:

Գրադարանագիտության և մատենագիտության խնդիրը այն է որ բացահայտի, թե յուրաքանչյուր հատկանիշն ինչ տեղ է գրավում հատկանիշների համակարգում, որը կիրառվում է ընթերցողների դասակարգման ժամանակ: Դրա լուծումը, ցավոք, դժվարանում է նաև մեր օրերում՝ կապված գրքերի ընտրության հոգեբանական մոտեցումների, տպագիր ստեղծագործությունների և «էլեկտրոնային գրքերի» ընկալման հստակ բաժանման աստիճանների, ընթերցողական պահանջների և տեղեկատվական հետաքրքրությունների զարգացման հետ:

Ընթերցողների դասակարգման գլխավոր հատկանիշների բնորոշման համար կա ևս մեկ տեսանկյուն, և դա պետք է համադրվի ընդհանուր անձային բնութագրերի հետ: Այս տեսանկյունից Յու. Ս. Զուբովի մոտեցումը սկզբունքորեն ճիշտ է, սակայն խնդրի լուծումը, մեր կարծիքով, ճիշտ չէ. անհատի մեջ պետք է առանձնացնել այն հատկանիշները, որոնք հնարավորություն են տալիս բնորոշել ընթերցանության սոցիալական տեսանկյունները:

Բացի այդ, մատենագիտական-դաստիարակչական ազդեցությունը պլանավորելու համար անհրաժեշտ է, որ ընթերցողական դասակարգման մեջ ընթերցողը դիտարկվի և' որպես օբյեկտ, և' որպես սուբյեկտ: Մենք շեշտում ենք այս դրույթը այն պատճառով, որ գոյություն ունի կարծիք, համաձայն որի ընթերցողը չի կարող լինել գրադարանավարի և մատենագետի ներգործության օբյեկտը: Յու. Ս. Զուբովը, օրինակ, համարում է, «...որ արդարացված է ընթերցանության ղեկավարման ժամանակ մանկավարժական ազդեցությունների բացարձակացումը: Ընթերցողը իմացական գործունեության սուբյեկտից

վերածվում է գրադարանավարի և մատենագետի դաստիարակչական-մանկավարժական գործունեության օբյեկտի, ինչն էլ հանգեցնում է ընթերցողական հասարակության դժգոհությունների» [130]: Մեզ թվում է, որ նա որոշակիորեն խախտել է շեշտադրումները: Անխոս, <<Ընթերցողական հասարակությունը>> իրավացիորեն դժգոհում է, երբ նրա հետ վարվում են որպես ազդեցության օբյեկտի, պարտադրում են այս կամ այն հանձնարարականները: Սակայն նման փաստերը խոսում են ոչ թե ընթերցողի հետ աշխատանքի բնույթի մասին, այլ այն մասին, որ գրադարանավարը և մատենագետը այն մեթոդապես սխալ են կատարում: Չճանաչել ընթերցողի՝ միայն մանկավարժա-դաստիարակչական ազդեցության օբյեկտի՝ նշանակում է ժխտել մասսայական ընթերցանության ղեկավարման անհրաժեշտությունը, և չճանաչել հանձնարարող մատենագիտության գոյության իրավունքը: Սա կարելի է նկատել ավանդական և վիրտուալ ընթերցանության երկփեղկվածության դեպքում: Օ. Ս. Չուբարյանը գրել է, «Միայն հասկանալով, թե ինչպիսի խորը հետք է թողնում մարդու գիտակցության մեջ կարդացած գիրքը, ինչպես է այն ազդում աշխարհայացքի և մարդու բարոյական կերպարի վրա, կարելի է բացատրել գրքի պրոպագանդայի, ընթերցանության ղեկավարման բացասումը, տեսնել դրանում «բռնություն անհատի վրա» [98, 164, էջ 28]: Ընթերցողը, որպես դաստիարակության օբյեկտ, առաջին հերթին հանդես է գալիս ընթերցողական լավագույն գործունեության կազմակերպման, այն ընթերցողական մշակույթի կատարյալ մակարդակի բնորոշման մեջ, որը պլանավորում են դաստիարակել անհատի մեջ գրադարանավարը և մատենագետը:

Հանձնարարելի մատենագիտական տեղեկատվության ստեղծման ժամանակ, երբ հաշվի է առնվում իրական ընթերցողական մշակույթը, լուծվում է նաև տվյալ ընթերցողական խմբի համար դրա հասանելի լինելու հարցը: Տեղեկատվական նյութը հավաքվում է՝ նկատի ունենալով ընթերցողների իմացական հնարավորությունները, մատենագիտական գիտելիքների արդեն առկա պաշարը, կոնկրետ առաջադրանքները, մասնագիտությունը և այլն:

Ընթերցողը դիտարկվում է նաև որպես ընթերցողական գործունեության սուբյեկտ:

Մատենագիտական տեղեկատվության պլանավորած ազդեցության արդյունքը միշտ էլ ընթերցողի ակտիվության հետևանք է: Չեզոք ընկալման դեպքում այն ստանալ հնարավոր չէ: Այդ պատճառով էլ գրադարանավարի և մատենագետի հիմնական խնդիրն է ընթերցողին ներարկել ինքնուրույն ընթերցողական գործունեության կարողություններ, դարձնել նրան այդ գործունեության սուբյեկտ: Չի կարելի կառավարել ընթերցողական հետաքրքրությունների պրոցեսը ընթերցողական գործունության հոգեբանական մեխանիզմների կատարելագործման նպատակով, եթե սուբյեկտի կողմից ստեղծված չեն պայմաններ դրա կազմակերպման համար:

Ակնհայտ է, որ որքան մեծ է գրադարանների դերը հասարակության մեջ գրականության տարածման և ընթերցանության զարգացման գործում, այդքանով էլ մեծ են ժամանակի պահանջով գրադարաններում առաջացած խնդիրները: Սույն ենթաբաժնում մենք դիտարկեցինք ընթերցողների դասակարգման համակարգ՝ հիմնվելով ընթերցողական մշակույթի կոնկրետ մակարդակների և անհատի համայնացման աստիճանների վրա համապատասխան: Կարծում ենք, որ ձևավորված լինելով այս սկզբունքներով, դրանք կարող են կիրառվել գրադարանային ընթերցանության ղեկավարման ժամանակ՝ որպես հասարակական կյանքի ղեկավարման բաղկացուցիչ մաս [45, 46]: Հարակից մասնագետների, որոշակի խնդիրներ լուծող, ընթերցողների մասնակցությունը դասակարգման աշխատանքներին պահանջում է համապատասխան հարաբերակցության պահպանում միասնական դասակարգման համար ինչպես նաև՝ տեսական, փորձնական և կիրառական թեմաների հարաբերակցություն: Կարելի է վստահորեն պնդել, որ յուրաքանչյուր գիտություն հաջողությամբ կարող է լուծել իր յուրահատուկ խնդիրները, եթե շարժվում է տեղեկատվական օբյեկտիվ քայլերով:

Այսպիսով, գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ, նրա զարգացման տարբեր փուլերում գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հարցերի գիտական ուսումնասիրությունն ունի ոչ միայն կենտրոնական տեղ: Այդպիսի ուսումնասիրության նշանակությունը անհամեմատ մեծ է տվյալ գործունեության բազմակողմանի զարգացման համար, ինչին էլ նպատակաուղղված են գրադարանագիտական և մատենագիտական մեր հետազոտության արդյունքները:

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1965–1990 ԹԹ.

2.1. Գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացումը Հայաստանում 1965-1980 թվականներին

Առաջին գլխում ներկայացվեցին գրադարանային-մատենագիտական գործունեության էական առանձնահատկությունները և զարգացման բազմաթիվ գործոնները: Նյութերի գիտական վերլուծությունը ցույց տվեց, որ գրադարանային-մատենագիտական գործունեությունը սոցիալական պահանջ է, իսկ կրթությունը, գրքի, գրադարանի, տեղեկատվության և ընթերցանության դերի բարձրացումը՝ հասարակական անհրաժեշտություն:

Սույն ենթաբաժնում քննարկվելու են զարգացման այն ընդհանուր նպատակային ուղղությունները, որոնցով օժտված էր գրադարանային-մատենագիտական գործունեությունը Հայաստանում 1965-1980 թթ.: Նախապես պետք է նշել, որ ուսումնասիրվող ոլորտին էր վերաբերվում դեռ 1959 թ. սեպտեմբերի 22-ին ընդունված ԽՄԿԿ Կենտկոմի՝ «Երկրում գրադարանային գործի զարգացման և նրա վիճակի բարելավման միջոցառումների մասին» որոշումը, որը հիմք դարձավ գրադարանային գործի և մատենագիտության հետագա զարգացման համար:

Այդպիսով, ժամանակին գրադարանային-մատենագիտական գործի զար¬գացումը և զարգացման հարցերի բազմակողմանի ուսումնասիրումը ձեռք էր բերել կարևոր նշանակություն: 1965-1968 թթ. լույս էին տեսել Գ. Գ. Մկրտչյանի, Ռ. Ա. Իշխանյանի և Հ. Կ. Կոստիկյանի ուսումնասիրությունները [33, 16, 13], որոնցում ոչ միայն նկարագրված են անցյալի և ժամանակի գործնական արդյունքները, այլև ապագայի անելիքներն ու զարգացման խնդիրները:

Առաջ էին քաշվել գրադարանային գործի, հայ գրքի և մատենագիտության պատմության ուսումնասիրման, գրադարանային ցանցերի ընդլայնման ու ֆոնդերի համալրման, ընթերցանության սպասարկման, ընդհանուր և ճյուղային (հայագիտական) բնույթի մատենագիտությունների կազմման ու հրատարակման, ինչպես նաև մասնագետների պատրաստման և այլ հարցեր, որոնք սակայն, գիտա-կազմակերպական տեսանկյունից պահանջում էին նոր լուծումներ:

Ըստ ուսումնասիրությունների և համեմատական տվյալների՝ 1960 թ. հանրա-պետությունում գործել են 2653 տարբեր տիպի գրադարաններ, ընթերցողների թիվը կազմել է 500 հազար, գրքատացքը՝ 9,5 մլն: Իսկ մասսայական գրադարանների թիվը 1965թ. հունվարի դրությամբ կազմել է 1091, ֆոնդը՝ 8 մլն. 302 հազար [33, էջ 122, 129]: Հանրապետության խոշոր գրադարանի՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի գրքերի, պարբերականների և տարբեր այլ փաստաթղթային ֆոնդի ընդհանուր քանակը 1965թ. կազմել է մոտ 6 միլիոն, ընթերցողների թվակազմը՝ 18 հազար [13, Պր. Գ, էջ 111, 33, էջ 135]:

Ինչպես հայտնի է, գրադարանային ֆոնդերի համալրման գործում առանցքային նշանակություն ուներ և այսօր էլ ունի նոր լույս տեսած գրականությունը: Այդ առումով որպես հասարակական-տնտեսական կյանքի կարևոր բնագավառ՝ մեծ ուշադրություն է դարձվել նաև գրահրատարակչական գործին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում գործել են «Հայաստան» (սկզբում՝ «Հայպետհրատ»), «Գիտություն», «Միտք», «Լույս», «Գիտելիք» և այլ հրատարակչություններ, որոնք, ունենալով տարբեր ուղղվածություններ, հրատարակել են բազմանուն և բազմալեզու հսկայածավալ գրականություն: Այսպես, եթե 1964 թ. Հայաստանում հրատարակվել է 1240 անուն գիրք՝ 7 մլն. 517 հազար օրինակ տպաքանակով, 68 անուն ամսագիր և 73 անուն լրագիր (չհաշված շրջանային թերթերը)՝ 80 մլն. 814 հազար օրինակ տպաքանակով [78], ապա 1921թ. («Հայպետհրատ»-ի հիմնադրման տարվանից) մինչև 1976 թ. Հայաստանում լույս է տեսել 41 հազար 154 անուն գրականություն՝

272 մլն. 562 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով [28, էջ 7]: Միայն 1966 – 1976 թթ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել 3994 անուն գրականություն՝ 38 մլն. 459 հազար օրինակ տպաքանակով, «Լույս» հրատարակչությունը՝ 1658 անուն, 47 մլն. 586 հազար տպաքանակով, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը՝ 675 անուն՝ 1 մլն. 660 հազար տպաքանակով, Երևանի պետական համալսարանի ԳԱ հրատարակչությունը՝ 510 անուն տարատեսակ գրականություն՝ 1 մլն. 748 հազար օրինակ տպաքանակով [28, էջ 7]:

Մատենագիտական տեղեկատվության և գրադարանային սպասարկման տեսանկյուններից կարևոր ենք համարում նշել նաև հայ և ռուս գրողների ստեղծագործությունների հայերեն հրատարակությունների համեմատական պատկերը 1921 - 1976 թթ. [28, էջ 92 - 93]:

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

(1921 – 1976 ԹԹ.)

Հեղինակներ	*անուն*	*տպաքանակ (հազ. օրինակ)*
Հովհաննես Թումանյան	146	3152
Ստեփան Զորյան	73	922,7
Ռաֆֆի	71	1346
Ալեքսանդր Շիրվանզադե	65	696,3
Նաիրի Զարյան	64	385
Ավետիք Իսահակյան	55	798,2
Դերենիկ Դեմիրճյան	48	588
Վախթանգ Անանյան	46	416
Գեղամ Սարյան	41	247,4
Ղազարոս Աղայան	39	660
Մովսես Արազի	39	455

Եղիշե Չարենց	38	411
Հակոբ Պարոնյան	37	340,5
Մկրտիչ Արմեն	37	229
Ալազան	36	170
Հովհաննես Շիրազ	35	398
Մուրացան	35	1188
Սերո Խանզադյան	34	545
Սիլվա Կապուտիկյան	33	377,5
Խաչատուր Աբովյան	33	239
Նար-Դոս	32	338
Սարմեն	31	92
Գուրգեն Բորյան	29	170
Հմայակ Սիրաս	28	189,5
Գևորգ Էմին	27	246
Սողոմոն Տարոնցի	26	135,5
Ակսել Բակունց	26	212
Գուրգեն Մահարի	25	135
Վրթանես Փափազյան	25	259,5
Գարեգին Սևունց	20	335
Պերճ Պռոշյան	20	345
Վահան Տերյան	17	182

ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ (1921 - 1976 ԹԹ.)

Հեղինակներ	*անուն*	*տպաքանակ (հազ. օրինակ)*
Լև Տոլստոյ	50	600
Ալեքսանդր Պուշկին	48	371
Մաքսիմ Գորկի	40	285
Անտոն Չեխով	24	165,6
Վլադիմիր Մայակովսկի	22	124
Ալեքսեյ Տոլստոյ	19	129
Իվան Տուրգենև	16	111
Նիկոլայ Գոգոլ	15	98
Դմիտրի Մամին-Սիբիրյակ	11	68
Միխայիլ Լերմոնտով	10	72
Նիկոլայ Օստրովսկի	9	78
Կոնստանտին Սիմոնով	9	75
Ալեքսանդր Ֆադեև	8	57
Միխայիլ Շոլոխով	8	69
Նիկոլայ Տիխոնով	6	14

Թվերի վիճակագրական վերլուծությունը հիմք է տալիս պատկերացնել մի կողմից հայ և ռուս գրողների ստեղծագործությունների քանակական կազմի մասին Հայաստանի գրադարանային ֆոնդերում, մյուս կողմից՝ գաղափար կազմելու հրատարակչական քաղաքականության մասին՝ հայ և ռուս գրողների ստեղծագործություններն ըստ պահանջի և պլանաչափ հրատարակելու վերաբերյալ:

Սակայն տարակուսանք կարող է առաջանալ, թե ինչու ցանկում բերված հայ գրողների համեմատ 55 տարիների ընթացքում (1921-1976 թթ.) միայն Վ. Տերյանը կամ Խ. Աբովյանն է քիչ տպագրվել:

Այդուամենայնիվ, հստակ է, թե որքան մեծ է ֆոնդի դերը գրադարանային գործի զարգացման մեջ և ընթերցանության ղեկավարման գործում: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ գրադարանային ֆոնդի գոյությամբ էլ պայմանավորված են գրադարանների գրադարանային-մատենագիտական և փաստաթղթագիտական բազմաթիվ գործոններ, որոնք առանձնահատուկ նշանակություն են ունեցել ինչպես խորհրդային, այնպես էլ ետխորհրդային շրջաններում: Այսպես, «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը [3], որում ամրագրված է. «Սույն օրենքը կարգավորում է գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է գրադարանների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածունների, հաշվառման, համալրման, պահպանման և հանրային գրադարանի հավատագրման կարգը, գրադարանների և գրադարաններից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովում գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերը» [գլուխ 1, հոդված 1]:

Խնդրո առարկա գործոններից են ֆոնդերի ամբողջական ապահովումը և մշտական համալրումը, գրքերի ցուցադրության (հանրապետական և միջազգային) կազմակերպումը, տեղեկատու-մատենագիտական ֆոնդի կազմումը, գրադարանային-տեղեկատվական սպասարկումը, մատենագիտական ձեռնարկների (թեմատիկ, հանձնարարական, գիտաօժանդակ, ճյուղային) համակարգերի ստեղծումը և հրատարակումը, որոնց կիրառման և կատարելագործման անհրաժեշտությունը այսօր էլ էական է:

Նշվածներից յուրաքանչյուրն ունի յուրովի առանձնահատկություն և պատմական զարգացման տարբեր փուլերում աչքի է ընկել բովանդակային-կազմակերպական առանձնակի մոտեցումներով: Այդ տեսանկյունից, օրինակ,

ժամանակին մեծ նշանակություն է տրվել հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության կազմմանը, որի համար ստեղծվեց հատուկ Կանոնադրություն:

Այդ կանոնադրությունը, մեր կարծիքով, կարևոր ուղեցույց եղավ հայ ազգային հետադարձ մատենագիտության հետագա զարգացման համար և զետեղված է 1966 թ. լույս տեսած Ռ. Ա. Իշխանյանի «Հայ մատենագիտության պատմության» Գ պրակում [13, էջ 191-194]: Նրա ընդհանուր սկզբունքները հետևյալն են:

Ա. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտություն նշանակում է հայ տպագիր առաջին գրքից մինչև մեր օրերը երբևէ և որևէ տեղ լույս տեսած հայերեն բոլոր գրքերի կարգավորված ցուցակ:

Բ. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտությունը հայ ամբողջական մատենագիտության մի մասն է՝ միայն հայ տպագիր գրքերն ընդգրկող մասը: Ամբողջական հայ մատենագիտությունը հայ տպագիր գրքերի հետ միասին պետք է ընդգրկի հայկական ձեռագրերը, քարտեզները, նոտային գրականությունը, նկարների, պլակատների, տոմսերի մի շարք հրատարակությունները, հայ պարբերական մամուլը, այնտեղ եղած հոդվածների նկարագրությունները, ինչպես և հայերի ու Հայաստանի մասին այլ լեզուներով եղած գրականությունը:

Առայժմ սկսում է կազմվել միայն հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտությունը:

Գ. Հայ տպագիր գրքի ընդհանուր մատենագիտության դերը կլինի.

1) Ի մի հավաքել և միասնական ցուցակում ներկայացնել տարբեր ժամանակներում, տարբեր տեղեր լույս տեսած հայ տպագիր գրքերի անունները և դրանով ընթերցող հասարակայնությանը, գիտական աշխատողներին, սովորողներին հնարավորություն տալ հեշտությամբ որոշելու, թե որ բնագավառի վերաբերյալ հայերեն տարբերակով ինչ գրքեր գոյություն ունեն և որտեղ կարելի է օգտվել նրանցից, թե որևէ հայերեն գիրք ինչպիսի հրատարակություններ է

ունեցել, թե որևէ հեղինակից ինչ գրքեր կան հայերեն, և յուրաքանչյուրը քանի անգամ է տպագրվել:

2) Նպաստել Հայաստանի և ողջ աշխարհի գրադարաններում գտնվող հայերեն գրքերի ֆոնդերի ավելի գործուն և նպատակասլաց օգտագործմանը ընթերցողների կողմից:

3) Օգնել Հայաստանի, ինչպես և ողջ Խորհրդային Միության ու արտասահմանյան գրադարաններին իրենց հայկական գրքային ունեցվածքը համալրելու գործում:

4) Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը մեծապես կնպաստի նաև գրադարանների հայկական գրականության քարտային գրացուցակների կարգավորման գործին:

5) Ընդհանուր մատենագիտության շնորհիվ նախկին ԽՍՀՄ յուրաքանյուր գրադարան հնարավորություն կունենա ավելի նպատակասլաց օգտագործել այլ գրադարաններից միջգրադարանային աբոնեմենտի միջոցով հայերեն գրքերի ստացման իրավունքը, ինչպես և որոշել, թե ինչ գրքերի ժապավեններ (միկրոֆիլմեր) որ գրադարանից կարող է ստանալ:

6) Վերջապես, հայ գրքի ընդհանուր մատենագիտության կազմելու գործը խոշորագույն մշակութային երևույթ կլինի մեր հանրապետության համար: Նրա շնորհիվ ամենքի առաջ կներկայացվի հայ գրքի և տպագրական արվեստի նշանակությունը, հայերեն լեզվով տպագրված գրականության ողջ հարստությունը:

Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը փաստորեն կլինի տարբեր բնագավառների վերաբերյալ հայերեն լեզվով տպված գրքերի հանրագիտարան, մի խոշորագույն հայագիտական աշխատություն:

Դ. Հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը գրքերի ցուցակի ձև կունենա, այսինքն՝ բաղադրված կլինի հայերեն առանձին գրքերի նկարագրություններից և մի քանի լրացուցիչ նշումներից (համարակալում, գրքերի տեղ, աղբյուրների պայմանական նշաններ և այլն):

Մատենագիտության մեջ ցույց կտրվեն այն գրադարանները կամ գրադարանը, ուր գտնվում է տվյալ հրատարակությունը: Գրադարաններում չգտնվող գրքերի համար կնշվի այն գրավոր աղբյուրը, որտեղից այն առնված է:

Մատենագիտությունը կհրատարակվի գրքի ձևով և բաղկացած կլինի մի քանի ստվար հատորից, ընդ որում, յուրաքանչյուր հատորում ընդգրկված կլինեն գիտության և մշակույթի որևէ բնագավառի (կամ մի քանի մոտ բնագավառների) նվիրված հայերեն գրքեր:

Ողջ հրատարակությունը կունենա հետևյալ տեղեկատու ցանկերը՝ հեղինակային, վերնագրային, ժամանակագրական, ըստ հայ տպագրության օջախների:

Հայ գրքի տպագրության պատմությունը վեր հանելու համար նպատակահարմար է կազմել նաև մեկ լրացուցիչ (զուգահեռ) հատոր, ուր կտրվի 1512-1800 թթ. ընթացքում լույս տեսած մոտ 670 անուն գրքերի ժամանակագրական ցուցակը՝ յուրաքանչյուր հրատարակության ավելի մանրամասն նկարագրությամբ, բովանդակությամբ, բովանդակության ու հրատարակման պատմության վերաբերյալ մանրամասն ծանոթություններով:

Ե. Կազմվելիք մատենագիտության մեջ պետք է ընդգրկվեն 1512-1960 թթ. հրատարակված հայերեն տպագիր գրքերը: Հայերեն տպագիր գիրք նշանակում է հայերեն լեզվով (գրական կամ բարբառ) գրված կամ հայերեն թարգմանված և տպագրության միջոցով որոշակի տպաքանակով բազմացված գիրք:

Ընդհանուր մատենագիտության մեջ պետք է ներկայացվեն նաև հայերեն և որևէ այլ լեզվով (լեզուներով) տպագրված գրքերը, որոնցում հայերեն բնագիրը ծավալով կամ բովանդակությամբ որոշակի ինքնուրույն կշիռ ունի, որի շնորհիվ այն դառնում է հայ գիրք: Մատենագիտության մեջ որևէ միջոցով պետք է ներկայացվեն նաև հայատառ այլ լեզուներով (հայերի համար տպագրված) և լատինատառ հայերեն գրքերը:

Զ. Հայ գրքի ընդհանուր մատենագիտության մեջ չեն ընդգրկվելու.

1) Այլ լեզուներով (ոչ հայերեն) հրատարակված գրքերը, անկախ այն բանից, թե որտեղ են հրատարակվել նրանք (Հայաստանում, թե այլուր) և ինչ բովանդակություն ունեն (հայագիտական և այլն):

2) Պարբերական հրատարակությունները և նրանցում տպագրված հոդվածները:

3) Որոշ կարգի գրքային և ոչ գրքային հրատարակությունները (քննական տոմսակներ, քարտեզներ, աֆիշներ, հրավիրատոմսեր և այլն), որոնց ցուցակը պետք է կազմվի առանձին:

Պետք է նշել, որ դեռ 1963 թ. Հայաստանի ազգային (նախկինում՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական) գրադարանի հայ գրքի մատենագիտության բաժնի նախաձեռնությամբ և Հ. Անասյանի խմբագրությամբ հրատարակվել էր «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ. 1512-1800 թթ.» (308 էջ), որում ժամանակագրական կարգով նկարագրվել է 960 հնատիպ գիրք (չհաշված 7 հմայիլներ և 15 աշխարհագրական քարտեզներ)՝ տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններին համապատասխան, համառոտ լրացումներով ու ծանոթագրություններով:

Սակայն այն ունեցել է փորձնական բնույթ. նրանում նկարագրությունները հակիրճ են, երբեմն վերնագրերն անգամ լրիվ գրանցված չեն, որևէ կերպ չի բացված գրքի բովանդակությունը, չկան նշումներ գրքերի չափսի, ձևավորման, նկարների մասին, չկան անվանաթերթերը (լրիվ), գրքերի հիշատակարանները, չեն նշված արտասահմանյան այն գրադարանները, որոնցում պահվում են այդ գրքերը և այլն [13, Պր. Գ., էջ 208]: Ինչպես նշված է մատենագիտության առաջաբանում, այն օգտագործվել է որպես «ծառայողական ցանկ» [էջ XI]: Բայց պետք է նշել, որ այդ ցուցակը կարևոր դեր է կատարել հայ ազգային մատենագիտության զարգացման ճանապարհին:

1988 թ. լույս տեսավ «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագրության Ա հատորը [20], որը նախորդի համեմատությամբ ամբողջական է: Նրանում ժամանակագրական կարգով ներկայացված են

աշխարհի տարբեր երկրներում տպագրված հայերեն, ինչպես նաև հայատառ այլալեզու գրքերը՝ ընդգրկելով 1095 միավոր: Իսկ 1967 թ. (կազմող Հ. Դավթյանը) լույս էր տեսել «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագրության երկրորդ հատորը [7], որը խմբագրել է Հ. Անասյանը: Այստեղ նույնպես նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով և ամբողջությամբ ընդգրկված է 1724 միավոր գրականություն, այդ թվում 1695-ը՝ լրիվ տվյալներով, 29-ը՝ անթվակիր: Նկարագրության առումով (հիմնականում “de visu”) հաշվի է առնված հեղինակը, վերնագիրը, տպագրության վայրը, տպաքանակը, տարեթիվը, էջերի քանակը, բովանդակությունը, գրքի գտնվելու տեղը, մատենագրական աղբյուրները և այլ տվյալներ:

Ավելի քան երեք տասնամյակ անց հաջորդաբար լույս տեսան ևս երեք հատոր մատենագրություններ՝ «Հայ գիրքը 1851-1900թթ.» (Հ. Գ, 1999), «Հայ գիրքը 1901-1920 թթ» (Հ. Դ, 2007), և «Հայ գիրքը 1921-1930 թթ» (Հ. Ե, 2012), որոնք դուրս են մեր ուսումնասիրության ժամանակագրական սահմաններից:

Զուգահեռաբար անդրադառնանք նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ որպես հայ գրքի և մատենագիտության պատմության համակարգված կենտրոնի մատենագիտական հրատարակություններին:

Մատենադարանը՝ աշխարհի հնագույն ձեռագրական կենտրոններից մեկը, 1965 և 1970 թթ. հրատարակեց «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» երկհատոր աշխատությունները [40, 41]: Ձեռագրացուցակի առաջին հատորում ընդգրկված են 5.000, իսկ երկրորդում՝ 10.408 ձեռագիր գրքեր: Ըստ հին մատենագրության բնագավառների՝ ձեռագրացուցակները ներկայացնում են պատմագրություն, փիլիսոփայություն, տիեզերագիտություն, գեղարվեստական գրականություն, բժշկություն և այլ բնույթի նյութեր: Կազմողների՝ Օ. Եգանյանի, Ա. Ձեյթունցյանի և Փ. Անթաբյանի նպատակն է եղել ստեղծել հայերեն ձեռագրերի ամբողջական ցուցակ և, ի տարբերություն նախկինում հայկական սփյուռքում եղած ձեռագրացուցակների հաջողվել է նրանց:

Հարկ է նշել, որ ձեռագրերի և տպագիր գրականության մատենագիտական նկարագրությունները սկզբունքորեն ու մեթոդապես տարբերվում են իրարից: Ձեռագրի նկարագրությունը բաղկացած է հետևյալ տարրերից.

- N-ը (տվյալ ձեռագրի հերթական գույքահամարը Մատենադարանում),
- խորագիրը (բաղկացած է բնագրի հեղինակի և երկի անունից),
- ձեռագրի ստեղծման ժամանակը,
- վայրը և թվականը,
- գրիչը (ընդօրինակողը),
- ծաղկողը,
- կազմողը,
- ստացողը, պատվիրողը,
- թերթերի քանակը, նյութը (թուղթ կամ մագաղաթ),
- մեծությունը,
- սյունակները,
- գրատեսակը,
- տողերը,
- մանրանկարները,
- պահպանակը,
- կազմը,
- բովանդակությունը

[տես՝ Հ. Ա., էջ 215-218]:

Ձեռագրացուցակն ունի նաև ժամանակագրական, հիշատակարանների, նյութերի, պատառիկ-պահպանակների, տեղանունների և անձնանունների օժանդակ ցանկերը:

Հետագայում Մատենադարանի ձեռագրական ֆոնդի հարստացման, նոր նյութերի ձեռք բերման և սպասարկման նպատակով անհրաժեշտություն եղավ կազմել հայերեն ձեռագրերի մայր-ցուցակ, որն իր ընդգրկմամբ պետք է ունենար ձեռագրագիտական և հայագիտական ավելի լայն նշանակություն: Եվ 1984 թ.

լույս տեսավ «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց»-ի առաջին նոր հատորը [29]՝ ընդգրկելով 300 ձեռագրերի նկարագրություն: Քսան տարի անց՝ 2004թ. լույս է տեսել Բ հատորը, իսկ 2007-2012 թթ.՝ ևս չորս հատոր:

Այդպիսով, Հայաստանի ազգային գրադարանի և Մաշտոցի անվան Մատենադարանի դերը գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման պատմության մեջ անգնահատելի է: Հայ տպագիր և ձեռագիր գրքի մատենագիտությունների կազմումը այդ հաստատություններում շարունակվում է:

Անդրադառնալով «Ցուցակ ձեռագրաց»-ի Ա հատորի քննությանը, Ռ. Իշխանյանը գրել է, որ կազմողները «հիրավի, շնորհակալ և չափազանց օգտակար գործ են արել՝ ստեղծելով Մատենադարանի բոլոր ձեռագրերի նկարագրություններն ամփոփված այս մատենագիտությունը, որը, թեև ոչ լիովին, բայց նկատելի չափով լրացրեց տասնյակ տարիների զգացվող մեծ բացը» [13, Պր. Գ, էջ 294]:

Գրադարանագիտական և մատենագիտական մտքի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ 1967թ. հունիսի 7-8-ին Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանում կազմակերպված գիտաժողովը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին: Գիտաժողովում կայացած զեկուցումները և բարձրացված հարցերը վերաբերել են Հայաստանում գրադարանային մատենագիտական գործունեության զարգացման տարբեր խնդիրներին, գրադարանային ֆոնդերի կազմակերպման և օգտագործման վիճակին, սերունդների դաստիարակության գործում մանկական գրադարանների դերին, գրադարաններում երկրագիտական և հայագիտական մատենագրությունների ստեղծմանն ու գրականության տարածմանը, գրադարաններին գիտա-մեթոդական օգնություն ցույց տալու, ինչպես նաև գրադարանային գործի և մատենագիտության պատմության ուսումնասիրման հարցերին [2]:

Փաստորեն, ինչպես նախկին Խորհրդային միության բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում նշված ժամանակաշրջանում

գրադարանային գործի և մատենագիտության բազմակողմանի զարգացումը ձեռք էր բերել կարևոր նշանակություն:

1970-ական թթ. ԽՍՀՄ-ում, ներառյալ Հայաստանում սկիզբ է դրվել գրադարանային գործի զարգացման նոր փուլի [109; 112], որը սահմանված էր ԽՄԿԿ կենտկոմի 1974 թ. մայիսի 8-ին ընդունված «Աշխատավորության կոմունիստական դաստիարակության և գիտատեխնիկական գործում գրադարանների դերի բարձրացման մասին>> որոշմամբ: Վիճակագրական տվյալներով՝ 1960-1974 թթ., ԽՍՀՄ-ում բացվել էր մոտ 40.000 նոր գրադարան՝ հաստիքային աշխատողներով, գրքային ֆոնդերն աճել էին ավելի քան 1,5 մլրդ օրինակով, գրադարանների թիվը ավելացել էր 1,5 անգամ, իսկ ընթերցողների թիվը աճել ավելի քան 60 միլիոնով: 1974 թ. երկրում կար 360 հազար գրադարան, այդ թվում՝ 128 հազար հանրային և մոտ 60 հազար գիտական ու մասնագիտական: Գրադարաններն ունեցել են 3,7 մլրդ գիրք և յուրաքանչյուր տարի սպասարկել են ավելի քան 180 մլն ընթերցողների [112, էջ 8]:

Վերոնշյալ որոշմամբ խնդիր էր դրվել գրադարանների նոր՝ միասնական կենտրոնական համակարգի (ԳԿՀ) ստեղծման, ինչը ոչ միայն կառուցվածքային, այլև որակական խոր փոփոխություններ էր առաջացնում աշխատանքի բովանդակության մեջ, ապահովում գրադարանների հասարակական դերի բարձրացման, գիտության ու տեխնիկայի նվաճումների մասսայականացման, տեղեկատվական աշխատանքի ընդլայնման գործում: Հետապնդվում էր նաև հետևյալ նպատակը. ապահովել տարբեր գերտեսչությունների գրադարանների կենտրոնացված համակարգերի փոխգործունեությունը և կոորդինացումը ֆոնդերի համալրման, մատենագիտական-տեղեկատվական աշխատանքի ապահովման և ընթերցանության ղեկավարման բնագավառում: Միութենական բոլոր հանրապետություններում կազմվել և հաստատվել էին 1974-1980 թթ. ընթացքում գրադարանները կենտրոնացնելու պլաններ, որոնց իրականացմանը նպաստեց 1975 թ. փետրվարի 3-ին ԽՍՀՄ մշակույթի նախարարության հաստատած «Պետական մասսայական գրադարանների կենտրոնացման

կանոնադրությունը», որով որոշել էին այդ վերակառուցման հիմնական սկզբունքները: Այդ ժամանակ արդեն գործում էր պետական մասսայական (հանրային) գրադարանների ավելի քան 400 կենտրոնացված համակարգ:

Սկսվել էր նաև արհմիութենական գրադարանների կենտրոնացումը: Հետաքրքիր է նշել, որ 1981 թ. Հայաստանում գործել է 108 արհմիութենական գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմել է ավելի քան 96.200 միավոր, ընթերցողների թիվը՝ ավելի քան 85.000, գրքատածքը՝ մոտ 1 մլն 200.000: Միայն Երևան քաղաքում գործել է 60 գրադարան, որոնց գրքային ֆոնդը կազմել է 548.000 միավոր, ընթերցողների թիվը՝ 51.744, գրքատածքը՝ 790.000: Հարկ է նշել նաև, որ ԳՀԿ-ի ընդհանուր աշխատանքները կազմակերպելու համար լույս էին տեսել կիրառելի մի շարք օժանդակ ձեռնարկներ [4, 5, 6, 23]:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, չնայած կատարվող աշխատանքներին, Հայաստանում գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման մեջ առկա են եղել լուրջ թերություններ ու բացթողումներ՝ պայմանավորված գրքային ֆոնդերի համալրման, հաշվառման, ստուգման, պահպանման և սպասարկման հարցերով: Այդ ուղղությամբ հետևողական աշխատանք ծավալելու համար կարևոր նշանակություն ունեցան ՀՀԿ ԿԿ 1978 թ. սեպտեմբերի 19-ի «Հանրապետության գրադարանների և թանգարանների գրքային ֆոնդերի, ձեռագրային և արխիվային նյութերի պահպանման և օգտագործման բարելավման մասին» որոշումը, ինչպես նաև ՀՍՍՀ մշակույթի նախարարության 1979թ. օգոստոսի 30-ի «Հանրապետության պետական մասսայական գրադարանների գրքային ֆոնդերի հաշվառման և պահպանման նկատմամբ հսկողությունը ուժեղացնելու մասին» թիվ 308 հրամանը: Իսկ նույն թվականի օգոստոսի 30-ի թիվ 356 հրամանով Հայաստանի մասսայական գրադարանների ֆոնդերի ստուգման ժամկետները սահմանվել է հետևյալ կարգով. քաղաքային և շրջանային ԳԿՀ-ի համար՝ 10 և 7 տարին մեկ անգամ, քաղաքային մասնաճյուղ-գրադարաններինը՝ 5, գյուղական մասնաճյուղ

գրադարաններինը՝ 3 և մանկական մասնաճյուղ գրադարաններինն ու մանկական բաժիններինը՝ 4 տարին մեկ անգամ:

Գրադարանային-տեղեկատվական ֆոնդերը հասարակության հարստությունն են և, մեր կարծիքով, ազգային այդ արժեքները պետք է պահպանել նույնպիսի սրտացավությամբ ու հոգատարությամբ, ինչպես կպահպանվի ազգային մշակութային ժառանգության յուրաքանչյուր այլ արժեք: Դրանց պահպանման ու օգտագործման անհրաժեշտությունը հաստատվում է նաև ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներով:

Տեղին է նաև նշել, որ գրադարանային, թանգարանային և արխիվային գործունեության բազմաթիվ խնդիրներ իրենց նորովի հնչեղությունը ստացան 2005 թ. ապրիլի 14-15-ին Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի կողմից կազմակերպված «Գրադարանագիտության, մատենագիտության և թանգարանագիտության արդի պրոբլեմները և զարգացման հեռանկարները Հայաստանում» թեմայով գիտաժողովում [113], իսկ ավելի ընդգրկուն՝ հայկական տպագրության 500-ամյակին (1512-1912) նվիրված հանրապետական գիտաժողովում [18]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կարևոր նշանակություն են ունեցել նաև գրադարանային-մատենագիտական դասակարգման (ԳՄԴ) նոր աղյուսակների և գրացուցակների կազմումն ու կիրառումը, որոնցում տեղ գտած դասակարգման անհաջող կառուցվածքի, անճշտությունների և ազգային առանձնահատկությունները հաշվի չառնելու առնչությամբ ժամանակին քննադատաբար հանդես են եկել Ռ. Չիլինգարյանը և Ռ. Իշխանյանը [110, էջ 262-265, 106, էջ 30-34]: Այդ հարցը հետագայում կարգավորվեց ԳՄԴ-ի ճափորոշիչների ստեղծմամբ [84]:

Գրադարանային-մատենագիտական զարգացման գործում ժամանակի պահանջով կարևորվել է նաև աշխատանքների պլանավորումը [34, 167, էջ 19-29], որով մեթոդական ցուցումներ են տրվել ղեկավարման համակարգում

գրադարանային ֆոնդերի համալրման, գրականության մասսայականացման, ընթերցողների սպասարկման և այլ հարցերի վերաբերյալ:

Այս տեսանկյուններից մասնագետների ուշադրության կենտրոնում են եղել նաև միջգրադարանային աբոնեմենտի [115, էջ 9-13] և գրքափոխանակության միջոցներով գրականության ձեռքբերումը, ֆոնդերի և ընթերցողական պահանջների հետ կապված կարևոր խնդիրների լուծումը, գրքի և գրադարանի սոցիալական դերի բարձրացումը:

Հաշվի առնելով գրադարանների և գրադարանային ֆոնդերի զարգացման կարևորությունը՝ Թ. Աղայանը և Ժ. Եգանյանը իրենց հեղինակած գրքում [1], արտացոլել են նախկին Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի գրքերն ու պարբերական հրատարակությունները, հոդվածների համառոտ պատմությունը և մանավանդ՝ գրադարանի ամբողջ ունեցվածքի վիճակագրական վերլուծությունը՝ ըստ գրական բովանդակության, հրատարակչությունների ժամանակագրության և լեզվական հատկանիշների: Նույն գրադարանի հրատարակությամբ 1980 թ. լույս է տեսնում Երևանի գիտական գրադարանների տեղեկատու-ուղեցույց [9], որին նվիրված գրախոսականում Ա. Հարությունյանը նշում է. «Ուղեցույցը շահեկան նյութ է պարունակում ոչ միայն մատենագիտական միջոցներին լավատեղյակ ընթերցողների համար... թե իրեն հետաքրքող ցանկը կամ քարտարանը որ գրադարանում կարելի է ձեռք բերել այլև տեղեկատվական անփոխարինելի աղբյուր է ընթերցողի համար, նաև զուտ որպես մատենագիտական աղբյուրների ուղեցույց» [107]:

Տեսամեթոդական տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցան 1970-80-ական թթ. լույս տեսած Հ. Կոստիկյանի, Գ. Մկրտչյանի, Հ. Դավթյանի և Բ. Մելյանի կազմած ձեռնարկները [30, 32, 8, 31], որոնք հիմնականում նախատեսված էին բարձրագույն հաստատության «Գրադարանային-մատենագիտական բաժնի» ուսանողների համար, բայց նաև ունեն լայն կիրառություն:

Գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ, անշուշտ, մեծ է Հայաստանի ազգային գրապալատի (հիմնադրված 1922 թ.) դերը, որը, սկսած 1925 թվականից մինչև մեր օրերը, հրատարակում է «Տպագրության տարեգիր» (հետագայում նաև՝ «Ժուռնալային հոդվածների տարեգիր», «Լրագրային հոդվածների տարեգիր»)՝ կարևոր դեր խաղալով մատենագիտական տեղեկատվության տարածման գործում: Գրապալատը համարվում է երկրում լույս տեսած գրականության հաշվառման և գրանցման պետական մատենագիտական եզակի կենտրոն: Այստեղ են հրատարակվել հայ գրքի, պարբերական մամուլի և ատենախոսությունների վերաբերյալ մատենագիտական մի շարք արժեքավոր աշխատանքներ, վիճակագրական նյութեր:

Ուշադրության են արժանի նաև 60-80-ական թթ. ստեղծված գրադարանային-մատենագիտական այնպիսի գործեր, որոնք ամփոփվել են ուշ շրջանի հրատարակություններում և հանրագումարի բերված վերլուծվել են ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում:

Այսպիսով, հենվելով նշված ժամանակաշրջանի գրադարանային-մատենագիտական գործունեության հետազոտության արդյունքների վրա, կարելի է անել հետևյալ եզրակացությունները:

- Գրադարանային-մատենագիտական գործունեության կազմակերպման ու ղեկավարման հաջողությունները հիմնականում պայմանավորված են եղել խորհրդային պետական-կուսակցական և համապատասխան այլ որոշումներով ու կանոնակարգերով:
- Գրադարանային-մատենագիտական գործում գերիշխող են եղել մեթոդական-հրանգչական ուղեցույցները, որոնք գիտա-կազմակերպական լայն առումով չեն ընդգրկել մասնագիտական համակարգի զարգացման տարբեր ոլորտները:
- Քանակային առումով ավելի շատ են կազմվել գործնական բնույթի, քան գրադարանային գործին ու գրահրատարակչությանը վերաբերող վերլուծական աշխատանքները:

- Քանակապես քիչ են գիտա-տեսական հրատարակությունները, որոնք մեթոդաբանական տեսանկյունից մասամբ սահմանափակվել են «Ազգային մատենագիտության» պատմության շրջանակում և կրել են թեմատիկ բնույթ:
- Դրական առաջընթաց պետք է համարել հայ գրքի (տպագիր, ձեռագիր) և հետադարձ մատենագիտական ցանկերի (գեղարվեստական, քննադատական, հայագիտական, մանկական գրականության բովանդակությամբ) հրատարակումը և այդ ուղղությամբ գործընթացի շարունակությունը:
- Գրադարանային-մատենագիտական (կրթական, կազմակերպական, տեսության ու պրակտիկայի փոխզարգացման և այլ հարցերին առնչվող) գործունեության զարգացման մեջ անհամեմատ նկատելի դեր են կատարել բուհական ուսումնական ձեռնարկներն ու գիտաօժանդակ այլ նյութերը:

Մեր նյութի ուսումնասիրության շրջանակում են գտնվել նաև խորհրդային գրադարանագիտության և մատենագիտության մեջ լայն կիրառություն ունեցած այնպիսի հեղինակների գործեր [43, 70-71, 55, 69, 99, 94, 62, 60, 85-87, 93, 95], որոնք, սակայն, չեն մասսայականացվել կամ հազվադեպ են հիշվել տեղական հայկական հրատարակություններում: Նրանցից են Կ. Ի. Աբրամովը, Օ. Պ. Կորշունովը, Ա. Ն. Վանեևը, Վ. Ս. Կրեյդենկոն, Օ. Ս. Չուբաբյանը, Վ. Ի. Տերյոշին, Յու. Ս. Զուբովը, Ռ. Ս. Գիլյարևսկին, Յու. Ն. Ստոլյարովը, Շ. Խ. Շիրան, Վ. Ա. Ֆոկեևը և ուրիշներ: Նրանց գործունեության դերը մեծ է ոչ միայն խորհրդային շրջանի (մինչև 1991 թ.) գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության զարգացման բնագավառներում, այլև նրանով, որ ետխորհրդային շրջանի այդ բնագավառների բազմաթիվ զարգացումներ ու խնդիրների լուծումներ հենվել են նրանց գիտա-տեսական հայացքների վրա:

2.2. Գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման ուղղությունները և հեռանկարները Հայաստանում 1981-1990 թվականներին

Անցյալ դարի 80-ական թվականներին ավելի են ընդլայնվում գրադարանային-մատենագիտական գործունեության զարգացման սահմանները: Դա բացատրվում է նախ և առաջ գրադարանների ցանցի ընդարձակմամբ ու նորանոր առանձնահատկությունների ձեռքբերմամբ: 1981 թ. Հայաստանում գործել են 3200 գրադարաններ՝ 65 միլիոն օրինակ գրքային ֆոնդով, բոլոր գրադարաններից օգտվողների թիվը կազմել է 1 միլիոն 860 հազար մարդ, որոնց ընթերցանության համար տրվել է 46 միլիոն օրինակ գրականություն: Զարգացման գործընթացը արդյունավետ և անհրաժեշտ տեղեկատվական նյութերը (գիտելիքները) ավելի հասանելի ու նկատելի դարձնելու համար լայն կիրառում են ստացել նոր մեթոդներ՝ «Մասնագետի օրեր», «Ինֆորմացիայի օրեր», «Գրականության տեսություններ» և այլն:

Չնայած այդ բոլորին՝ գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ առկա են եղել մի շարք թերություններ, որոնք պահանջել են կատարյալ լուծումներ: Այսպես, գրականության նկատմամբ աճող պահանջին համապատասխան լիովին չեն օգտագործվել գրադարանային ֆոնդերը, կազմակերպված բնույթ չի ստացել շերտավորված (խմբակային) եղանակով ընթերցանության սպասարկումը, դեռևս անբավարար վիճակում են եղել առանձին գերատեսչությունների ենթակա գրադարանների գործունեության կոորդինացումը: Թերություններ են գրանցվել գրադարանային աշխատանքների հաշվառման, տեքստային և վիճակագրական հաշվետվությունները կազմելու գործում, բավարար հիմքերի վրա չեն եղել մասնագետների պատրաստման ու վերապատրաստման գործը, ինչը խիստ կարևոր է նաև արդի

ժամանակաշրջանում: Այդ հարցերում լավագույն հաջողությունների հասնելու համար պլանավորվել է՝

– կատարելագործել ու զարգացնել հայրենասիրական գրականության տարածումը ընթերցողների շրջանում,

– ընդլայնել խորհրդային ժողովուրդների հերոսական, հեղափոխական, մարտական և աշխատանքային սխրագործությունները լուսաբանող գրականության տարածումը, ապահովել գրադարանների մասնակցությունը կազմակերպվող հասարակական-քաղաքական միջոցառումներին՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 65, ԽՍՀՄ կազմավորման 60 և խորհրդային ժողովրդի՝ Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 40-ամյակներին,

– հատուկ ուշադրություն դարձնել դպրոցականների, պատանիների գրադարանային-մատենագիտական սպասարկումը գործառական կարգով կազմակերպելուն, օգնել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում,

– խորացնել ընթերցողների հետ տարվող աշխատանքները՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական, սոցիալ-հոգեբանական, տարիքային և կրթական առանձնահատկություններն ու նախասիրությունները,

– Հայաստանի բոլոր գրադարանների գործնական աշխատանքներում արմատավորել զանգվածային-տեղեկատվական և արդյունավետ միջոցառումներ,

– գրադարանային-մատենագիտական գիտահետազոտական աշխատանքների բնագավառում բարձրացնել հետազոտությունների տեսական մակարդակը:

Ըստ «ԽՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման 1981-1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների» որոշման՝ նախատեսվել են գրադարանային-մատենագիտական գործի հետագա զարգացման համար ապահովել հետևյալ հիմնական խնդիրները՝ բարձրացնել գրքի և գրադարանի հասարակական-դաստիարակչական դերը, ընթերցանության մեջ ներգրավել երկրի բնակչությանը, շարունակել

գրադարանների կենտրոնացման աշխատանքները, կոորդինացնել գիտական և մասնագիտական գրադարանների գրքային ֆոնդերի համալրման աշխատանքները, ուշադրություն դարձնել գրադարանները նյութատեխնիկական բազայով ամրապնդելու հարցին, կատարելագործել ոլորտի ղեկավարման համակարգը, հրատարակել գրադարանագիտական-մատենագիտական բնույթի ուսումնասիրություններ ու հանձնարարական ձեռնարկներ, պատրաստել բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետներ՝ հետևելով ըստ անհրաժեշտության նրանց տեղաբաշխմանը:

Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում լույս են տեսել բազմաթիվ հրապարակումներ, որոնք պատմական և տեսամեթոդական հարցերի արտացոլմամբ ոչ միայն նորություն էին մասնագիտական ոլորտում, այլև բովանդակային բազմակողմանի նշանակությամբ խթանել են բազմաթիվ հարցերի լուծմանը: Այդ հրապարակումները կարելի է բաժանել մի քանի խմբերի:

- Գեղարվեստական գրականություն և գրականագիտության մատենագիտություն [Հ. Մ. Դավթյան, Ս.Ա. Տրուբնիկով, Յու. Մ. Լաուֆեր – 8, 52, 72]:
- Ընդհանուր գրականագիտություն, մատենագիտություն և գրքագիտություն [Ա. Ա. Բելովիցկայա, Կ. Ի. Աբրամով, Օ. Պ. Կորշունով, Ա. Ն. Վանեև, Օ. Ս. Չուբարյան, Ա. Ս. Չաչկո, Ջ. Խ. Շիրա, Ն. Ս. Կարտաշով – 48, 53, 55, 71, 97, 99, 101, 136, էջ 17-31]:
- Գրքի և գրադարանային գործի պատմություն [Ռ. Ա. Իշխանյան, Գ. Ջ. Լևոնյան Կ. Ի. Աբրա,մով, Օ. Ի. Տալալակին, Գ. Լ. Լեվին – 12, 14, 43, 91, 139]:
- Ֆոնդագիտություն [Յու. Ն. Ստոլյարով, Վ. Ի. Տերյոշին – 85, 87, 94]
- Երկրագիտական մատենագիտություն և կենսամատենագիտություն [Գ. Ա. Սուքիասյան, Ն. Ն. Շչերբա 114, 166]:
- Կազմվել և հրատարակվել են նաև գրադարանային ֆոնդերի համալրման [6], հայ պարբերական մամուլի, քննադատության [21, 22] ու խորհրդահայ գրականության [35] վերաբերյալ համահավաք և հանձնարարական

մատենագիտական ցանկեր, որոնց զարգացման անհրաժեշտությունը արդի շրջանում անհամեմատ մեծ է:

- Քիչ չեն նաև ընդհանուր բնույթի այնպիսի հրապարակումներ, որոնք նվիրված են մասնագետների պատրաստման և բուհական կրթության զարգացման հարցերին [42, 47, 54, 67, 75, 79, 118, 120, 121, 132, 141, 143, 151, 160, 162]:
- Առանձին խումբ են կազմում Հայաստանի գրադարանների կենտրոնացված համակարգերի, ինչպես նաև գիտական և գիտակազմակերպչական աշխաանքների վերաբերյալ վերլուծական ու հաշվետվական հրատարակությունները [19, 24, 23, 25], որոնց գործնական նշանակությունը նույնպես մեծ է:

Այստեղ կուզենայինք անդրադառնալ հայ հեղինակների մի քանի աշխատություններին, որոնք տեսամեթոդական և պատմամեթոդական հարցերով ներգործել են գրադարանային-մատենագիտական գործընթացի վրա: Այսպես, դեռ 1970-ական թթ. վերջերին կազմած «Մատենագիտություն» ձեռնարկում [30] Հ. Կ. Կոստիկյանը նշել է «մի շարք ընդհանուր խնդիրներ, որոնց յուրացման հիման վրա միայն կարող էր ճյուղային մատենագիտությունների (ճյուղային գիտությունների վերաբերյալ գրականության մատենագիտության) հաջող և արդյունավետ զարգացումը: Այդ խնդիրներն են՝

1. բացահայտել մատենագիտության դերն ու նշանակությունը ԽՍՀՄ-ում, պարզել նրա ղեկավար սկզբունքներն ու կարևորագույն մեթոդները,
2. ծանոթացնել մատենագիտության պատմության և արդի վիճակի, ինչպես նաև ՍՍՀՄ-ում նրա կազմակերպման հետ, մատենագիտությամբ զբաղվող հիմնարկների և գրադարանների գործունեության հետ,
3. ուշադրությունը կենտրոնացնել խորհրդային գրադարանների աշխատանքում օգտագործվող ընդհանուր բնույթի մատենագիտական կարևորագույն աշխատությունների և ձեռնարկների ուսումնասիրման վրա,

4. ծանոթացնել գրադարանների մատենագիտական աշխատանքի կազմակերպմանն ու մեթոդիկային, անհրաժեշտ ունակություն պատվաստել գրադարանների ընթերցողներին, ինչպես նաև կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկների մատենագիտական սպասարկման համար,

5. բացահայտել գիտական տեղեկատվության և մատենագիտության խնդիրների ընդհանրությունը և անխզելի կապը ներկա պայմաններում, գրադարանների դերն ու տեղը մատենագիտական տեղեկատվական ծառայության համակարգում» [30, էջ 3]:

Համաձայն հեղինակի՝ պետք է ընդգծել, թե որքան մեծ է մատենագիտության հասարակական դերն ու նշանակությունը ժամանակի հոգևոր կյանքում, մշակութային գործի կազմակերպման ու գիտատեխնիկական ընդհանուր զարգացման գործընթացում: Հեղինակը, մեր կարծիքով, համոզիչ կերպով ցույց է տվել, որ տպագիր արտադրանքի տարեցտարի աճող քանակը, հայկական և արտասահմանյան գիտության և տեխնիկայի արագ զարգացումները, գիտելիքների տարբեր բնագավառների ճյուղավորումը, ինչպես նաև գիտական հետազոտությունների միջազգային բնույթը, հրամայական պահանջ են առաջադրում գիտատեխնիկական տեղեկատվության և մասնագետների մատենագիտական սպասարկումը արդյունավետ ու հստակ ձևով կազմակերպել:

Մատենագիտության տեսակային զարգացումների մեջ, ինչպես հայտնի է, կենտրոնական տեղ են զբաղեցրել ընթացիկ, հետադարձ, հանձնարարական, գիտատեղեկատվական, թեմատիկ և այլ բնույթի մատենագիտությունները, որոնք ներառելով բազմաբովանդակ և տարատեսակ տեղեկատվակիր նյութեր (գիրք, պարբերական մամուլ և այլն), այսօր էլ կատարում են իրենց անփոխարինելի դերը տեղեկատվական և սոցիալական հաղորդակցությունների համակարգում: Այդ տեսանկյունից Հ. Կոստիկյանի ձեռնարկը զգալի նշանակություն ունեցավ կրթական գործում և գրադարանային-մատենագիտական գործի կազմակերպման բնագավառում:

Ակնհայտ է, որ գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ կարևոր տեղ պետք է հատկացվեր նաև մատենագիտական ճյուղային զարգացումներին ու նրանց տեղեկատվական օբյեկտը հանդիսացող գրքի պատմության ուսումնասիրությանը: 80-ական թվականներին այդ բացը եկան լրացնելու Ռ. Ա. Իշխանյանը և Հ. Մ. Դավթյանը:

Ռ. Ա. Իշխանյանի «Հայ գիրքը 1512-1920 թթ.» [12] ակադեմիական հրատարակությունը՝ նվիրված հայ տպագրության ավելի քան 400-ամյա պատմությանը, իրոք, նոր երևույթ էր ժամանակի ուսումնասիրությունների շարքում: Տալով հայ գրավոր մշակույթի՝ գրի ու ձեռագիր գրքի պատմությունը՝ հեղինակն անդրադարձել է միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցած մեզ համար շատ կարևոր գրադարան-մատենադարանների գոյության փաստին: Դրանք ոչ միայն կարևոր դեր են խաղացել ձեռագիր գրականության պահպանման, այլև ընթերցանության ու կրթության զարգացման գործում: Դրանցից են Էջմիածնի, Հաղբատի, Սանահինի և այլ վանքերին կից գրադարան-մատենադարանները, որոնց ձեռագիր գրքային ֆոնդերի հիման վրա էլ կազմված են եղել գրացուցակներ, զարգացել է մատենագիտական գործը: Հայկական ձեռագրերի ամենահարուստ կենտրոնը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանն է (որոնց ցանկերի կարևորության մասին նշված է մեր ատենախոսության մեջ), իսկ ձեռագրերի մնացած մասը գտնվում են Վենետիկում, Երուսաղեմում, Վիեննայում և այլուր:

Հեղինակի գրքում մեծագույն մասը հատկացվել է հայ տպագրության պատմությանը՝ սկսած 1512 թ. մինչև 1920 թ.: Ընդհանուր գծերով նկարագրված են Վենետիկի, Կոստանդնուպոլսի, Հռոմի, Լվովի, Նոր Ջուղայի, Էջմիածնի, Մադրասի, Սանկտ-Պետերբուրգի, Մոսկվայի և հայկական սփյուռքի այլ գաղթօջախներում գործած գրատպական կենտրոնները, նրանց դերը հայ գրքի ու պարբերական մամուլի տարածման, ինչպես նաև ընդհանուր մշակույթի զարգացման մեջ:

Մեզ համար կարևոր է նաև այն, որ բացի հայերից, հեղինակը գրքում հիշատակում է մի քանի եվրոպացիների՝ Գուլիելմ Պոստելի, Բլեզ դը Վիժների և Գետանոս Պալմայի անունները, որոնց տպագիր աշխատություններում տեղեկություններ կան հայերի, Հայաստանի ու հայոց լեզվի մասին [12, էջ 43-44]՝ դրանով իսկ ունենալով հայագիտական մեծ նշանակություն: Ռ. Իշխանյանի գրքի պատմությունը արժեքավոր է նաև նրանով, որ նրանում ծավալուն տեղ է հատկացվել Մխիթարյանների գործունեությանը, արժևորվել են նրանց մատենագիտական հրատարակությունները, հատկապես Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտությունը» (1883 թ.) և Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» (1909-12) [ն. տ., էջ 131]:

Մյուս աշխատանքը, որը նույնպես լույս է տեսել 80-ական թվականներին, Հ. Մ. Դավթյանի «Գեղարվեստական գրականություն և գրականագիտության մատենագիտությունն» է [8]: Հ. Մ. Դավթյանի, նշված ուսումնական ձեռնարկը ճյուղային համանուն առաջին տեսական ուսումնասիրությունն է: Նրանում հստակ պատկերացում է տրված գեղարվեստական գրականության տեսակների ու հասարակական դերի մասին: Կարևորվել է հայ և ռուս հեղինակների գրական-գեղարվեստական և գրականագիտական-քննադատական հրատարակությունների, ինչպես նաև հայալեզու և ռուսալեզու գրական-գեղարվեստական պարբերականների դերը հասարակական կյանքում, շրջանցված չէ նաև հրատարակչությունների նշանակությունը դրանց տպագրության գործում:

Այնուհետև հայ և ռուս հեղինակների մատենագիտական գրքերի վերլուծական նկարագրությամբ հեղինակն անդրադարձել է գրական մատենագիտությունների տեսակներին ու կառուցվածքին, դրանց ստեղծման ու զարգացման ընթացքին: [8, էջ 41-87]:

Հ. Դավթյանի սույն աշխատանքը կարևոր ուղեցույց և սկզբնաղբյուր եղավ մասնագետների ու նրանից օգտվողների համար: Այն մինչև այսօր էլ չի կորցրել իր տեսական և գործնական կիրառությունը:

Ուսումնագործնական տեսանկյունից կարևոր է նշել նաև Բ. Գ. Մելյանի աշխատանքը [31], որը նվիրված է ոչ պակաս կարևոր նշանակությամբ մանկապատանեկան գրականության մատենագիտության հարցերին:

Վերոնշյալ խնդիրների լուծմանը զուգընթաց ուշադրություն է դարձվել նաև գրադարակային խորհուրդների դերին՝ կոորդինացման և ինտեգրացման ճանապարհով գրադարանային-մատենագիտական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Գրադարանային ցանցի աճը, գրքային ֆոնդերի (հավաքքաու) օգտագործումը և աշխատանքների արդյունավետության բարձրացումը բացառապես կապված են եղել գիտատեխնիկական նվաճումների տարածման ու տնտեսության մեջ նրանց ներդրման հետ, որոնցով ամրապնդվել են գրադարանների միջգերատեսչական և ներգերատեսչական փոխհարաբերությունները:

Գրադարանային խորհուրդներն իրենց հրահանգչական-մեթոդական հանձնարարականներով փաստորեն կոորդինացնում, ավելի արդյունավետ էին դարձնում տարբեր գերատեսչություններին պատկանող գրադարանների գործունեություն, ինչպես միութենական բոլոր հանրապետություններում, այնպես էլ ԽՍՀ-ում:

Գիտական հետազոտությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում գրադարանային շինարարության կարևորագույն հիմնախնդիրների քննարկման և գրադարանների դերի ընդլայնման հետ կապված հանձնարարականների մշակման համար ստեղծվել և արդյունավետ գործունեություն է ծավալել ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրությանը (մշակույթի նախարարություն) կից գրադարանային խորհուրդը: Խորհրդի գործունեությունն, ըստ ամենայնի, օժանդակում էր տարբեր տիպի գրադարանների միջև ավելի ամուր կապերի հաստատմանը:

Համակարգման գլխավոր խնդիրներից մեկը ֆոնդերը համալրելու նպատակով նոր և արտասահմանյան գրականություն (գիրք, պարբերական մամուլ) ձեռք բերելն էր: Այնպիսի գրադարաններ, ինչպիսիք Հանրապետական են

գիտա-տեխնիկականը, Հանրապետական գիտաբժշկական, Հանրապետական գիտական գյուղատնտեսականը և Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետականը գրադարանները, նոր ստացված գրականության մասին հրատարակում էին տարբեր տեսակի, այդ թվում մատենագիտական տեղեկատուներ:

Խորհուրդների գործունեության և գրադարանային կապերի հաստատման շնորհիվ մեծ նշանակություն է ստանում միջգրադարանային աբոնեմենտը (որի մասին կխոսենք ստորև):

Կարևորելով գրադարանային-մատենագիտական աշխատանքներում գրադարանային խորհուրդների դերը՝ Ե. Օսիպյանը նշել է, որ խորհուրդների կոորդինացիոն գործընթացները դեռևս համակարգված չէին, զգացվում էր գիտական աշխատանքների պակասը: Այդ առիթով «անհրաժեշտ է գիտական գրադարանների ուշադրությունը մոտակա տարիներին սևեռել համատեղ կոմպլեքսային գիտական աշխատանքներ կատարելու, գիտական հետազոտու-թյունների արդյունքները պրակտիկայում ակտիվ ներդնելու վրա» [117, էջ 16]:

ԽՍՀՄ ստանդարտների պետական կոմիտեի 1981թ. մայիսի 14 -ի թիվ 2369 որոշմամբ ուժի մեջ է մտնում «Միջգրադարանային աբոնեմենտի պետական միասնական համակարգի 7.31-81 պետական ստանդարտը»: Պետք է նշել, որ մինչև 1981 թ. միջգրադարանային աբոնեմենտի ստեղծումը՝ աշխատանքները կազմակերպվում ու ղեկավարվում էին դեռևս 1969 թ. հաստատված «ՍՍՀՄ միջգրադարանային աբոնեմենտի համապետական միասնական համակարգի կանոնադրությունը» փաստաթղթի հիման վրա:

Միջգրադարանային աբոնեմենտի (ՄԳԱ) պետական միասնական համակարգի պետական նոր ստանդարտը (չափորոշիչը) կոչված էր ապահովելու բոլոր գրադարանների, գիտատեխնիկակա տեղեկատվության (ԳՏՏ) մարմինների ֆոնդերի և մատենագիտական-տեղեկատվական աղբյուրների նյութերի փոխադարձ օգտագործումը:

Այդպիսի իրավունքը լայն հնարավորություններ էր ընձեռում լիովին բավարարելու գիտահետազոտական հաստատությունների, արտադրական

ձեռնարկությունների, գիտության զանազան ճյուղերով զբաղվող գիտնականների, ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող մասնագետների և ընդհանրապես բոլոր ընթերցողների գրադարանային մատենագիտական պահանջմունքները տպագիր երկերով, տեսալսողական և չհրապարակված նյութերով:

Անկախ գերատեսչական պատկանելությունից և ունեցած գրքային ֆոնդերի քանակից՝ ԽՍՀՄ տարածքում գործող բոլոր գրադարաններն ու գիտա-տեխնիկական տեղեկատվության մարմիններն ընդգրկված էին միջգրադարանային աբոնեմենտի պետական միասնական համակարգի կազմի մեջ և պարտավոր էին իրենց ակտիվ մասնակցությունը բերել նրա գործունեությանը:

Միջգրադարանային աբոնեմենտի համապետական միասնական համակարգի կազմի մեջ ընդգրկված գրադարանների և գիտատեխնիկական տեղեկատվական մարմինների համագործակցությունը, նրանց գործունեության կոորդինացիան ու կոոպերացիան կազմակերպում ու գլխավորում էր երկրի վարչատերիտորիալ բաժանման (միութենական հանրապետություն, ավտոնոմ հանրապետություն, երկրամաս, մարզ, շրջան, քաղաք) կենտրոնական գրադարանը: Իսկ միջգրադարաային աբոնեմենտի համամիութենական, կոորդինացիոն կենտրոնի ֆունկցիան իրականացնում էր Վ. Ի. Լենինի անվան ԽՍՀՄ պետական գրադարանը (այժմ՝ Ռուսաստանի պետական գրադարան):

Ելնելով նրանց գերատեսչական պատկանելությունից և ֆոնդերի (հավաքածու) կազմից՝ միջգրադարանային աբոնեմենտի համամիութենական, հանրապետական և մյուս ռեգիոնալ կենտրոնական գրադարանները բաժանված էին երեք խմբերի՝ ունիվերսալ, ճյուղային և մասնագիտացված: Ըստ այդ բաժանման՝ միութենական ու ինքնավար հանրապետությունների, երկրամասերի, մարզերի ռեգիոնալ կենտրոնական գրադարանները համարվում էին համապատասխան ռեգիոնների միջգրադարանային աբոնեմենտի պետական ունիվերսալ գրադարաններ: Ռուսաստանի դաշնության գրադարանների

միջգրադարանային աբոնեմենտի ունիվերսալ կոորդինացիոն մեթոդական կենտրոնական գրադարանն էր համարվում Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական գրադարանը:

Հայաստանի Խորհրդային Հանրապետության միջգրադարանային աբոնեմենտի ցանցի կոորդինացիոն, մեթոդական, կենտրոնական ունիվերսալ գրադարան էր համարվում Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը: Իսկ ճյուղային կենտրոնական գրադարաններ են համարվել՝ ԳԱ հիմնակազմ, հանրապետական գիտատեխնիկական, բժշկական, գյուղատնտեսական և պետական համալսարանի գրադարանները:

Միջգրադարանային աբոնեմենտի (բաժնույթ) պետական միասնական համա-կարգի կազմի մեջ մտնող գրադարանների և գիտատեխնիկական տեղեկատվական մարմինների խնդիրներն էին.

– իրենց ֆոնդերում եղած գրականության բնօրինակներով կամ պատճեններով լիովին բավարարել աբոնեմենտի պահանջները.

– աբոնեմենտներից ստացված պատվերների կատարման համար մատենագիտական որոշումներ ֆոնդերում և տեղեկատու աղբյուրներում.

– տվալ գրադարանի ֆոնդերում չեղած տպագիր նյութերի կամ այլ նյութերի պատվերները (ըստ բնույթի ու բովադակության) վերառաքել իր ռեգիոնի կամ հաջորդ աստիճանի ճյուղային կամ ունիվերսալ կենտրոններին.

– վերահսկողություն սահմանել տպագիր երկերի ու նյութերի պատվերների կատարման և օգտագործման ժամկետների պահպանման նկատմամբ.

– Տեղեկացնել պատվիրատու գրադարանին պատվերը հերթադնելու կամ այլ գրադարանին վերառաքելու մասին:

ՄԳԱ-ով սպասարկված գրականության օգտագործման համար ժամկետ է նշանակել ստացման օրից հաշված՝ գրքերին՝ 30 օր, պարբերականներին՝ 15 օր, պատճեններին՝ 45 օր: Ինչպես նշել է Ա. Օհանյանը «Աբոնենտ-գրադարանները

պարտավոր են խստորեն պահպանել պատվիրված գրականության օգտագործման ժամկետները» [115, էջ 11]:

ՄԳԱ-ի միջոցով իրականացվող գրադարանային-մատենագիտական աշխատանքների ուսումնասիրությունը, մեր կարծիքով, նպատակ ունի պարզելու գրադարանների ֆոնդերի և ընթերցողների տեղեկատվական պահանջների համապատասխանությունը, գրքային մշակույթի օգտագործման սահմանները և առհասարակ ոլորտի զարգացման աստիճանը: Դա գրադարանի գործունեության կարևոր գործառույթներից է, որի միջոցով հնարավոր է դառնում բարձրացնել տեղեկատվական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

1982-1984 թթ. հանրապետական գիտատեխնիկական գրադարանում անցկացված հետազոտության տվյալներով համանուն գրադարանում ՄԳԱ-ի ծառայությունից օգտվել են ընթերցողների 88%-ը: Առավել ակտիվորեն օգտվել են գիտահետազոտական հիմնարկների գրադարանները, որոնք միջին հաշվով տարեկան ստացել են 300-350 անուն գրականություն [«Կուլտուր-լուսավորական աշխատանք» 1985, N. 6. էջ 6]:

1985 թ. միջգրադարանային աբոնեմենտի (բաժնույթ) պետական միասնական համակարգի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ հանդես է եկել նաև Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի աբոնեմենտի բաժնի վարիչ Ժենյա Եգանյանը [105]: Կարևորելով ՄԳԱ-ի դերը գրքային ինտեգրացիայի, ինչպես նաև գրադարանային-մատենագիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում՝ նա նաև խոսել է մի շարք թերությունների մասին, նշելով, որ «մի շարք ԳԿՀ-ներում միջգրադարանային աբոնեմենտի աշխատանքները լավ չեն կազմակերպվում լոկ այն պատճառով, որ ընթերցողների շրջանում թույլ է միջգրադարանային աբոնեմենտի պրոպագանդան, ընթերցողներին տեղեկատվություն չի տրվում միջգրադարանային աբոնեմենտով գիրք ստանալու կարգի և դրա ընձեռած հնարավորությունների մասին: Ընթերցողը (առավել ևս շրջաններում) պատկերացում իսկ չունի, որ իրենց գրադարանում բացակայող

գիրքը միջգրադարանային աբոնեմենտի միջոցով կարող է պատվիրել հանրապետության, ԽՍՀՄ կամ արտասահմանյան գրադարաններին: Ավելին, շատ հաճախ մասնաճյուղ-գրադարանների միջգրադարանային աբոնեմենտի աշխատողներն իրենք էլ լրիվ պատկերացում չունեն միջգրադարանային աբոնեմենտներից օգտվելու կարգի մասին, որի հետևանքով ընթերցողների ամենալայն շրջանները չեն օգտվում միջգրադարանային աբոնեմենտի ծառայությունից» [105, էջ 6]:

Այնուհետև, համեմատության կարգով նշում է, որ եթե 1975 թ. Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի և միջգրադարանային աբոնեմենտի հանրապետության ճյուղային կենտրոններն ունեցել են մոտ 3400 աբոնենտ, ապա 1984թ. այդ թիվը դարձել է 5330, ընթերցողների պատվերներով ՄԳԱ-ով ստացվող գրականության քանակը 1370-ից դարձել է 2680, իսկ տրվող գրականության քանակը 61020-ից՝ 125060 (ն.տ.):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ է եղել նաև ՄԳԱ-ի դերը միութենական և արտասահմանյան գրադարանների հետ համագործակցության կապեր հաստատելու առումով: Վերոնշյալ գրադարանի ընթերցողների պատվերներով միջգրադարանային աբոնեմենտով գրականություն է առաքվել ու ստացվել ոչ միայն Մոսկվայի, Լենինգրադի, Ռիգայի, Իրկուտսկի, Ուլյանովսկի, Սվերդլովսկի, Դուշամբեի, Տաշքենդի, Բաքվի, Թբիլիսիի և այլ բարզմաթիվ քաղաքների տարբեր բնույթի գրադարաններից ու գիտատեխնիկական տեղեկատվական հիմնարկներից, Միջազգային միջգրադարանային աբոնեմենտի (ՄՄԳԱ) միջոցով գրականություն է առաքվել ու ստացվել արտասահմանյան բազմաթիվ երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Իտալիայի, ԳՖՀ-ի, ԳԴՀ-ի, Չեխոսլովակիայի, Կորեայի, Լեհաստանի և այլ երկրների ազգային խոշոր գրադարաններից:

Որպես գրադարանային ծառայության տեսակ՝ միջգրադարանային բաժնույթը (աբոնեմենտ) իր նշանակությամբ գործում է նաև մեր

ժամանակներում և ամրագրված է ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքում» [3, էջ 6]:

Գրքի ճանաչողական ու ընթերցանության զարգացման նպատակով սկզբունքային նշանակություն են ունեցել ընթերցողներին ուսումնասիրելու համար ավելացնել հետազոտական աշխատանքների ծավալումը: Դրա արդյունքներով բացահայտվում են տարբեր տարիքի ու սեռի ընթերցողների պահանջների ու ճաշակի առանձնահատկությունները, գրադարանավար-մատենագետի անելիքները, տվյալ գործունեության զարգացման համար նրա մանկավարժա-հոգեբանական եզրակացություններ:

Գիտական հետազոտությունը լայն տարածում է ստացել նաև գրադարանային-մատենագիտական գործում՝ վեր հանելու համար այս կամ այն խնդիրը, դրա լուծման հեռանկարները և այլն:

Հարկ է նշել, որ 1981-1985 թթ., մինչև 1990 թվականն ընկած ժամանակամիջոցում երկրում գրադարանային գործի զարգացման հիմնական ուղղությունների մասին ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրությանը (մշակույթի նախարարություն) կից գրադարանային պետական միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված որոշման մեջ ձևակերպված են այդ բնագավառում հետազոտական աշխատանքի հիմնախնդիրները: Դրանք են՝ գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում գրադարանների՝ իբրև գաղափարական և գիտատեղեկատվական հաստատությունների գործունեության կատարելագործումը, գրադարանների աշխատանքի որակի և արդյունավետության չափանիշը, զարգացած սոցիալիստական հասարակարգում բնակչության ընթերցանության դինամիկան, գրքի և ընթերցանության դերը երեխաների և պատանիների կյանքում, տարբեր բնույթի և տեսակի գրադարանների համագործակցությունը, գրադարանային ռեսուրսների արդյունավետ տեղադրումն ու օգտագործումը, գրադարանային գործի ղեկավարման կատարելագործումը:

Այդ տեսանկյունից անգնահատելի է 1983 թ. լույս տեսած Վ. Ս. Կրեյդենկոյի «Գրադարանային հետազոտություններ: Գիտական հիմունքներ» ձեռնարկը [69], որը մինչև այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել ծանոթացնել գիտահետազոտական աշխատանքի հիմունքներին, ինչպես նաև այդ գործունեության կազմակերպման ուղիներին: Գրքում բացահայտվում են գրադարանային հետազոտությունների մեթոդները, տրվում է դրանց դասակարգումը, վերլուծվում գրադարանային հետազոտության ընթացքը, ինչպես և այդ հետազոտությունների արդյունքները պրակտիկայում ներդնելու ձևերն ու մեթոդները: Ներածության մեջ նշվում է, որ «գրադարանային հետազոտություններ» հասկացությունը հիմնականում դիտվում և գործածվում է որպես «գիտահետազոտական գործունեության կոմպլեքս», այլ խոսքով՝ հետազոտություն, որին մասնակցում են տարբեր մասնագետներ՝ գրքագետներ, գրադարանավարներ, մատենագետներ և այլոք, որոնք էլ լուծում են հարակից, միջգիտակարգային խնդիրներ:

Հայտնի է, որ գրադարանային գործունեության զանազան կողմերն ուսումնասիրվում են տարբեր գիտությունների՝ գրքագիտության, գրադարանագիտության, մատենագիտության, սոցիոլոգիայի և ինֆորմատիկայի կողմից: Այս գիտություններից յուրաքանչյուրն ունի ուսումնասիրության իր կոնկրետ առարկան՝ գրքային գործ, գրադարանային գործ, սոցիալական ոլորտ (ընթերցողներ), մատենագիտություն և գիտատեղեկատվական գործունեություն: Բայց սրանք ունեն նաև մի կարևոր ընդհանուր հատկանիշ. դրանք բոլորն էլ այս կամ այն չափով առնչվում են գրադարանային պրակտիկային: Ուստի և անհրաժեշտություն է առաջացել այդ գիտությունների սահմաններում կատարվող ուսումնասիրությունների մի մասը միավորել «գրադարանային հետազոտություններ» հասկացության մեջ: Մանավանդ, որ իրականում երբեմն անհնարին է լինում որոշել, թե որտեղ է վերջանում գրադարանագիտությունը և սկսվում մատենագիտությունը կամ գրքագիտությունը:

Այս տեսանկյունից, ահա, օրինաչափ է, որ ձեռնարկում բերված բոլոր օրինակները հիմնականում վերաբերում են ընթերցողների և ընթերցանության ուսումնասիրություններին: Հենց այս բնագավառն է, որ միավորում է գրքագիտությունը, գրադարանագիտությունը, մատենագիտաբանությունը և վեր հանում սրանց աղերսները այլ հասարակական գիտությունների հետ:

Ինչպես հայտնի է, հետազոտական բոլոր մեթոդները բաժանվում են երկու մեծ խմբի՝ տեղեկատվության հավաքման և դրանց մշակման:

Խնդրո առարկա ձեռնարկում բացահայտվում են փաստական նյութերի հավաքման մեթոդները, որոնց միջոցով էլ վեր են հանվում ընդհանրապես գրադարանային իրականության փաստերը, հիմք է ստեղծվում առաջ քաշված հիպոթեզների հավանականությունը ստուգելու և հետազոտության նպատակների իրականացման համար:

Ձեռնարկը բաղկացած է 9 գլուխներից, որոնցում լուսաբանվում են հետևյալ 4 հիմնահարցերը՝ հետազոտական մեթոդների տեսությունը, տեղեկատվության մեթոդների հավաքման բնութագրությունը, հետազոտության փուլերի առանձնահատկությունները և հետազոտության ծրագրի մշակումը:

Ձեռնարկն ամփոփվում է հետազոտության արդյունքները գրադարանային պրակտիկայում ներդնելու թեմայով:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ գիտահետազոտական աշխատանքի արդյունավետությունը և որակը մեծապես պայմանավորված են գրադարանային-մատենագիտական գործում գիտական տեղեկատվության համակարգի կազմակերպման մակարդակով և այն կարևոր հանգամանքով, թե մասնագետները որքանով գիտեն և կարող են օգտվել տեղեկատվական տարբեր միջոցներից:

Վ. Ս. Կրեյդենկոյի «Գրադարանային հետազոտություններ» ձեռնարկը խնդրո նյութի հարցադրմանը առնչվող առաջին ուսումնական հրատարակությունն էր: Եվ բնական է, որ ինչպես յուրաքանչյուր առաջին փորձ, այն կարող է ունենալ բացթողումներ, հավելումներ, կրկնություններ:

Մասնավորապես, մեր կարծիքով, գրքում տեղ են գտել գրադարանագիտության բնագավառում կատարված հետազոտական աշխատանքին առնչվող ոչ բոլոր հարցերն ու խնդիրները: Եվ որ կարևորն է, նրանցից բոլորը չէ, որ բացահայտված են հավասարապես խորը և հետևողականորեն: Այնուամենայնիվ, հեղինակը մեծ և լուրջ աշխատանք է կատարել՝ նպատակ ունենալով ստեղծել մի ձեռնարկ, որն ըստ ամենայնի նպաստել է գիտական հետազոտության մեթոդների և ձևերի տարածմանը: Կարելի է համոզված ասել, որ դա նրան հիմնականում հաջողվել է:

Ձեռնարկի վերջում զետեղված են գրադարանագիտության, ընդհանուր գիտական և սոցիոլոգիական գրականության, տեղեկատուների ցանկեր, որոնք անկասկած, մեծ օգնություն են հետազոտողներին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ ժամանակին հատուկ ուշադրություն է դարձվել այսպես կոչված ընթերցողների «շերտավորված սպասարկմանը»: Անդրադառնալով այս հարցին՝ Ռ. Չիլինգարյանը հատկապես բուհական գրադարաններում նշել է սպասարկման երեք տարբերակներ՝ ըստ խմբերի, ըստ գիտության ճյուղերի և ըստ գրականության տեսակի [111, էջ 14-17]: Համաձայն հեղինակի մոտեցման՝ նման սպասարկումը ընդունելի է նաև այսօր:

Հեղինակի տեսակետի ճշմարտացիությունը հաստավում է հետևյալով, որ

Ա) Ըստ գիտության ճյուղերի (մասնագիտական) սպասարկումը ամենատիպականն ու տարածվածն է եղել Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների գրադարաններում՝ Երևանի պետական համալսարանում, Հայկական մանկավարժական, Ժողովրդական տնտեսության, Գյուղատնտեսական և այլ ինստիտուտներում: Սրանք ունեցել են մասնագիտացված ընթերցասրահներ, կաբինետներ՝ իրենց հարուստ առձեռն ֆոնդերով: Գրադարանային-մատենագիտական սպասարկման նման ձևը շերտավորված սպասարկման արդյունավետ միջոցներից է և հնարավորություն է տվել ավելի արագ մատուցել

գրականությունը: Այդուհանդերձ, շերտավորված սպասարկումը ենթադրում է նաև ըստ գրականության տեսակի և ըստ խմբերի սպասարկում:

Բ) Ըստ գրականության տեսակի (ուսումնական, գիտական և այլն) սպասարկումը բուհական գրադարանների գերիշխող մասում (Երևանի պոլիտեխնիկական, Հայկական մանկավարժական, Ռուսաց և օտար լեզուների, Բժշկական, Անասնաբուժական-անսնաբուծական, Գյուղատնտեսական, Ֆիզիկական կուլտուրայի, Ժողտնտեսության, Գեղարվեստաթատերական ինստիտուտներում) կազմակերպված է եղել բավարար չափով: Արդյունավետ այդ մեթոդը, սակայն, տարածված չի եղել նաև մյուս ուսումնական հաստատությունների գրադարաններում:

Գ) Ըստ ընթերցողական խմբերի, ըստ կուրսերի շերտավորված սպասարկման կարգը հանրապետության բուհական գրադարանների գործնական աշխատանքներում սկսվել է արմատավորվել դեռ 1979 թվականից: Այս գործընթացը կատարելագործման մշտական կարիք ունի, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է առաջին կուրսեցիների սպասարկմանը, ինչը արդիական է նաև այսօր:

Անդրադառնալով գրադարանային սպասարկման այդ կարևոր խնդրին, անհրաժեշտ է նշել, որ այն գլխավորապես կախված է տվյալ գրադարանի կամ փաստաթղթա-տեղեկատվական համակարգի ֆոնդերի լրիվությունից, տեղեկատվական աղբյուրների և մատենագիտական ձեռնարկների կազմակերպվածությունից: Սպասարկման հաջողությունը կախված է նաև լավ ձևավորված քարտարանային համակարգից ու գրացուցակներից: Ինչպես հայտնի է, քարտարանները (այբբե-նարան, առարկայական) կարող են փոխարինել դեռ չհրատարակված մատենագիտական որևէ ձեռնարկի, որոնք գոյություն ունեն բոլոր գրադարաններում:

80-90-ական թվականներին քարտարանային սպասարկման լավագույն օրինակ է ունեցել Խ. Աբովյանի ՀՊՄՀ-ի գիտական գրադարանը, ուր գրադարանի մատենագիտության բաժնի նախկին վարիչ Ջուլիետա Սիմոնյանի և

տողերիս հեղինակի համատեղ ջանքերով ստեղծվեց բուհի գիտական աշխատությունների ժողովածուներում ընդգրկված հոդվածների քարտարանը՝ ուսանողներին, դասախոսներին և գիտաշխատողներին հաղորդակից դարձնելով բազմաբովանդակ նյութերի: Տեղին է նշել, որ 2012 թ. լույս տեսավ այդ քարտարանի հիման վրա կազմված գիտական աշխատությունների մատենագիտական ցանկը՝ նվիրված համանուն բուհի հիմնադրման 90-ամյակին [15]: Մատենագիտությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 50 տարվա (1940-1990 թթ.) ընթաքում տպագրված 1908 միավոր գիտական հոդված: Ունի առարկայական (թեմատիկ) դասակարգում և ըստ գիտությունների արտացոլում է նշված ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական, բնագիտական, բանասիրական, պատմական, մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական և այլ բնագավառների վերաբերյալ հրապարակումներ: Որպես հետադարձ մատենագիտության տեսակ՝ եզակի է, ունի գիտատեղեկատվական և գործնական կարևոր նշանակություն:

Հայաստանի գրադարանների համակարգում առանձնահատուկ դեր ունեն Գիտությունների ազգային ակադեմիայի գրադարանները: Նրանց գործունեության վերաբերյալ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի 1980 և 1990 թվականների հաշվետվական հրատարակություններում [24, 25] տեղ գտած 1979 և 1980 թթ. արդյունքների համեմատական վերլուծության հիման վրա կարելի է նշել հետևյալը: 1979 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգում գործել են 31 գրադարաններ, այդ թվում՝ ֆունդամենտալ (հիմնակազմ) գիտական գրադարանը, կենսաբանական գիտությունների գրադարանը, հասարակական գիտությունների տեղեկատվության սեկտորի գրադարանը և ակադեմիական 28 ինստիտուտներին կից ճյուղային-մասնագիտական գրադարանները: Դրանցից ֆիզիկամաթեմատիկական հիմարկներին կից գրադարանները՝ 7, քիմիական գիտությունների՝ 4, գիտություններ երկրի մասին՝ 3, կենսաբանական գիտությունների՝ 7, հումանիտար գիտությունների՝ 7 (ընթացիկ տարում Մ. Աբեղյանի անվան

գրականության ինստիտուտում կազմակերպվել է նոր գրադարան, որի ֆոնդերի ստեղծման և գրադարանային գործի գիտական կազմակերպման ուղղությամբ օգնել է ֆունդամենտալ (հիմնակազմ) գրադարանը):

Ակադեմիայի բոլոր գրադարանների ֆոնդերն ունեցել են 3291591 գրադարանային միավոր, այդ թվում՝ օտար լեզուներով՝ 918586 գրադարանային միավոր: Հաշվետու տարում ակադեմիական բոլոր գրադարանները համալրման բոլոր աղբյուրներով ձեռք են բերել 128250 գրադարանային միավոր, այդ թվում՝ 34873 օտար լեզուներով:

Միայն ֆունդամենտալ (հիմնակազմ) գիտական գրադարանը (առանց մասնաճյուղի) իր ֆոնդերում ուներ 2490138 գրադարանային միավոր, այդ թվում՝ 616877 գիրք և ամսագիր օտար լեզուներով: Հաշվետու տարում գրադարանը ձեռք է բերել 65186 գրադարանային միավոր, այդ թվում՝ 20303 գրադարանային միավոր օտար լեզուներով:

1979 թ. գրադարանն ընդարձակել է նաև իր գրքափոխանակության շրջանակները ինչպես Խորհրդային Միության սամաններում գտնվող գրադարանների, այնպես էլ արտասահմանյան գիտական գրադարանների, հրատարակչությունների, թանգարանների և այլն հիմնարկների հետ: 1978թ. ֆունդամենտալ (հիմնակազմ) գիտական գրադարանն ուներ 738 գրքափոխանակության կետ, որից 512-ը՝ արտասահմանյան 47 երկրներում: Գրքափոխանակության կարգով գրադարանը հաշվետու տարում ձեռք է բերել 17719 գրադարանային միավոր՝ հիմնականում գիտական մենագրություններ և նորագույն ամսագրեր գիտության բոլոր բնագավառների վերաբերյալ:

Այդ տարում բոլոր ակադեմիական գրադարաններն ունեցել են 10868 ընթերցող, որոնց սպասարկվել է 769604 գրադարանային միավոր: Բացի այդ՝ կային նաև 4000-ից ավելի ընթերցողներ, որոնք վերահաշվառման չեն ենթարկվել: Ընթերցողներին օգնելու նպատակով ընթացիկ տարում տրվել է 19112 բանավոր և 50298 գրավոր տեղեկանք: Հանրապետության գիտական հիմնարկներին և գիտաշխատողներին ուղարկվել է 24560 բազմացված թերթ՝

արտարժույթով ստացվող արտասահմանյան ամսագրերի բովանդակությունների սիգնալային տեղեկատվության գծով: Կազմակերպվել են 1128 թեմատիկ և նորույթների ցուցահանդեսներ, որոնցում ցուցադրված են 62250 գրադարանային միավոր: Առանձնապես հիշատակության արժանի է գերմանական «Շպրինգեր-Ֆերլագ» հրատարակչության գիտատեխնիկական գրականության ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել էին Արևմտյան Բեռլինի այդ հնագույն հրատարակչության 412 գրքեր և պարբերական հրատարակություններ: Ցուցահանդես են հաճախել ավելի քան 3000 գիտական աշխատողներ ինչպես ակադեմիական, այնպես էլ հանրապետության այլ գիտահետազոտական, բուհական և այլ հիմնարկություններից:

Գիտական տեղեկատվության բաժինը հրատարակել է «Հայկական ՍՍՀ գրադարաններում 1979 թ. ստացվող արտասահմանյան ամսագրերի տեղեկատվական բյուլետենը»:

Գիտական մատենագիտության բաժինը լույս է ընծայել «ՀՍՍՀ ԳԱ հրատարակությունների մատենագիտությունը 1974-1975 թթ.», Ռ. Իշխանյանի «Հայ գիրքը 1512-1920 թթ.» աշխատությունը և «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակությունների մատենագիտությունը 1976-1977 թ.» [24, էջ 285-287]:

1989 թ. հաշվետվության տվյալներով ՀՍՍՀ ԳԱ համակարգում գործել են 32 ակադեմիական գրադարաններ, այդ թվում՝ ֆունդամենտալ գիտական գրադարանը, կենսաբանական գիտությունների գրադարանը և 30 ակադեմիական ինստիտուտների ճյուղային-մասնագիտական գրադարանները, որոնցից ֆիզիկամաթեմատիկական հիմնարկների՝ 6, քիմիական՝ 5, գիտություններ երկրի մասին՝ 4, կենսաբանական՝ 7, հումանիտար՝ 8:

1989 թ. ակադեմիական բոլոր գրադարանների 20219 ընթերցողներին սպասարկվել է 1199636 գրադարանային միավոր, այդ թվում՝ 620452 օտար լեզուներով:

Ակադեմիական բոլոր գրադարաններն իրենց ֆոնդերում (հավաքածու) ունեցել են 3862084 գրադարանային միավոր, այդ թվում՝ 1171662 օտար

լեզուներով: Համալրման բոլոր աղբյուրներով ձեռք է բերվել 84671 գրադարանային միավոր, այդ թվում օտար լեզուներով՝ 23512: Ֆունդամենտալ գիտական գրադարանն իր ֆոնդերում ուներ 2764182 գրադարանային միավոր, այդ թվում՝ 765497 օտար լեզուներով: Այդ տարում գրադարանը ձեռք է բերել 51082 գրադարանային միավոր, այդ թվում՝ օտար լեզուներով՝ 14798:

Զգալի աշխատանք է կատարվել փակ ֆոնդերից բաց ֆոնդեր գրականության տեղափոխման ուղղությամբ:

1989 թ. գրադարանն ունեցել է 875 գրքափոխանակության կետ, որից 649 արտասահմանյան 51 երկրներում: Գրքափոխանակության և նվիրատվության կարգով գրադարանը այդ տարում ձեռք է բերել 18623 գրադարանային միավոր՝ հիմնականում գիտական մենագրություններ և պարբերականներ: Ներմիութենական և արտասահմանյան գրքափոխանակության կետերին ուղարկվել են 14369 միավոր ակադեմիական հրատարակություններ:

1989 թ. կազմակերպվել է 1154 նորույթների և թեմատիկ ցուցահանդես, որտեղ ցուցադրվել է 56787 գրադարանային միավոր: Ցուցահանդեսից հիշատակության են արժանի «Իմացության տեսություն», «Արվեստի տեսություն», «Քրիստոնեության ծագումը և պատմությունը», «Հայաստանի հնագիտությունը», «Հայ գաղթավայրերի պատմություն», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմիտաս (ծննդյան 120-ամյակի առթիվ)», «Պարույր Սևակ (ծննդյան 65 -ամյակի առթիվ)», «Արարատ Ղարիբյան (ծննդյան 90-ամյակի առթիվ)» և այլն:

1989 թ. ֆունդամենտալ (հիմնակազմ) գիտական գրադարանը հրատարակել է «Սուբմիլիմետրային սպեկտրոսկոպիա» թեմատիկ մատենագիտությունը, «1989 թ. ՀԽՍՀ գրադարաններում ստացվելիք արտասահմանյան ամսագրերի համահավաք ցանկը», «Նոր գրքեր օտար լեզուներով» տեղեկատու բյուլետենի 3 համար:

Պատրաստվել են հրատարակության «ՀԽՍՀ ԳԱ 1988 թ. հրատարակությունների մատենագիտությունը», «Օլիգոմերներ. Պրակ 2. 1981-

1985», «Ադենիլատցիկլազը ներվային համակարգում» թեմատիկ մատենագիտությունները, Գ. Ի. Տեր-Ստեփանյանի և Ա. Գ. Նազարովի կենսամատենագիտությունները [25, էջ 147-149]:

Գրադարանային-մատենագիտական գործի զարգացման ուղղություններում ժամանակի կարևոր խնդիրներից մեկն էլ, որը մտահոգել է թե գրադարանավարներին և թե գրողներին, վերաբերել է գրքի հրատարակչական քաղաքականությանը: Հատկապես մյուս հոգիչ են եղել գրքերի գեղարվեստական ձևավորման և մասնավորապես մանկապատանեկան լավագույն գրականության հրատարակման հարցերը, որոնց պահանջը միշտ է զգացվել: Այդ առումով հետաքրքիր մենկաբանություն է տրված գրող Սաղաթել Հարությունյանի «Ամրապնդել գրադարանի և գրահրատարակչության կապը» հոդվածում [108, էջ 13-14]: Ի դեպ՝ հայ մանկապատանեկան գրականության լավագույն հրատարակությունների շարքին է դասվում 1984-1987 թթ. հրատարակված «Ի՞նչ է, ո՞վ է» քառահատոր մանկական հանրագիտարանը:

Գրադարանային-մատենագիտական գործունեության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեծ նշանակություն ունեցավ «ԽՍՀՄ-ում գրադարանային գործի մասին Կանոնադրությունը»՝ հաստատված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից 1984 թ. մարտի 13-ին [90, էջ 9-20]: Ըստ էության այդ փաստաթղթով բացվելու էին գրադարանային գործի նոր հորիզոններ: Նախ՝ այն ուղղված էր միասնական ֆոնդի ստեղծմանը, իսկ ֆոնդերը բարձր որակով համալրելու նպատակով գրադարանները պետք է ակտիվորեն ազդի հրատարակչական արտադրանքի կազմի և տպաքանակի վրա:

Սույն կանոնադրությամբ նախատեսվում էր նաև գրականության կենտրոնացված մշակում, միասնական տեղեկատվական-մատենագիտական ու գիտահետազոտական աշխատանքների իրականացում, գրադարանների նյութատեխնիկական բազայի բարելավման մասին: Գրադարանները պարտավոր էին ընթերցողների համար նաև ապահովել ֆոնդերից օգտվելու լայն

հնարավորություն, ուսումնասիրել և լիովին բավարարել ընթերցողների պահանջները, կատարելագործել գրադարանային-մատենագիտական աշխատանքները, նախապատվություն տալ մասնագիտական կրթությամբ մասնագետներին, ընդլայնել գրադարանային-տեղեկատվական միջազգային կապերը, զարգացնել և խորացնել համագործակցությունը, նպաստել գիտատեխնիկական տեղեկատվության տարածմանը և այլն:

Հետազոտության ընթացքում պարզվեց, որ տպագիր գրականության հետադարձ մատենագիտության զարգացման ուղղությամբ հսկայածավալ աշխատանք է կատարվել Երևանի պետական համալսարանի՝ գիտական գրադարանում, հայագիտական կենտրոնում և հրատարակչությունում: Մատենագիտական հրատարակությունների առատությամբ աչքի է ընկել հատկապես գիտական գրադարանի մատենագիտության բաժինը (որը, ցավոք, այժմ չի գործում), որտեղ կազմվել ու շրջանառության մեջ են դրվել շուրջ մեկ տասնյակի հասնող մատենագիտական ցանկեր: Հատկապես ուշագրավ են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին՝ 1965-1990 թթ. վերաբերող «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների մատենագիտության» II-VI պրակները [11]:

Այսպես, II պրակը լույս է տեսել 1980թ. և ժամանակագրորեն ընդգրկում է 1964-1970 թթ.՝ արտացոլելով 1439 միավոր գրքերի և պարբերական հրատարակությունների հոդվածների նկարագրություն: III պրակը՝ 1984 թ., ընդգրկում է 1971-75 թթ. և ներկայացնում է 1641 միավոր նյութ: IV -ը՝ 1985 թ., ընդգրկում է 1976-1980 թթ. և ներկայացնում է համանման նյութերի 1699 նկարագրություն: V-ը՝ 1989 թ., ընդգրկում է 1981-1985 թթ.՝ 1520 միավոր նյութի նկարագրությամբ: Ընդ որում, գրքերի և հոդվածների վերնագրերը տրված են հայերեն ու ռուսերեն լեզուներով: Ունեն հարուստ կառուցվածք՝ նվիրված երկրաբանական, քիմիական, մաթեմատիկական, փիլիսոփայական, բանասիրական, պատմական, կենսաբանական և այլ գիտությունների բնագավառների գրականությանը: Նկարագրված են աղբյուրների բնագրերի

լեզվով, դասավորված են այբբենական կարգով՝ սկզբից գրքերը, ապա՝ պարբերական մամուլի հոդվածները: Պետք է ընդգծել, որ կազմողները ջանք չեն խնայել մատենագիտական որոնման աշխատանքներում՝ շրջանառության մեջ դնելով շուրջ 8493 միավոր նյութ, որոնց կիրառական նշանակությունը չափազանց մեծ է:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ բուհական և թե՛ գրադարանային հաստատություններում կատարված (և կատարվող) մատենագիտական բազմաբովանդակ աշխատանքները նպատակաուղղված են եղել ոչ միայն գրադարանային-տեղեկատվական ֆոնդերի բացահայտման և ընթերցողական պահանջների բավարարման գործին, այլև իրենց գրադարանային-մատենագիտական արտադրանքով նպաստել են երկրում տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի ձևավորմանն ու համակողմանի զարգացմանը:

Հայաստանում գործող բոլոր տիպի գրադարանների թիվը 1985 թ. կազմել է 3143, ընթերցողների թիվը՝ ավելի քան 2.447.000, գրքատածքը՝ ավելի քան 76.422.000: Նախատեսվել է 1986-1990 թթ. և մինչև 2005 թ. ընկած ժամանակաշրջանում ավարտել բնակչության գրադարանային սպասարկման միասնական ֆոնդի ստեղծման աշխատանքները: Մինչև 2005 թ. բոլոր գրադարանները պետք է ապահովվեին բարեկարգ շենքերով, ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանների համար պետք է կառուցվեին 300 հազարից մինչև 500 հազար գրքային ֆոնդի տարողության 18 նոր շենքեր: Մինչև 2005 թ. գրադարանային ընթերցանության ոլորտում ընդգրկված պիտի լինեին բնակչության 95-100%-ը: Ըստ Գ. Աղախանյանի՝ 2005 թ. ընթերցողների թիվը պիտի կազմեր 3 մլն 191.000 մարդ, իսկ գրքատածքը կհասնի 127 մլն 600.000 օրինակի [104, էջ 11-12]:

Հարկ է նշել, որ միայն վերջին 10 տարում Հայաստանի բնակչության թիվը տատանվում է մոտ 3 մլն-ի սահմաններում, էլ ուր մնաց, որ ընթերցողների թիվը տվյալ ժամանակաշրջանում պետք է կազմեր նշված թվից ավելի:

Համեմատական կարգով նշենք նաև, որ, օրինակ, «1998 թ. Հայաստանում գործել են հանրային բնույթի 1185 գրադարան, այդ թվում՝ 10 մարզային կենտրոնական, 1 Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական, 31 տարածքային, 177 քաղաքային, 908 գյուղական և 58 մանկական: 1997 թ. համեմատությամբ գրադարանների թիվը պակասել էր 18-ով» [19, էջ 5]: Ինչպես տեսնում ենք, զգալի տարբերություն կա նաև խորհրդային շրջանի վերջին տասնամյակի նկատմամբ:

Անդրադառալով գրադարանային գործի կատարելագործման խնդիրներին՝ 1980 թ. վերջերին Գ. Աղախանյանը նշել է, որ դրական բարձր արդյունքների հասնելու համար պետք են՝

- գրահրատարակչության գործունեության ակտիվացում և գրադարանային ֆոնդերի համալրում,
- սոցիոլոգիական ուսումնասիրությունների կազմակերպում և ընթերցողական պահանջների բավարարում,
- գրքի և գրադարանի հասարակական դերի բարձրացում,
- մասսայական-տեղեկատվական միջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, պարբերական մամուլ) գրադարանային-մատենագիտական գիտելիքների տարածում,
- հանձնարարական (թեմատիկ) մատենագիտական ցանկերի կազմում և կիրառում,
- գրադարանային գործի վերակառուցում,
- գրադարանային-մատենագիտական հետազոտությունների ընդլայնում ու կատարելագործում,
- ԳԿՀ-ի աշխատանքների վերլուծություն և պրակտիկայում դրանց արդյունքների ներդրում,
- գրադարանների մեթոդական աշխատանքների արդյունավետության բարձրացում [103, էջ 3-4]:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ լուրջ անհանգստություն են պատճառել մասնագետների պատրաստման և նրանց վերավորակավորման հարցերը: Նշվել է, որ «1988 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության կուլտուրայի մինիստրության համակարգի 1324 գրադարանների 3608 աշխատողներից բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունի միայն 42 տոկոսը: Վիճակն առավել անմխիթարական է առանձին գերատեսչությունների և կազմա¬կերպությունների ենթակա 1922 գրադարաններում» (ն.տ. էջ 4):

Այդ բոլորն, անհետևողական աշխատանքի արդյունք էր և դարձավ սոցիոլոգիական ուսումնասիրության օբյեկտ [127]: Հոդվածագիրը շարունակել է՝ նշելով, որ «կատարելագործման կարիք ունի ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության, նրանց ուսուցման և աշխատանքի տեղավորման կարգը» [ն.տ.]:

Կարելի է եզրակացնել, որ գրադարանային-մատենագիտական գործի գիտակազմակերպչական և զարգացման նպատակով առաջ քաշված խնդրահարույց հարցերը, որոնք համահունչ են XXI դարի ներկա պահանջներին ու զարգացումներին, անվիճելիորեն ունեցել են ռազմավարական կարևոր նշանակություն:

Նախանշելով գրադարանային գործի վերակառուցման հեռանկարային ուղիները, սակայն, չպետք է շրջանցել է 1987 թ. մայիսին հաստատված ԽՍՀՄ Կուլտուրայի նախարարությանը կից գրադարանային պետական միջգերատեսչական հանձնաժողովի որոշումը՝ «ԽՍՀՄ-ում գրադարանների մատենագիտական աշխատանքի մասին կանոնադրությունը» [50, 5-6]: Համաձայն դրա մատենագիտական գործունեություն պետք է իրականացնեն բոլոր գրադարաններն առանց բացառության՝ կախված նրանց տեսակային առանձնահատկություններից, ինչպես նաև գործունեության ձևից ու բովանդակությունից: Հեռանկարում այդ նպատակին հասնելու համար

անհրաժեշտ էր հաշվի առնել գրադարանների մատենագիտական գործունեության կենտրոնացման սկզբունքները,

- աշխատանքի պլանավորման հատուկ կազմակերպում՝ հատկապես մատենագիտական տարատեսակ արտադրանքի նախապատրաստման ու հրատարակման բնագավառում,

- գրադարանների մատենագիտական գործունեության կոորդինացում և կոոպերացում բոլոր մակարդակներում՝ ճյուղային և միջճյուղային, գերատեսչական և միջգերտեսչական, տարածաշրջանային և համամիութենական,

- գրադարանների մատենագիտական գործունեության տեխնիկական սարքավորման բարձրացում՝ ավտոմատուցման, համակարգչայնացման, պոլիգրաֆիական բազայի ամրապնդման և այլ միջոցների ներդրման հիման վրա:

Այստեղից հետևում է, որ Հայաստանում գրադարանային-մատենագիտության գործունեության զարգացման ներկա ենթաբաժնում ուսումնասիրվող ժամանակաշրջանը աչքի է ընկել գրադարանների ցանցի ընդարձակման անհրաժեշտությամբ և ընթերցողների թվաքանակի աճով:

- Գրադարանային-մատենագիտության գործունեության զարգացման ուղղություններում ուղենիշային դեր են կատարել խորհրդային պետական կառավարման որոշումներն ու կանոնակարգերը:

- Աղբյուրների ուսումնասիրությունը և վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց են տվել, որ գրադարանային-մատենագիտության գործընթացում առկա են եղել մի շարք թերություններ ֆոնդերի համալրման, ընթերցողներին սպասարկման, գրադարանների գործունեության կոորդինացման, մասնագետների վերապատրաստման և այլ ուղղություններում: Դրանց վերացման ու շտկման ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ մոտեցումներ ու միջոցառումներ:

- Ուշադրություն է դարձվել գրադարանային-մատենագիտական գործի նորովի կազմակերպմանը, ընդհանուր աշխատանքների արդյունավետության

բարձրացման նպատակով համագործակցության հաստատմանն ու գրադարանային խորհուրդների դերի կարևորմանը, գրքափոխանակությանը, գրահրատարակչական կենտրոնների հետ կապի ամրապնդմանն ու ԳԿՀ-երի զարգացմանը, պրակտիկայում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը:

- Գրադարանային-մատենագիտական գործի զարգացման գիտա-տեսական հարցերում անգնահատելի նշանակություն են ունեցել ոչ միայն հայ, այլև օտարազգի բազմաթիվ գիտնականների ու մասնագետների աշխատություններն ու հրապարակումները, որոնք թեմայի ուսումնասիրության շրջանակում առաջին անգամ են շրջանառության մեջ դրվում:
- Պետք է փաստել մեծ առաջընթացը Հայաստանի Ազգային, գիտությունների ակադեմիայի, ԵՊՀ-ի և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանների գործունեության մեջ՝ հաշվի առնելով նրանց հրատարակած գիտա-գործնական ու մեթոդական նշանակություն ունեցող տասնյակ մատենագիտական աշխատանքները:
- Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ բուհական կրթության ու գիտության զարգացման համակարգերում կարևորվել են գրադարանների դերի ու գրականության ընթերցանության կազմակերպման հարցերը, որոնք արդիական են նաև մեր օրերում:
- Կատարված աշխատանքները, մեր կարծիքով, նպատակաուղղված են եղել մեր երկրում ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվական–հաղորդակցական համակարգերի ձևավորմանը, գրադարանային գործի և մատենագիտության գործի համակողմանի զարգացմանը:
- Գրադարանային-մատենագիտական գործունեության վերակառուցման, կատարելագործման ու հեռանկարային զարգացման նպատակով նոր խնդիրներ են առաջ քաշվում 90-ական թթ. Վերջերին: Հետագայում պետք է ավելի ընդլայնվեին մասնագիտական գործունեության սահմանները, գրադարանային-մատենագիտական հետազոտությունների թեմատիկ շրջանակները,

ուշադրություն պետք է դարձվեր գրադարանների բարեփոխման գործի ու նյութատեխնիկական բազայի ապահովմանը, ինչպես նաև մասնագետների պատրաստման ու սույն աշխատանքում քննարկվող կարևոր այլ հարցերի վերջնական լուծմանը:

Այսօր դժվար է ասել, թե զարգացման ինչպիսի աստիճանի հասած կլիներ գրադարանային-մատենագիտական գործունեության վերելքը Հայաստանում, եթե չլիներ երկրաշարժը (1988 թ.), եթե ԽՍՀՄ-ի փլուզման (1991 թ.) և հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքներով Հայաստանը չհայտնվեր սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ...

Վիճակագրական տվյալներով միայն երկրաշարժի գոտում 744 գրադարաններից տուժել է 372-ը, որից 123-ը՝ մասնակի, 101-ը հիմնովին ավերվել է, իսկ 148-ը հայտնվել վթարային վիճակում [154, էջ 50-51]:

Պատմական անցյալի և ներկայի համեմատական վերլուծությունը հիմք է տալիս եզրափակել ու, որ սույն ենթաբաժնում քննարկված հարցերը միտված են եղել ապագային: Դրանց անդրադառնալն անշուշտ բխում է անցյալի մասին մեր իմացական պահանջներից և ունեն գրադարանագիտական, մատենագիտական ու գրքագիտական կարևոր նշանակություն:

Եզրակացություններ

Ամփոփելով ատենախոսության շրջանակում կատարված գիտական ուսումնասիրության արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Հայաստանում գրադարանային-մատենագիտական գործը մի կողմից կապված էր խորհրդային ընդհանուր գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական մտքի, մյուս կողմից՝ նշված գիտական ուղղությունների ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների դրսևորումների հետ:

2. Գրադարանային-մատենագիտական գործունեությունը սոցիալական պահանջ է, իսկ գրքի, գրադարանի, տեղեկատվության, կրթության և ընթերցանության դերի բարձրացումը՝ հասարակական անհրաժեշտություն:

3. Մատենագիտական գործի արդյունավետությունը գլխավորապես կապված է տեսության և պրակտիկայի փոխադարձ կապից, «մարդկային գործոնից», մատենագիտական ձեռնարկների (հայագիտական, երկրագիտական, փիլիսոփայական, գեղարվեստական և այլ) համակարգի, ինչպես նաև գրադարանի՝ որպես տեղեկատվական համակարգի և սոցիալական ինստիտուտի զարգացումներից:

4. Դիտարկելով գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման բազմաթիվ հարցեր՝ առաջարկվել են այդ հարցերի զարգացման նոր տեսանկյունները: Ընթերցանության համար՝ որպես անձի ինտելեկտուալ զարգացման միջոցի, հիմք է ընդունվել տպագիր գրքի ճանաչողական և գրադարանի հասարակական դերի գիտակցումը, ընթերցանության դրդապատճառները, ընթերցողական հետաքրքրություններն ու գրականության ընկալման որակը:

5. Համեմատական վերլուծությունը բերել է այն համոզման, որ ընթերցողների ընդհանուր դասակարգումը հնարավոր է և անհրաժեշտ: Եվ եթե դասակարգման հարցում հաշվի է առնվում անձի սոցիալական պատկանելիության հատկանիշը, ապա ժամանակակից գրադարանագիտության և մատենագիտության խնդիրն է

հենց պարզել, թե յուրաքանչյուր հատկանիշը ինչ տեղ է գրավում հատկանիշների համակարգում:

6. 1965-1980թթ. գրադարանային-մատենագիտական գործում գերիշխող են եղել մեթոդական-հրահանգչական ուղեցույցներ, որոնք գիտակազմակերպչական առումով չեն ընդգրկել մասնագիտական համակարգերի զարգացման տարբեր ոլորտները: Սակավաթիվ հրատարակություններ մեթոդաբանական տեսանկյունից սահմանափակվել են «Ազգային մատենագիտության» պատմության շրջանակում, սակայն, հիմք են հանդիսացել տպագիր և ձեռագիր գրքի տարատեսակ մատենագիտական հրատարակությունների հետագա զարգացմանը:

7. Գրադարանային-մատենագիտական գործի զարգացման նոր փուլի կարևոր խթան է հանդիսացել գրադարանների կենտրոնացված համակարգի (ԳԿՀ) ստեղծումը, որը որակական փոփոխություններ էր առաջ բերել աշխատանքի բովանդակության մեջ՝ գրադարանային ֆոնդերի համալրման, գիտա-տեխնիկական նվաճումների տարածման ու տեղեկատվության ընդլայնման աշխատանքներում:

8. Գրադարանային ֆոնդերի համալրման և ընթերցողական պահանջների բավարարման նպատակով պակաս կարևոր չեն եղել գրքափոխանակության զարգացումն ու միջգրադարանային աբոնեմենտի (ՄԳԱ) կիրառումը: Որպես սպասարկման և կոորդինացման առաջավոր ձև՝ ՄԳԱ-ն հնարավորություն է ստեղծել լիովին ապահովել գրքային ֆոնդերի փոխօգտագործումը: Բայց կատարած դրական աշխատանքներով հանդերձ՝ կարիք ուներ կատարելագործման:

9. 1981-1990թթ. գրադարանային-մատենագիտական գործի զարգացման ուղղություններում ուղենշային դեր են կատարել խորհրդային պետական կառավարման որոշումներն ու կանոնակարգերը: Ժամանակաշրջանն աչքի է ընկել գրադարանների ցանցի ընդարձակմամբ և ընթերցողների թվաքանակի աճով:

10.Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ բուհական կրթության ու գիտության զարգացման համակարգերում կարևորվել են գրադարանների դերն ու ընթերցանության կազմակերպման հարցերը, որոնք արդիական են նաև այսօր:

11.Գրադարանային-մատենագիտական գործի կատարելագործման ու հեռանկարային զարգացման նպատակով նոր խնդիրներ են առաջ քաշվել 1980-ականների վերջերին, որոնք, ըստ էության, ունեին ռազմավարական կարևոր նշանակություն:

12. Գրադարանային-մատենագիտական գործունեության արդյունավետությունը գլխավորապես կախված է՝

- գրադարանային-մատենագիտական համակարգերի զարգացումից, նրանց գիտատեղեկատվական ու հասարակական դերի բարձրացումից,
- գրադարանային-մատենագիտական զարգացման գործոնների և սոցիալական համակարգերի միջև սերտ համագործակցությունից ու զարգացման փոխազդեցություններից:

Սակայն այդ ամենը դեռ ընթացքի մեջ՝ վրա են հասնում երկրաշարժը, հայ-ադրբեջանական պատերազմը, Խորհրդային միության փլուզումը և, դժվար է ասելը, թե զարգացման ինչպիսի ընթացք կունենար գրադարանային-մատենագիտական գործը Հայաստանում... Սակայն պետք է նշել, որ կատարվող և կատարվելիք աշխատանքները նպատակաուղղված են եղել ապագային և ունեցել են զարգացման ռազմավարական կարևոր նշանակություն:

Գրականության ցանկ

1. Աղայան Թ., Եգանյան Ժ., ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի գրքային ունեցվածքի զարգացման հեռանկարները, Եր., Հայաստան, 1979, 221 էջ:
2. Գրադարանային գործի զարգացումը սովետական Հայաստանում, Գիտա-պրակտիկ կոնֆերանսի նյութեր, Եր., ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, Ալ. Մյասնիկյանի անվ. հանր. գր-ն, 1967, 179 էջ:
3. «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2012 թ. ապրիլի 10-ին), Եր., ՀՀ Մշակույթի նախարարություն, Հայաստանի ազգային գրադարան, 2013,47 էջ:
4. Գրադարանների կենտրոնացված համակարգի աշխատանքի տեխնիկան, Եր., Ալ. Մյասնիկյանի անվ. հանր. գր-ն, 1978, 106 էջ:
5. Գրադարանների ԿՀ-ի աշխատողների պաշտոնական պարտականությունների օրինակելի հրահանգներ (ռուս, թարգմ.) / Խմբագիր՝ Գ.Աղախանյան, Եր., 1978, 55 էջ:
6. Գրքային ունեցվածքի համալրման կազմակերպումը ԳՀԿ-ում (մեթոդական ցուցումներ), Կազմեց Ռ. Ռուբինյան, Եր., ՀՍՍՀ Մյասնիկյանի անվան պետական գրադարան, 1981, 20 էջ:
7. Դավթյան Հ. Մ., Հայ գիրքը 1801-1850 թթ.: Մատենագիտություն /Խմբ.՝ Հ.Ս. Անասյանի/, Եր., Ալ. Մյասնիկյանի անվ. հանր. գրադարան,1967, 539 էջ:
8. Դավթյան Հ. Մ. Գեղարվեստական գրականության և գրականագիտության մատենագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., 1981, 88էջ:
9. Երևանի գիտական գրադարանների տեղեկատու ինֆորմացիոն ֆոնդերի ուղեցույց /Կազմողներ՝ Մ. Ա. Աբգարյան, Մ. Հ. Բաբայան և ուրիշներ/

Խնբ.՝ Մ. Հ. Բաբայան, Եր., ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան գրադարան, 1980, 135 էջ:

10. Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Մատենագիտություն 1920-2011 /Կազմ.՝ Հ.Պետրոսյան, Լ.Հովհաննիսյան,Եր., ԵՊՀ, 2011, 224 էջ:
11. Երևանի պետական համալսարանի հրատարակությունների մատենագիտություն, Պր. II-VI, Եր., ԵՀՀ, 1980-1998:
12. Իշխանյան Ռ. Ա. Հայ գիրքը 1512-1920, Եր., ՀՍՍՀ ԳԱ.1981, 154էջ:
13. Իշխանյան Ռ. Ա.Հայ մատենագիտության պատմություն, Պր.Ա-Գ, Եր., 1964-68:
14. Լևոնյան Գ. Ջ. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., Հայպետհրատ, 1958.-255 էջ:
15. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական աշխատությունների մատենագիտություն(1940-1990թթ.) // Կազմ.՝ Ջ.Սիմոնյան, Ն.Դանիելյան/, Խմբ. և առաջաբանի հեղ.՝ Գ.Ա. Սուքիասյան, Եր., Մանկավարժ, 2012.-230էջ:
16. Կոստիկյան Հր. Կ. Սովետահայ մատենագիտության զարգացման ուղիները, Եր., Ալ. Մյասնիկյանի անվ. հանր. գր-ն, 1966.-212 էջ:
17. Հայաստանի Ազգային գրադարանի հրատարակությունների մատենա-գիտություն. 1937-2007 / Կազմ.՝ Գ.Կարապետյան, խմբ.՝ Ռ.Ղազարյան, Եր., Գիրք, 2007, 188 էջ:
18. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012), Գիրքը պատմա մշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում, Հանրապետական գիտաժողովի (2010 թ. ապրիլի 15-16) զեկուցումների ժողովածու/խմբագիրներ՝ Ա. Վ. Գալստյան, Գ. Ա. Սուքիասյան, Եր., Մանկավարժ, 2010- 132 էջ:

19. Հայաստանի տարածքային գրադարանները 1998 թ., Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / Կազմող՝ Լ.Դանիելյան, Եր., Գիրք, 1999, 50 էջ:
20. Հայ գիրքը 1512-1800 թթ., Մատենագիտություն, Հ.Ա., /Կազմեցին՝ Ն.Ա. Ոսկանյան, Ք.Ա. Կորկոտյան, Ա.Մ. Սավալյան/ Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան, Եր., Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադարան, 1988.- 917 էջ:
21. Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980) Կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, Պատ. խմբ.՝ Մ.Հ. Մխիթարյան Եր., ՀՍՍՀ, ԳԱ հրատ., 1986, 371 էջ:
22. Հայ քննադատական մտքի պատմության մատենագիտություն (1794-1920) /ՀՍՍՀ ԳԱ, Մ.Աբեղյանի անվ. գրակ. ինստ., Ֆունդամենտալ գրադարան/ Կազմողներ՝ Լ.Գ. Մուրադյան, Ն.Վ. Անանյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 757 էջ:
23. Հայաստանի ԳՀԿ-ը 1989թ. /Աշխատանքների վերլուծություն/, /Կազմ. Լ.Դանիելյան, խմբ. Լ. Մութաֆյան, ՀՀ Մշակույթի նախարարություն: Հայաստանի ԱԳ, Գրադարանագիտ. գիտամեթ. Բաժին, Եր., 1990,78 էջ:
24. Հաշվետվություն, ՀՍՍՀ ԳԱ 1979 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին, Եր., 1980, 301 էջ:
25. Հաշվետվություն, ՀՍՍՀ ԳԱ 1989 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին, Եր., 1990,160 էջ:
26. Մանկական գրադարան. գործնական մեթոդ. ձեռնարկ մանուկների ընթերցանությունը ղեկավարողների համար/Ռուսերենից թարգմանեց և փոխադրեց Հր. Կոստիկյանը,Եր., 1972, 298 էջ:
27. Մատենագիտություն. Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի հրատարակությունների /Կազմողներ՝ Է.Մակարյան, Լ.Բաբախանյան, խմբ.՝ Ա.Մադոյան, Եր.,ԵՀՀ, 1999, 66 էջ:

28. Մանուկյան Մ., Գիրքը տասներորդ հնգամյակում, Եր., ՀՍՍՀ գրքասերների ընկերություն, 1977, 98 էջ:
29. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց /Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների սովետի առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ:-Հ 1/ Կազմեցին՝ Օ.Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 1469 էջ:
30. Մատենագիտություն (ընդհանուր դասընթաց), Ուսումնամեթոդական ձեռնարկ գրադարանային բաժնի ուսանողների համար /Կազմեց՝ Հ. Կ. Կոստիկյան/ , Եր., 1978, 108 էջ:
31. Մելյան Բ., Մանկական գրականության մատենագիտություն (ուս.ձեռն.), Եր., 1982, 79 էջ:
32. Մկրտչյան Գ. Գ., Աշխատանք ընթերցողների հետ, Ուս. ձեռն. կուլտ. ֆակ.գրադ.բաժնի ուսանողների համար, Եր., 1979, 111էջ:
33. Մկրտչյան Գ. Գ., Գրադարանային գործը Հայաստանում (1920-1965), Եր., 1965, 179 էջ:
34. Սիլվանյան Հ.Հ., Գրադարանի աշխատանքի պլանավորումը, Մեթոդական ցուցումներ, Եր., 1979, 59 էջ:
35. Սովետահայ գրականության մատենագիտություն, 1920-1975 /Կազմող՝ Ռ. Ա. Կարապետյան/ Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 1167 էջ:
36. Սուքիասյան Գ. Ա. Գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) ոլորտի մասնագետների վերապատրաստման դասընթացի ծրագրեր. գրադարանագիտության, մատենագիտության, գրքագիտության, Եր., Հեղ. հրատ., 2010, 56 էջ:
37. Սուքիասյան Գ. Ա. Գրադարանային-տեղեկատվական և մատենագիատական բարձրագույն կրթությունը Հայաստանում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., Հեղինակային հրատ., 2011, 124 էջ:
38. Սուքիասյան Գ. Ա. Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Եր., Էդիտ պրինտ, 2013, 160 էջ:

39. Սուքիասյան Գ. Ա., Բաղդասարյան Ս. Ս. Փաստաթղթագիտություն և փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրներ, Դասագիրք, Եր., Հեղ. հրատ., 2009, 178էջ:
40. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, - Հ.Ա. /Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունցյան, Փ. Անթաբյան/, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, 1635 էջ:
41. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ.Բ. /Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա.Զեյթունցյան, Փ. Անթաբյան/, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 1548 էջ:
42. Ուսումնական ծրագրեր և հանձնարարելի մատենագիտություն (05.27-գրադարանագիտություն և մատենագիտություն, 05-28-թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն), Ձեռնարկ /կազմեց՝ Գ. Ա. Սուքիասյան, Եր., Արեգ., 2005, 92 էջ:
43. Абрамов К. И. История библиотечного дела в СССР.-3-е изд., перераб. и доп.-М., 1980.-357 с.
44. Алтухова Г.А. Речевая культура библиотекаря, М., ИПО Профиздат, 2001, 96 с.
45. Афанасьев В. Г. Общество: системность, познание и управление.-М., Политиздат, 1981.-432 с.
46. Афанасьев В. Г. Социальная информация и управление обществом.-М., Политиздат, 1975, 408 с.
47. Беловалова И. И. Развитие международного сотрудничества в области библиотечно-библиографического образоваания // На примере ИФЛА/, Автореф. дисс. ...канд. пед. Наук, М., МГИК, 1989, 16 с.
48. Беловицкая А.А., Общее книговедение, М., 1987,256с.
49. Берг А. И., Черняк Ю. И. Информация и управление, М., Экономика, 1966, 64 с.

50. Библиографическая работа в библиотеке: организация и методика /Под ред. О.П. Коршунова, Учебник, М., КП, 1990, 255 с.
51. Библиография, Общий курс. / Под. редакций доктор пед. наук, профессора О.П. Коршунова/ Учебник для студентов библ. фак-ов инст. культуры, пед. вузов и универс-ов, М., Книга, 1981, 511 с.
52. Библиография Художественной литературы и литературоведения /Под. ред. С.А. Трубникова/, М., Книга, 1985, 335 с.
53. Библиотековедение.Общий курс. Уч. для библ. факт. / Под ред. К. И.Абрамова и Н. С.Карташова, М., Кн. палата, 1988, 224 с.
54. Библиотечная профессия. Современное состояние и перспективы: Программа и техническое задание комплексной научно-исследовательской работы, Л., 1987, 200 с.
55. Ванеев А. Н. Развитие библиотековедческой мысли в СССР, М., Книга, 1980, 232 с.
56. Васильев К. И. Проблемы и перспективы современного высшего образования, Воронеж, 1977, 128 с.
57. Введение в специальность <<Библиотековедение и библиография>>. Учеб. пособие для студентов библ. фак. ин-тов культуры и пед. Вузов /Под ред. К. А. Абрамов, М., Книга, 1983,156 с.
58. Виноградов Б.А. Общественные науки и информация. М., Наука, 1978, 263 с.
59. Выгодский Л.С. Избранные психологические исследования, М., 1962, 519 с.
60. Гиляревский Р.С. Информатика и библиотековедение: Общие тенденции в развитии и преподавании, М., Наука, 1974, 202 с.
61. Дворкина М. Я. Библиотечно-информационная деятельнонсь, теоретические основы и особеносстн развития в традиционной и электронной среде, М., Изд. ФАИР, 2009, 256 с.

62. Зубов Ю. С., Библиография и художественное развитие личности, М., Книга, 1979, 144с.
63. Иванова И. А. Развитие взаимосвязи высшего и среднего библиотечного образования в целях повышения профессиональногой подготовки кадров(На примере дисцип.библиотековедческого цикла), Автореф.дисс, …канд. пед. наук, М., МГИК, 1987, 16 с.
64. Наука и общество: Третья научная революция., Париж, Юнеско, 1988, № 2.-66 с.
65. Информатика. Учеб. Пособие для студентов инст-ов культуры, педвузов и университетов/ Под. ред. К.В. Тараканова/, М., 1986, 304 с.
66. Использование библиотечно-библиографических ресурсов научной информации, Сб.тр.ГПВ. Л., 1978, 114 с.
67. Клепникова М. М. Некоторые итоги и проблемы экспериментальной подготовки специалистов библиотечного профиля без отрыва от производства //Перестройка учебно-воспитательного процесса в вузах культуры. Опыт, проблемы, перспективы: Межвуз. науч. тр.-Вып.80, М., МГИК, 1988, С. 75-80.
68. Книга и чтение в жизни небольших городов, М., Книга, 1973, 328 с.
69. Крейденко В.С., Библиотечные исследования. Научные основы, Учеб. пособие, М., Книга, 1983, 142 с.
70. Коршунов О. П. Библиографоведение.Общий курс.Учебник, М., КП, 1990, 287 с.
71. Коршунов О. П. Проблемы общей теории библиографии, М., Книга, 1975, 191 с.
72. Лауфер Ю.М., Литературная библиография: Теория и методика (в историческом освещении), Учебное пособие, М., 1990, 77 с.

73. Матлина С.Г., Проблемы организации и использования открытого доступа как средств руководства чтения // Актуальные вопросы библиотечной работы, Сборник ст. – ГБЛ, 1986, N 36, с. 131-140.
74. Матульский Р. С. Библиотека как социальный институт, Минск БГУК., 2002, 374 с.
75. Медведева Е. А. Высшее библиотечное образование в СССР (Пробл.формиров.история.совер.сост.перспекрив.). Автореф. дисс. ...канд. пед. наук., М., МГИК, 1986, 16 с.
76. Мелентьева Ю. П. Чтение, читатель, библиотека в изменяющемся мире, М., Наука, 2007, 355 С.
77. Михайлов А. И., Черный А. И., Гиляревский Р. С. Научные коммуникации и информатика, М., Книга, 1976, 435 с.
78. Народное хозяйство Арм ССР в 1963г. Статист. Сборник., Ер., 1964, С. 243.
79. Семейкина Н. Н. Роль гуманитарных дисциплин в системе подготовки библиотечных кадров // Тез.докл.Респ.науч-теорт. конф., Актуальные проблемы подготов.кадров в обл. искусства и культуры в свете перестройки высш. и сред.спец.образования, МГИК, 1988, С. 77-79.
80. Сичивицина О. М. Факторы научного познания., Воронеж-Изд-во Воронежского университета, 1974, 263 с.
81. Словарь библиотечных терминов.,М., 1976,206с.
82. Специалист-библиотека-библиография. Опыт исследования профессиональных потребностей в информации, М., Книга, 1971,446 с.
83. Стандарты по издательскому делу: Справочно-документ. пособие., М., Книга, 1982, 415 с.
84. Стандарты по библиотечному делу и библографии. Изд. Официальное., М., Изд-во стандартов, 1985, 279 с.

85. Столяров Ю. Н. Библиотечный фонд. Учебник для студент. библ. фак. ин-ов культуры, ун-ов и пед. вузов., М., КП, 1991, 272 с.
86. Столяров Ю. Н. Библиотека: структурно-функциопнальный подход.-М., Книга, 1981, 255 с.
87. Столяров Ю. Н. Защита библиотечного фонда. Учеб. Пособие., М., 2006, 504с.
88. Сукиасян Г. А. Актуальные вопросы библиотечно-инфорамционного образования и сотрудничества // Библиотечное дело-2002. Библиотечное образование и практика, поиск и взаимопонимания. Тезисы докл. 7-ой межд. науч. конфенренции (Москва, 24-25 апр, 2002 г.), М., МГУКИ, 2002.,С. 41.
89. Суслова И. М. Организационное развитие систем управления современной библиотекой, учеб. пособие.-СПБ., Профессия, 2008,192 с.
90. Руководящие материалы по библиотечному делу. Справочник /Под. ред. В.С. Лесохиной/-М., Книжная палата, 1988, 288с.
91. Талалакина О. И. История библиотечного дела за рубежом., Учебник для вузов., М., Книга, 1982, 271 с.
92. Теоретико-методологичекие проблемы библиотечно-библиографи-ческой наики и практики., Межвуз.сб.науч.тр.М., МГУКИ, 1992, 179с.
93. Тедорова Е. Н. Формирование системы непрерывного образования в Народной республике Болгарии (1944-1989).,М., 1990,16 с.
94. Терешин В.И., Информационные фонды СССР. Учеб. пособие. М., 1981., 52 с.
95. Фокеев В. А. Природа библиографического знания., Монография.,М., 1995,351 с.
96. Хавкина Л. Б. Руководство небольших библиотек.-2-е изд., перераб. и допол., М., 1917, 299 с.

97. Чачко А.С. Библиотечная профессиология в системе дисциплин документально-комуникативного цикла //Актуальные проблемы оптимизации обслуживания читателей. Тез. Док. науч. конф. науч. биб-ки Тарту. гос. ун-та.-Тарту, 1986., С. 36-39.
98. Чубарьян О. С. Человек и книга. Социальные проблемы чтения., М., Книга, 1978, 111 с.
99. Чубарьян О. С. Общее библиотековедение., 3-е изд.- М., 1976.,271 с.
100. Шапиро А.Л. Библиография истории СССР. Учеб. пос. для гос. универс-ов, пед. инст-ов и унст-ов культуры., М., ВШ, 1968, 287 с.
101. Шира Дж. Х. Введение в библиотековедение., Основные, элементы библ. обслуж/ Пер. с англ. В. В. Скворцов., М., Высшая школа, 1983, 256 с.
102. Шира Дж. Х.Социологические основы библиотечного дела, М., 1973, 52с.

Պարբերական մամուլ

103. Աղախանյան Գ., Գրադարանային գործի վերակառուցման հիմնական ուղիները // Կուլտուր- լուսավորական աշխատանք, 1988, N 1, էջ 1-4:
104. Աղախանյան Գ.Գրադարանային գործի զարգացման հիմնական ուղղությունները հանրապետությունում 1986-1990 թթ. և մինչև 2005թ. ընկած ժամանակաշրջանում // Կուլտուր- լուսավորական աշխատանք: 1985, թիվ 5, էջ 10-12:
105. Եգանյան Ժ. Միջգրադարանային աբոնեմենտի վիճակը հանրապե-տությունում և զարգացման հեռանկարները // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1985, թիվ 7, էջ 4-6:
106. Իշխանյան Ռ., Գրադարանային հոգսեր ու սփոփանքներ //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1977, թիվ 5, էջ 30-34:
107. Հարությունյան Ա., Երևանի Մատենագիտական դեմքը // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1981, N 3, էջ 16-18:

108. Հարությունյան Սաղաթել, Ամրապնդել գրադարանի և գրահրատարակչության կապը// Կուլտուր- լուսավորական աշխատանք, 1982, N 4, էջ 13-14:
109. Միտրոֆանովա Ս., Կենտրոնացումը ոպես գրադարանային գործի զարգացման նոր փուլ // Կուլտուր- լուսավորական աշխատանք, 1976, N 5, էջ 26-32:
110. Չիլինգարյան Ռ., Դասակարգման նոր ձեռնարկի առթիվ // Բանբեր Երևանի համալսարանի, 1971, թիվ 2 (14), էջ 262-265:
111. Չիլինգարյան Ռ.Ընթերցողների շերտավորված սպասարկումը բուհական գրադարաններում // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1982, թիվ 8, էջ 14-17:
112. Սերով Վ.Վ., ՍՍՀՄ-ում Գրադարանային շինարարության նոր փուլ // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1976, թիվ 6, էջ 7-14:
113. Սուքիասյան Գ.Ա., Տեղեկատվություն // Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Գիտական տեղեկագիր»: Հումանիտար գիտություններ, Եր., Մանկավարժ, 2006, № 1, (4), էջ 107:
114. Սուքիասյան Գ. Ա., Ավելի մեծ ուշադրություն կենսամատենագիտությանը //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1983, թիվ 4, էջ 18-21:
115. Օհանյան Ա., Միջգրադարանային աբոնեմենտի համակարգի կատարելագործման մտահոգությամբ //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1981, թիվ 8, էջ 9-13:
116. Օհանյան Ա., Գրադարանային սոցմրցության կազմակերպում. տեսություն և պրակտիկա //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1982, թիվ 5, էջ 3-11:
117. Օսիպյան Ե., Գրադարանային խորհուրդների դերը գրադարանային գործունեության կոորդինացման խնդրում //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1981, թիվ 1, էջ 13-17:

118. Абрамов К. И. Актуальные проблемы подготовки специалистов высшей квалификации и научно-педагогических кадров Сов. Боблиотековедение, 1980, № 6, С. 63-77.
119. Абрамов К. И. Переходит от обсуждения к практическим решениям //Сов.боблиотековедение, 1990, № 2, С. 49-53.
120. Азарова В. А. Будущим библиотекарям о професиональной этике //Сов.боблиотековедение, 1989, № 4, С.50-52.
121. Андреева Н. М., Сляднева Н.А., Трапезникова Л.В. Что положить в основу подготовки специалиста высшей квалификации //Сов. Боблиотековедение, 1988, № 3, С. 26-31.
122. Атанасов Л. Д., Тодарова Е.Н. Чем может быть полезен опыт болгарских коллег //Сов. Библиотековедение, 1990, № 1, С. 64-67.
123. Беспалова Э. К. Уточнение позиции информатики// Науч. тех. б-ки СССР,1998, № 2, С. 27.
124. Вавилов С.И. Несколько замечний о книгах // Сов.книга, 1947, № 1, С.15.
125. Васильченко Н. П. Уточнение принципиальных позиций //Сов.боблиотековедение, 1988, № 3, С. 32-35.
126. Глебова С.П., Жданова Т.А. Вузы и библиотеки: Совместный поиск путей подготовки библиотекарей//Наукч. техн.б.-ки СССР, 1989, № 4, С.14.
127. Голубев Л.К. Миграция библиотечных кадров как обьект социологического исследования//Отраслевая библиотечно-библиографическая подготовка стутентов: Проблемы совершенствования /ЛГИК, Л., 1986, С. 71-82.
128. Джарилгасова С. К., Ратманова С. Б. Уточнить квалификации выпускников библиотечного факультета // Сов.библиотековедение, 1990, № 3, С. 40-43.
129. Зазерский Е. Я., Соколов А.В. Библиотечная професия сегодня и завтра//Сов.библиотековедение, 1988, № 2, С. 18-30.

130. Зубов Ю. С. На пути создания научной классификации читателей//Сов.библиотековедение,1990, № 3, С. 40-43.
131. Зупарова М. А. Отражение многоязычной советской литературы в систематическом каталоге //Сов.библиотековедение, 1988, № 1, С. 55-60.
132. Иванова Г.А., Терешин В.И. Дифференциация высшего библиотечного образования по трем типам библиотек //Науч.техн.б.-ки СССР, 1989, № 1,С. 28-32.
133. Исачкова Л.М. Об информационной подготовке библиотекарей-библиографов высшей квалификации // Сов. Библиотековедение, 1991, № 1, С. 36-40.
134. Казаков Л.И. Литературоведческие дисциплины в професиональном становлении библиотекарей//Сов.Библиотековедение,1990, №3, С.38-40.
135. Карташов Н.С. Классификация специалистов-читателей научных библиотек // Науч. и технич. б-ки СССР. 1972, № 9,С. 3-9.
136. Карташов Н.С.Типология библиотек: постановка проблемы и подход к ее решению // Сов.библиотековедение 1985, № 4, С.17-31.
137. Коршунов О.П. Как учить студента//Сов.библиография, 1988, № 4, С. 74-81.
138. Ланг Х.В. Обучение в системе научных библиотек центров документации и информации в Австрии //Библиотековедение и библиография за рубежом, М., 1981.,Т.83, С. 24-30.
139. Левин Г. Л. Национальная библиотека: Структура. История. перспективы // Мир библиографии, 1988, № 1, С. 16-18.
140. Мейжись И. А. Социальная психология библиотечного дела // Библиотековедение, 1993, № 3, С. 49-57.
141. Мейжись И. А. Профессия библиотекарь-библиографов //Науч. И техн.биб-ки СССР, 1988, № 9, С. 34-37.

142. Моргернштерн И. Г. О профессии и личности библиографа // Советская библиография, 1983, № 6, С. 13-22.
143. Наботникова Е. А. Из истории библиотечного образования Великобритании//Библиотековедение и библиография за рубежом, М., 1984, Т. 96, С. 68-81.
144. Парсонс Т., Сторер Н. Научная дисциплина и дифференцация науки // Научная деятельнпсть. Структура и институты., М., Наука, 1980, С. 27-28.
145. Поздняков В. Г., Суслова И.М. и др. Учебно-научно-библиотечные комплексы: Опыт, проблены, перспективы // Сов. Библиотековедение, 1990, № 1, С. 59-63.
146. Резников Б. А. Системный подход и актуальные проблемы образования //Системные исследования. Ежегодник, М., 1978, С.185-201.
147. Сальван Поль. Высшая национальная школа библиотековедение в Париже./Бюлетень Юнеско для библиотек, 1965, Т.19, № 4, С. 211-215.
148. Серов В. В. Роль библиотечной профессии и формы ее организации в СССР //Професиональная организация библиотекарей: Сб.науч.тр. /ВГБИЛ, М., 1972, С. 49-73.
149. Слободяник М. С. Ориентироваться на практику // Сов. Библиотековедение, 1989, № 4., С. 59-63.
150. Смирнова С. М. Дифференциация читателей и воспитание всесторонне развитой личности // Сов.библиотековедение, 1973, № 1,С. 32-40.
151. Степанова Н. П. Направления перестройки системы подготовки специалистов высшей квалификации // Сов. Библиотековедение, 1989, № 6, С. 45-48.
152. Столяров Ю. Н. Библиотека-двухконтурная система // Науч.и технические биб.-ки, 2002, № 6, С. 5-24.

153. Спектор У. М., О библиографировании миниатюрных книг в СССР // Сов. библиография. 1986, N 2, С. 51-52.
154. Сукиасян Г.А., Библиотеки Армении в экстремальных ситуациях // Библиотечная ассамблея Евразии, М., РГБ, 1994, Вып. 3, С. 50-51.
155. Терешин В. И. Обшенаучная подготовка библиотекарей в вузе: Дифференцация и профилирование // Сов. Библиотековедение, 1988, № 6, С. 41-48.
156. Тугов Ю. М., Куликова А. П. Психолого-педагогические основы классификации читателей // Сов. Библиотековедение, 1980, № 4, С. 51-65.
157. Трубников С. А. Культура чтения как критерий общей типологии читателей // Сов. Библиотековедение, 1980, № 1, С.28-38.
158. Тюлина Н. И. Новая техника и проблемы общедоступности библиотечного обслуживания // Сов. Библиотековедение, 1990, № 1, С. 3-8.
159. Чачко А.С. Библиотечная профессиология: Некоторые итоги и задачи развития//Науч.и техн.б-киСССР, 1984, № 10, С. 17-21.
160. Ченцова Е.Н., Широкова И.В. Сотрудничество вуза и библиотек // Сов. Библиотековедение,1990, № 3, С.36-38.
161. Черняк А. Я. Обшенаучные дисциплины в системе высшего библиотечного образовзния // Сов. Библиотековедение, 1991, № 1, С. 30-35.
162. Черняк А. Я. Подготовке библиотечно-библиографических кадров-научное образование // Науч. и техн. б-ки СССР, 1982, № 2,С. 3-14.
163. Чубарьян О. С. Рекомендательная библиография и руководство чтением // Сов. Библиография, 1966, № 2, С. 26-27.
164. Чубарьян О. С. Чтение в современном мире //Сов. библиотековедение. 1973, № 1, С. 28.

165. Шапиро А. Л. Проблемы в подготовке библиографов-отраслевиков: какие знания им нужны//Науч. и тех. б-ки СССР, 1988, С. 12-14.
166. Щерба Н.Н., Краеведческая библиография: Состаяние, пути интенсификации // Сов. Библиография, 1987, N 2, С. 6-16.
167. Фенеленов Е.А., Планирование в системе управления библиотечным делом // Сов. Библиотековедение, 1984, N 5, С. 19-29.